

ԳԵՂԱՍ ԵՐԶԱՆ

ԲԱՍՏԵՂՈՒԹՅՈՒՆԵՐ

ՀԱՅՏԵՏՈՒՍ

891.29

Ղ-27







891.99

ար

-6 NOV 2011



ԳԵՂԱՄ ՄԱՐՅԱՆ

ԲՆԱՍՏԵՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՀԱՅԴԵՏՏՐԱՆ
ԵՐԵՎԱՆ • 1940

29 JUL 2013

53849



2492
41

Г. САРЬЯН

Стихотворения

и поэмы

Аригиз, Ереван, 1940 г.

Գ Ր Ի Չ

Ինձ հետ եղիր հաշտ ու խաղաղ,
Օ, սիրելի իմ գրիչ,
Իմ հոգու հետ դու մի խաղա,
Մի լինիր խորթ և ուրիշ:

Հանձնել եմ քեզ կյանքիս ուղին,
Գրիր երգեր սրտառուչ,
Գրիր անկեղծ, մաքուր, ուղիղ,
Հյուսիսը նրանց փունջ առ փունջ:

Սյնդես գրիր, որ խոսքը քո
Մարդու հոգին իմանա,
Որ չլինի մութ երեկո,
Երկար ապրի ու մնա:

Օ, շատ-շատ է դժվար գրել
Սյնդեսի երգ, որ հուղի,
Գրել միայն, բայց չհուղել,
Սյնդեսի երգ մի ուղի:



ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ





արերիդ ե՞րդը երգեմ,
Թե՞ դարունը վառ.
Վառվող լույսե՞րդ պայծառ
Գովեմ ու երգեմ.
Թե՞ խանդավառ իմ հոգու
Հույզերը վարար,
Որոնք նոր թափ են առել
Իմ երկրի համար:

Երկի՛ր, քեզ եմ երգում ես,
Արշալույսը քո,
Պայծառ դեմքդ լուսերես,
Ես այս երեկո.
Քո դեմ բացվել է դարուն,
Ժպտում են վարդեր,
Քո դեմ ջրեր վարարուն
Ու հասուն արտեր:

Ուղում եմ ո՞ր դու լինեա
Մենկուն, համառ,
Ու ես ցմահ երգեմ քեզ,
Յրերըդ սլայծառ.
Ու վարդերիդ երանգով
Երգերս ներկեմ,
Սրտիս թափով ու հանգով
Երգեմ ու երգեմ:

1930

ԺԱՄԱՅՈՒՅՑԸ

Ժամացույցը բարախում է,
Հա բախում է մի մեքենա,
Որ ընդհանուր վաղճից երբեք
Մեր երկիրը ետ չմնա:

Սմեն՝ զարկը քայլ է մի մեծ
Իմ երկրքի զալիքի վառ,
Մանկան սլայծառ ծիծաղի պես
Լուսապայծառ, լուսապայծառ...

Ու ձորերից խուլ ու հեռու,
Ոոցված կրճից հսկա լեռան,
Հոսում են դեռ հազար առու,
Ու քրջում միաբերան:

Ժամացույցը բարախում է,
Հա բախում է մի մեքենա,
Որ ընդհանուր վաղճից երբեք
Մեր երկիրը ետ չմնա:

Ու բյուր ալիք, առու վարար,
Մերթ կարկաչուն, մերթ փրփրած
Մեր դաշտերում բռնել են սլար,
Հա կանչում են, քաշում իրար:

Դեպի դեմի ձորը մտնի,
Հա վազում են թափով արագ,
Իրար դրկած անթիվ այիք,
Որ հյուղերում վառեն «ճրագ»:

Եվ ջրերի այդ հարկաչին
Երզն է հյուսվում անխնային,
Որ թառել են ձորի լանջին,
Բռունցքի տակ բանվորների:

Ու որպես մի երկաթե սիրտ
Բաբախում է մի մեքենա,
Որ հաղթական այս օրերում
Մեր երկիրը ետ չըմնա...

Լարերը բյուր՝ արյան երակ,
Կլանում են անկուշտ, աղա՜հ
Եվ տանում են դյուղ ու քաղաք
Ալիքների ուժը հսկա:

Սպասում է այնտեղ մթնում
Կույր աչքի պես դյուղը խափար,
Արեն արդեն մայր է մտնում,
Լա՛ր, շուտ լույս տար դյուղի համար:

Եվ քաղաքում հսկայաչուն
Գործարաններն են հռնդում,
Այդ ուժի տակ հաղար անխի
Ծիծաղում են, խնդում, թնդում:

Այդ ուժի տակ բաբախում են,
Հա բախում են բյուր մեքենա,
Որ ընդհանուր վաղճից երբեք
Մեր երկիրը ետ չըմնա:

1927

ԵՐԿԱՅԱՆՈՒՆ ԵՐԳԸ

Ելա փողոց մի իրիկուն,
Եվ քամի էր, և ձյուն, և թե՛ն,
Երբ արևը չկար արդեն,
Ելա փողոց մի իրիկուն:

Տեսա մարդիկ, որոնք անցան,
Եվ լույսերը մեր քաղաքի,
Լսեցի մեղմ նվաղի ձայն
Քաղցրակաթկաչ թափ ջուրի:

Մի ամիչով դառնում էր հար,
Եվ հնչում էր մի եղանակ,
— Դո՛ւ ես երգում, երկաթալար,
Այս ցուրտ քամու մատների տակ:

— Ես եմ երգում, լսո՛ւմ ես ինձ,
Հուզո՞ւմ է քեզ երգըս արդյո՞ք:
— Երկաթալա՛ր, երգիր նորից,
Այդպես քաղցր ու որտիս մոտ:

... Ու մինչև լույս լսեցի ես
Երկաթաձայն երգը նրա,
Հափշտակված մի մանկան պես,
Գլուխս հենած սյունի վրա:

Նվազում էր մի թափ ջութակ,
Մի դյուլթական երգ էր ասում,
Պատմում էր, որ այդ երգի տակ
Ինքը հազար սիրտ է հուզում:

— Այդ երգի տակ— ասում էր նա,
Մի խենթ թափով ու անդադար
Անխնեք են դառնում հիմա,
Որպես հլու կամակատար:

Մի ամիշով դառնում էր հար,
Եվ հնչում էր մի եղանակ,
— Դո՛ւ ես երգում, երկաթալար,
Այս ցուրտ քամու մատների տակ:

— Տես, խփում է այնտեղ մի սիրտ,
Ուժի հսկա մի մեքենա.
Ես այդ ուժի մասն եմ վախտ,
Որ ձգվել եմ սյունի վրա:

Ես դնում եմ հեռո՛ւ, հեռո՛ւ,
Եվ դործարա՛ն, և հա՛նք, և տո՛ւն
Որպես ուժի մեծ մի առու՝
Կյանք եմ տալիս նրանց հողուն:

Բայց իշխում է ինձ վրա նա,
Որի դիմաց չնչին եմ ես,
Գրտինք թափող մարդը ահա,
Որ հզոր է արևի պես:

Նա է հյուսել աշխարհն այս մեծ,
Գլորել է դարեր, դարեր,
Հիմա կանգնած, հաղթողի պես
Հազար հույսի ջահ է վառել...

Այդպես երգեց նա մինչև լույս
Երկաթածայն երգը իրա,
Որ թափանցեց խորքը հողում,
Արևն ինչպես ծովի վրա:

Եվ բարձրացավ իմ դեմ նորեն
Երկերն իմ վառ, լուսապսակ,
Եվ արևը պայծառորեն,
Որ պահվել էր լեռների տակ:

Դարձավ նորից կյանքը ետուն,
Եվ վաղը՝ դեպի մի ապագա,
Մի լուսեղեն պայծառ դարուն,
Որ պիտի դա, որ պիտի դա:

Ու լսվում է դեռ անդադար,
Նվազում է մի թափ ջութակ,
— Դո՛ւ ես, դո՛ւ ես, երկաթալար,
Որ երգում ես իմ կրծքի տակ:

1930

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ՝ ԳՐՎԱՅ ԺԱՅՈՒ ՎՐԱ

Այնտեղ դետն է խշռում տհա,
Այստեղ ձոր է, վայրի, քարոտ,
Եվ մտախոհ, և գլխահակ
Կանգնել եմ ես մի ժայռի մոտ:

— «Իջիր, քլո'ւնդ, բարձրացիր, բա՛հ,
Բրտինքը թող թափի, հոսի,
Մենք այս ձորում ուրախ, անահ՝
Կյանք ենք ավել Ձորագետին»:

Որոտում է երգը այսպես,
Այս խուլ ձորում վայրի ու խենթ,
Եվ կարոտով, սիրով ասես՝
Սիրտս է խոտում մի ժայռի հետ:

Կանգնել է նա դեմ հանդիման
Ու հայացքը դեմքիս հառել,
Թվում է թե անցան հիմա՝
Գլուխների դարեր, դարեր...

Թվում է թե կանգնել եմ ես
Դեմը մի հին հուշարձանի,
Ու դիտնական մեծ Մարբի պես
Սիրտն եմ կարգում այդ ժեռ քարի:

Հիշում եմ ես պատմությունը՝
Պատմությունը այն հին դարի,
Եվ հրեշ մի թագավորի
Գիրը՝ դրված մի ժեռ քարի:

— Ես, — դրել էր քարի վրա, —
Թագավորըս այս ինչ երկրի,
Տիրելով այս գահին՝ ահա
Այսքան մարդու վերցրի դերի:

Գլխատեցի այսքան մարդու,
Տիկ հանեցի նրանց կաշուց,
Եվ երկիրն այս ավերելով՝
Վերածեցի մոխրի, փոշու...

... Ու անցել է ժամանակը,
Եվ սահել են դարեր, դարեր,
Որ բորենու լեզվի նման
Լիզել են բյուր արնոտ քարեր:

Հիմա կարծես կանգնել եմ ես
Դեմը մի հին հուշարձանի,
Ու դիտնական մեծ Մարբի պես
Սիրտն եմ կարգում այս ժեռ քարի:

Գրում է նոր մի պատմություն
Մի դասակարգ հերոսական,
Որ աննկուն, համառ, տոկուն,
Կերտում է նոր մի ապագա:

Գրում է նա, որ մենք եկանք,
Այս «չարքաչատ» խուլ ձորի մեջ
Ստեղծեցինք լուսե մի կյանք,
Եվ արենհր անմար, անշեջ:

2492/14



Շենացրբինք այս խարխուլած
Երկիրը ծեր, հնադարյան,
Ու հաղթեցինք մեր դեմ ելած
Ամեն արդեւք՝ դնով արյան:

Խորտակեցինք ժայռեր հզոր,
Փոխեցինք շատ գետերի հուն,
Որ վառվեն բյուր լույսեր բոսոր,
Թափ ու կյանք տան երկրի հողուն:

Կանգնեցրինք շենքեր հսկա,
Գործարաններ— երկաթակուռ,
Վաղվա մարդը թող լավ զգա՝
Կովով ծնվեց այն, ինչ որ կա:

Վաղվա մարդը թող իմանա—
Այս մեծ կովում հերոսական
Շատ ընկերներ դրկեցին մահ՝
Արիաբար ու հաղթական...

... Ու կանգնել եմ խոհուն, հանդարտ:
Կարդում եմ լուռ մի պատմութուն,
Որ դրում է մի դատակարգ՝
Փայռի վրա և իմ հողում...

1930

Ա Մ Ո Ւ Ս

1

Հողմերի դեմ չեն երերա
Լույսերը քո պայծառ ու վառ,
Ես չի դառնա երեկը քո
Օ՛, երկիր իմ լուսապայծառ:

Քո հեքի հետ ապրում ենք մենք,
Ու շնչում ենք քեզ հետ մեկտեղ,
Մեզ հետ մեկտեղ ճամբա անցած,
Օ՛, երկիր իմ լուսապայծառ:

Լույսերն՝ հաղար, հույսերը՝ բյուր,
Քո ճակատին պսակ են վառ,
Ջրանցքների կանչը համբույր,
Օ՛, երկիր իմ լուսապայծառ:

Վաղվա դավիք օրվադ համար
Մենք մեր կյանքը չենք խնայի,
Երկիր իմ վառ, լուսավարար,
Լուսապայծառ, լուսապայծառ...

2

Ճերմակում են մաղերըս,
Դու մեծանում ես այնքան,

Տարիները իմ դեմքին
Ակոսներ են քանդակում.
Նոր սերունդներ են դալիս
Քո ճամբաները դոխում,
Օ, երկիր իմ հաղթական,
Դու մեծանում ես այնքան:

Վառվում է լույսը, մարում,
Օրերն անցնում են արագ,
Հին աշխարհի խավարում
Լուսե երկիր իմ հրակ,
Մահանում է ամեն օր,
Ամեն վայրկյան, ինչ որ կա,
Դու հյուսում ես կյանք մի նոր,
Դու մեծանում ես այնքան:

Խորհրդային իմ երկիր,
Խորհրդային իմ երկիր,
Վաղը, երբ ես չեմ լինի,
Երբ հաղարները կդան,
Քո ճակատին հաղթական
Լուսե պսակ կլինի,
Միշտ խանդավառ ու ժպտուն,
Դեմքդ պայծառ կլինի:

1928

W + 404022 ✓

Նրանց, որ ընկան Մայիսին
Նոյեմբերի համար:

Մի կարմիր կակաչ, մի սիրուն կակաչ,
Ժպտաց ինձ դաշտում վառ մի առավոտ,
Կարծես իմ սրտին ծանոթ ու ճանաչ՝
Խոսեց հողուս հետ մի կարմիր կակաչ:

— Իմ արյունակից, կանդ առ իմ դիմաց,
Թերթերս ալ են, վառ են մետաքսից,
Այս բաց դաշտի մեջ իմ շունչը պահած՝
Սպասում էի ես քո դալատին:

Քո ընկերոջից ընդունիր բարե,
Ալ թերթերիս մեջ հայացքն է նրա,
Նրա մահով եմ սնվել, կյանք առել,
Այս կանաչ, կանաչ թարմ դաշտի վրա:

Նա մի հերոս էր. ընկավ մեծ կռվում,
Այս հողի վրա, ուր բուսել եմ ես,
Այդ մեծ պայքարում նա կյանքն էր կռում
Հաղարների հետ և ըմբոստ և վես:

Թաղեցին նրան այս հողում ահա,
Եվ հողը դարձավ պարարտ ու բերրի,
Գուցե մեռնողի հենց սրտի վրա
Կյանք առա ու քեզ ջերմ բարե բերի:

— Ի՞մ կարմիր կակաչ, ի՞մ սիրուն կակաչ,
Ասա դու նրան, որ կյանքը դեռ կա,
Որ խորհրդային մեր երկրի վրա
Կրկին թավիչյա դարուն է ահա:

Մեր ամենորյա ահեղ պայքարում,
Մեր կառուցման մեջ, մեր սրտերում վառ,
Ասա, որ իր պես հաղար ընկերի
Անունը պայծառ պահում ենք անմար:

1930

ՀԱՅԻ ԵՐԳԸ

Երբ էր ամառ արևառ,
Արան էր ոսկի ու խնդուն,
Երբ կանաչ էր հանդ ու քար,
Եղա մի օր ես հանդում:

Արտում ոսկի, օրորուն,
Մի գյուղացի խինդով վառ,
Մի գույզ հասկ էր տրորում
Իր բռան մեջ արևհար:

Ժպտաներով ողողված
Զույգ ափի մեջ բերքն իրա,
Եվ շուրթերը իրա թաց
Հպեց հուղմունքով նրան:

Ու քրտինքի մի կաթիլ
Ճակատից իր ընկավ վառ,
Ընկավ ոսկի հատիկին,
Արևահամ, արևառ:

Եվ գցեց նա իր բռան
Հատիկները դեպի չեղջ,
Իր խնդությունը դրած,
Իր քրտինքը նրանց մեջ:

Հիմա ո՞վ է ծածուկ աշն
Հացի պատառը ոսկի,
Որ հազեցած խնդությամբ
Եվ եռանդովը բազկի,

Եվ ժպիտով իր պայծառ
Ու հույզերով ողորուն,
Որ դյուզացին արևառ
Ափի մեջ էր տրորում:

Մի երեխա՞ արևաչ
Ատամներով իր կաթի,
Որ կյանքն ունի իր սուտը՝
Նման չքեղ հեքյաթի:

Մի ծերունի՞ զառամած,
Որ քայլում է դեպի մահ,
Որ իջնում է ձորը՝ ցած,
Կամ մահաճում է հիմա:

Կամ մի բանվոր՞ եռանդուն,
Կյանքի կերտողը համառ,
Որ քրտնաթոր ու անդուլ,
Ոսկի օրերի համար

Ուժ և եռանդ է տալիս
Երկաթներին ու քարին,
Եվ իր կյանքը՝ պանծալի
Մեր ընդհանուր պայքարին:

Գուցե ես եմ կերել աշն
Ոսկի բուռը այդ բերքի,
Ու նրա վառ խնդությամբ
Ծնունդ տվի այս երգին:

Կամ գուցե դու, գուցե նա,
Ով որ է թող իմանա,
Ժպիտներով խնդության,
Քրտնքով էր ցողված նա:

1932

ԼՈՒՅՍԵՐԸ

Քո աչքերը պայծառ, քո աչքերը լուսե,
Երկիր, լամպերը քո լուսե լիմոն.
Մեր հույզերի զվարթ կանչերով ենք հույսել,
Որ արևոտ լինի քո երեկոն:

Երկիր, լարերով այն, ուժի, լույսի առաւ,
Մեր արյունն է հոսում, քրտինքը հորդ,
Որ թափել ենք հեռու ձորերում ու սարում՝
Վարարուն գետերի ափերի մոտ:

Յեւ այն լամպերից վառ՝ լիմոններից հյութեղ,
Որ արևի հետ են ահա մրցում,
Մեր հույզերն են քամվում, որպես լույսի հեղեղ՝
Հաղաք չենքերի մեջ և փողոցում:

Այն սյուների վրա մեր սրտերն են փայլում,
Որպես լույսով լեցուն քնքաւ սրվակ,
Մեր ժըլիտն է վառվում լույսերի հայելում,
Խնդության կարկաչը՝ մեր կրծքի տակ:

Օ, այդ մենք ենք, երկիր, հայացքը մեր հառել,
Սոցիալիզմի դժվար ճամբին հիմի,
Մեր հույզերով միլիոն լիմոններ ենք վառել,
Վոր դալիս՝ ճամբեքը մութ չլինի:

Ամեն անգամ միմուտ է երբ,
Լինում է լուրթ իրիկուն,
Կապտում են երբ քարափ ու ծերպ,
Ու կորչում են երկրքում,
Երբ իջնում է քո մտերիմ
Հովը զվարթ մի երգով՝
Ծիծաղում ես դու, երկիր իմ,
Աղամանդյա պսակով:

Եվ այդ զվարթ ծիծաղը քո
Կանչն է մեր հորդ գետերի,
Որոնք մեր կուռ, ամուր կամքով
Դարձրին դաշտերը բերրի,
Որոնց հեքով խինդ է ծորում,
Երգ է ծորում ափերին,
Որ այդ երգով ամեն ձորում
Լույս իջնի քո աչքերին:

Լույսերից այդ պսակ լինի
Քո ճակատին մշտավառ,
Ինչպես լազուր ճակտին երկնի
Արևները անհամար.
Ու քո խավար ձորերի մեջ
Բույլեր թափվեն աստղերի,
Այդ աստղերի լույսը անչեջ
Չբեկեկվի, չմարի:

Եվ ապրես նոր, ուրախ կյանքով,
Դու, իմ յերկիր հաջողատ,
Մեր բոլորի անդուլ կամքով
Արեւի տակ հար ազատ,
Եվ սերունդներ ծնվեն զվարթ
Լույսերի տակ նոր կյանքի,
Լինես խնդուն, լինես հսկարաւ,
Լինես առանց զրկանքի:

Եվ հիմա լուռ մթնում է երբ,
Լինում է լուրթ իրիկուն,
Կապտում են երբ քարալի ու ծերս
Ու կորչում են երկնքում,
Երբ իջնում է քո մտերիմ
Հովը զվարթ մի երգով՝
Ծիծաղում ես դու, երկի՛ր իմ,
Աղամանդյա սասկով:

1937

ՔԱՆԱԿ՝ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Հազար շեփոր հնչեն թող
Այս առավոտ,
Հազար թմբուկ խփեն թող
Այս առավոտ.
Լույսի հեղեղ, լույսի տոն է,
Խնդուխուն.
Հազար շեփոր հնչեն թող
Այս առավոտ:

Ո՞վ է ծնել
Շողչողուն այս պատանին,
Լուսադես ու հրաչյա,
Շողչողուն այս պատանին:
Պարտյաչ վարսերը փռել,
Լույս է տվել խաւարին,
Հույս է տվել սրտերին
Շողչողուն այս պատանին:

Տեսեք թովչանքը նրա՝
Հենց նոր ծաղկած նշի ծառ.
Տեսեք հայացքը նրա՝
Արեգակի պես պայծառ,
Տեսեք վարսերը նրա՝
Ծառազայթի շեկ խուրձեր,
Լուսե աչքերի վրա
Լուրթ երկինքն է կոացել:

Հաղար շեփոր հնչեն թող
Այս առավոտ,
Հաղար թմբուկ խփեն թող
Այս առավոտ:
Լույսի հեղեղ, լույսի տուն է,
Խնդություն,
Հաղար շեփոր հնչեն թող
Այս առավոտ:

Կյանք ենք տվել մենք նրան
Արյունով ու քրտինքով,
Եվ բաց դաշտերի վրա,
Եվ երկաթի սալի քով:
Համառ կռիվ ենք մղել
Տարերքի դեմ ահավոր,
Եվ միշտ հաղթող ենք եղել
Մեծ եռանդով ու երգով:

Տուֆ քարերից շինել ենք
Շենքեր՝ մարմինը նրա
Երակների պես արյան
Մենք ջրանցքներ ենք շինել:
Հետո սիրտը հրաբորբ՝
Ելեքորական մեծ կայան,
Որ բաբախում է հիմա
Ամեն սրտում, ամեն տան:

Եվ պղնձե լարերով
Յանց ենք շինել ներվերի,
Լուսեղ լամպեր ենք կախել՝
Որպես աչքերը նրա,
Որ վառվում են տների
Ու մեծ սյուների վրա՝
Այդ բոլորը կառուցող
Մարդկանց անունի նման:

Գործարանները հսկա,
Առողջ թոքերի նման,
Դարձրել են ամեն օր
Շնչառությունը նրա,
Եվ նա դարձել է հզոր,
Եվ նա դարձել է խրոխտ,
Եվ ամել է մեղ հետ նա
Արևի տակ հրաբորբ:

Ամեն դարուն ու մայրս
Մեր ցորենի դաշտերից,
Թարմ կանաչից ու վարդից
Հազուստներ ենք հաղցրել,
Եվ փայփայել ենք նրան
Ոսկի հույսերի նման,
Եվ անունը դրել ենք
Խորհրդային Հայաստան:

Մեր զրկանքով ու կյանքով,
Արյունով ես ամել դու,
Մեր սլաքարով ու կամքով,
Հույսերով ես ամել դու:
Խորհրդային Հայաստան,
Խորհրդային Հայաստան,
Այս վառ արեւ վկա՝
Մեր հեջով ես ամել դու:

Որ լինի մեծ աշխարաց,
Կառուցում ու հաղթանակ,
Որ սերունդների դիմաց
Մենք ամոթով չմնանք:
Որ ամեն մի տաշած քար
Ժպտա նրանց, երբ որ գան,
Որ դու լինես միշտ պայծառ,
Խորհրդային Հայաստան...

Հազար շեփոր հնչեն թող
 Այս առավոտ,
 Հազար թմբուկ խփեն թող
 Այս առավոտ:
 Լույսի հեղեղ, լույսի տոն է,
 Խնդություն,
 Հազար շեփոր հնչեն թող
 Այս առավոտ...

1930

ՏԱՐԵԴԱՐՁԻ ԵՐԳ

1

Դու ծնվեցիր այն գիշեր, այն կովի գիշեր,
 Գուցե հերոս հայրիկիդ մեռնելու պահին,
 Նա քեզ թեև չտեսավ՝ մեռնելիս հիշեց,
 Երբ աղմկում էր դրսում բքաշունչ քամին:

Դու ծնվեցիր այն գիշեր, այն կովի գիշեր,
 Գնդակների շառաչուն տարափի ներքո,
 Երբ մեր երկրին շողջողուն արև էր իջել,
 Երբ բանվորները երկրի՝ տուն դարձան երգով:

Դու ծնվեցիր այն գիշեր, այն կովի գիշեր,
 Որ փայլ առավ արևի շողերի ներկով,
 Երբ մեր բանակը երկրից տերերին քշեց՝
 Գնդակների շառաչուն տարափի ներքո:

Այսօր լրանում է քո, տես քանի՜ տարին,
 Դու ծնվեցիր այն գիշեր, այն կովի գիշեր,
 Գուցե հերոս հայրիկի, մեռնելու պահին,
 Երբ մեր երկրին շողջողուն արև էր իջել:

2

Բռնորեցիր այսօր դու նորից քո տարին,
 Քեզ հետ երկիրը աճեց, քեզ հետ մեծացավ,
 Շողջողում է ահա, տես, որպես պատանի,
 Որպես լույսով դարդարուն փարթամ տոնածառ:

Բացվեցին քո ճամբեքում շուշաններ լուսե,
Էլեկտրական արեգներ ժպտացին քո դեմ,
Ինչ իմ մանուկ հասակում հեքյաթն է ասել,
Դու քո պայծառ աչքերով տեսնում ես արդեն:

Դու քո պայծառ աչքերով տեսնում ես արդեն
Աղամսնդե լույսերի կոկոնները վառ,
Այդ աստղեր չեն, որ երկնի կապույտում
Հարբել

Ու մի գիշեր հողմերի շունչով թափել վար:

Այդ մեր եռանդն է վառվում սյուների վրա,
Որ թափել ենք ջրառատ հեռու ձորերում,
Որ բաղձաթիվ արեգներ բարձրանան ահա
Նոյեմբերյան մարտերի ամեն մի տարում:

3

Նոյեմբերյան դու սերունդ, պայծառ պատանի,
Որ բարձրացել ես ահա լույսերի երդով,
Տես, բարձրանում են ահա սերունդներ քանի,
Սոցիալիզմի կառուցման աղմուկի ներքո:

Ու ծնվում է հենց հիմա մի սերունդ լուսե,
Հանդիսավոր այս ուրին, պայծառ այս գիշեր,
Երբ որ երկրում մի ոսկե հեքյաթ է հյուսվել,
Երբ որ երկրին խնդության իջել է գիշեր:

Ու դեռ կդան նորերը, սերունդներ քանի,
Տարիները կդառնան որպես կարուսել,
Իսկ մենք կժպտանք նրանց ամեն մի քարից,
Եվ սյուների վրայից՝ որպես վառ լույսեր:

Նոյեմբերյան դու սերունդ, պայծառ պատանի,
Որ բարձրացել ես ահա լույսերի երդով,
Բոլորեցիր արդեն դու նորից քո տարին,
Սոցիալիզմի կառուցման աղմուկի ներքո:

4

Կաճի երկիրը քեզ հետ, կմեծանաս դու,
Ժամանակը կարծաթի մաղերդ մի օր,
Եվ խնդությունը կյանքի քո պայծառ հոգում,
Ոսկի մի երգ կդառնա, ոսկի մի օրոր:

Օրորոցում կնիրհի մի լուսե մանուկ,
Կկախվի քո հայացքը նրա սնարին,
Կշշնջան շուրթերը մի պայծառ անուն,
Ու մեղմ մի երգ կհնչի մի նոր քնարից:

Ու մեղմ մի երգ կհնչի մի նոր քնարից,
Օրորոցում կնիրհի մանուկը լուսե,
Իսկ մենք կժպտանք նրան ամեն մի քարից,
Եվ սյուների վրայից, որպես վառ լույսեր:

Այսօր յրանում է քո, տե՛ս քանի՜ տարին,
Դու ծնվեցիր այն գիշեր, այն կովի գիշեր,
Պուլսի հերոս հայրիկիդ մեռնելու պահին,
Երբ մեր յերկրին շողչողուն արե էր իջել:

1932

ԱՆԱՎԱՐՏ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

1

Նզել է երկիր մի
Արյունոտ քարերով,
Աչքը արցունքով լի,
Սիրտը արյունի ծով,
Նզել է երկիր մի
Շնչել է դարերով
Ու չար դավերով լի,
Արյունոտ տերերով:

Իշխել են այդ երկրում
Վասալ ու թագավոր...
(Պատմությունն է գրում
Նրկաթագրերով),
Ծծել են եղեգով
Աչտարակի գինի,
Ժողովրդի հեքով,
Նրա արյան գույնի:

Արծաթյա թամբերով,
Ձիերով ասպազեն,
Քառամբակ դուխել են
Անտառներ ու ձորեր,

Վորսել են եղջերու,
Նրեներ ու վարազ,
Դատարկել են դինու:
Մառաներ ու կարաս:

Պատմությունն է խոսում
Դարերի ետեից,
Ժամանակն է հոսում
Ընթացքով արևի,
Նզել է երկիր մի
Արյունոտ քարերով,
Ու չար դավերով լի
Արյունոտ տերերով:

2

Սարել են այդ երկրում
Գետնաբնակ մարդիկ,
Ու կերել են կավե
Ամանների միջից.
Ու տվել են հողին
Նվ արյուն և քրտինք,
Կերակրել է նրանց
Հողը՝ որպես ստինք:

Պատմությունն է խոսում
Դարերի ետեից.
Նա գովում է երկրի
Ձորինները աղնիվ,
Բայց չի գրում
Ինչպես քել են այրում,
Ունել ժողովրդից
Բաժինն առյուծի:

Նվ եղել է մի օր,
Շինվել է մի քաղաք,

Ասում են թե այնտեղ,
Արքան Արչակունի
Կատարել է դողի,
Ավաղակի հավաք
Եվ կոչել է նրան
Արչակաւան քաղաք:

Եվ ո՞վ դիտե այնտեղ
Ավանում Արչակի,
Որ կոչվել է քաղաք
Գողի, ավաղակի,
Չեն աքսորվել անմեղ
Հողինները խիզախ՝
Տերերի դեմ ուղղված
Որպես հազար նիզակ:

Պատմությունն է խոսել
Դարերի ետեւից,
Ու դարերն են հոսել
Ընթացքով արեւի,
Եկել են նոր դարեր,
Նոր իշխողներ, ու նոր
Արյուն-քրտինքով լի
Մի դասակարգ հզոր:

Տերերը նոր՝ զինված
Բռնությամբ դարերի,
Խոսել են արյունոտ
Ռումբերի վոքոտով,
Ու դասակարգը մեր՝
Չայրույթով դարերի՝
Վանդել է նրանց,
Փախցրել է ոտով:

Ու մնում է հիմա
Իբրեւ հուշ հների՝

Մի Զվարթնոց մուսլ,
Խաչաքարեր մամուռ,
Եվ կճուճներ կավի,
Մի պատմություն աղտոտ,
Որ խոսում են քեզ հետ
Տարտամ ու համառոտ:

3

Այժմ կա երկիր մի,
Ուր բացվել է դարուն,
Հայացքը խինդով լի՝
Հառել է նա հեռու:
Իշխում է այդ երկրում
Եվ խրոխտ և անպարտ,
Արեւներ կառուցող
Մի համառ դասակարգ:

Չորերը՝ ուր նրանք
Դուրս են եկել որսի,
Ողողել ենք անափ
Հեղեղներով լույսի:
Նրանց մեջ մենք տակի
Արեւներ ենք վառել,
Երկիրը ցանցել են
Բյուր էլեքտրալարեր:

Դարձել է այդ երկրում
Բրտինքը հորդ, վարար
Ժայռերի որոտում,
Երկրի ծիծաղը վառ.
Փրփրերախ քրքիջով
Ջրերը սրընթաց՝
Թունեղների միջով
Թափով իջնում են ցած:

Աճում է երկիր մի,
Որ աչքերով լուսե,

Հողիններում հիմի
Բյուր երգեր է հյուսել.
Նրան արև ու սեր,
Ոսկի օրեր ու կյանք
Հավերժական փառք քեզ,
Բանվոր դատակարգ:

1932

ՔԱՐՏԱՇՆԵՐԸ

Այս մեր փողոցում, քարոտ փողոցում,
Կառուցում են շենք վարդազույն քարից,
Այնտեղ ամեն օր փայտ են սղոցում
Ու քար են տաշում մարդիկ սրտակից:

Եվ քարերի հետ մաշվում են նրանք,
Տաշվում են, որպես քարերը դեմի,
Շենքը ելնում է, բարձրանում շարք-շարք,
Ասես ժպտում է ըստ առաջ հիմի:

Եվ աղամալից սիրտս խնդում է,
Որ ամեն մի մարդ քարերի վրա
Իր կյանքի չնչին մասը թողնում է,
Որ այդ դեղեցիկ շենքը բարձրանա:

Այս մեր փողոցում, քարոտ փողոցում,
Կառուցում են շենք վարդազույն քարից,
Այնտեղ ամեն օր փայտ են սղոցում
Ու քար են տաշում մարդիկ սրտակից:

1929

ԵՐԳԸ ՎՐԱՍՏԱՆԻՑ

Դեռ հնչում է տխուր մի երգ,
Տխուր մի երգ իմ ահանջին,
Որպես դառը սրտի մի վերք,
Աչուն՝ իջած քո կանաչին:
Որպես մթնում լացող եղեգ,
Արձադանքող քո հառաչին,
Դեռ հնչում է տխուր մի երգ,
Տխուր մի երգ իմ ահանջին:

Այդ հյուսել է վշտից հարբած
Ժողովրդի երգիչ, որդին,
Մեջը գրել ոգին տրամած
Վրացական ժողովրդի.
Ու գեղջուկը աչքերը թաց
Աշխատել է երգն այդ շուրթին,
Ու հայացքը վաղվան հառած՝
Սփռվանք է տվել սրտին:

Ու եկել է լուսապայծառ,
Առավոտն այդ, նոր Վրաստան,
Դու մարտերով, կռիվով համառ
Եվ արյունով բերիք նրան.
Եվ հերոսներդ անհամար
Քանի՛-քանի՛ արծվի նման
Ճակատները արյունավառ
Քո գեղեցիկ գրկում ընկան:

Այդ արյունը դարձավ նոր կյանք,
Նոր մի սերունդ արևերես,
Դարձավ բազում վառ արեգակ,
Դարձավ Զադես ու Ռիոնդես,
Գործարաններ դարձան անկանդ,
Որ բարախում են սրտի պես,
Համայնական արտեր ու հանդ,
Որ զարադարում են հիմա քեզ:

Եվ հնչում է ուրախ մի երգ,
Հովիթ թևով հասնում է ինձ,
Որպես զվարթ տոնական երթ,
Որ չունի վիշտ, չունի թախիծ,
Որպես վարնան ծիծառի հեք,
Որ ճախրում է օդում նորից,
Հասնում է ինձ ուրախ մի երգ
Ձքնաղաղեղ Վրաստանից:

1936

ԵՂԲԱՅՐՈՒԹՅԱՆ ԲԱԺԱԿՆԵՐ

Ամեն մի տոնի, զգացմունքով վառ,
 Երկու զինու դավ խփվում են իրար.
 Հայաստանը մեր զինով փրփրում
 Աշտարակն է իր ձեռքին երկարում.
 Իսկ Վրաստանը իբրև դավ լեցուն՝
 Կախեթն է ահա իր ձեռը վերցնում:
 Այդպես խփվում են բաժաններ երկու,
 Երկու եղբայրներ կենաց մեկ մեկու:
 Ու հիմա, երբ որ զգացմունքով վառ
 Երկու զինու դավ խփվում են իրար,
 Մենք ձայն ենք տալիս խինդով անսահման.
 — Պայծառ կենացդ, չքնաղ Վրաստան:

1936

Դալիս են օրերը նոր
 Թողնում են ներկան ետև,
 Եվ ամեն, ամեն մի օր
 Բերում է երկրին մի թև,
 Եվ մտքին թռչք մի նոր,
 Եվ սիրտը դարձնում թեթև,
 Եվ կամքը դարձնում հզոր,
 Եվ հինը թողնում ետև:

Եվ ինչպես վառվող արփի
 Ծնվում է սերունդ մի նոր,
 Փռվում է ամեն ճամբի
 Ամենուր, ամեն մի օր.
 Իսկ հինը, որպես լամպի
 Վերջին շող մարող անդորր,
 Դառնում է փոշի ճամբի,
 Հալչում է մշուշում խոր:

Ու հիմա սրտով թեթև
 Անցնում ենք բոլորն ու ես,
 Թողնում ենք մեզնից ետև
 Երկրի մեջ մեր սերը ձեզ,
 Դուք առած թռչք ու թև
 Նոր կյանքով կդաք հանդես,
 Մեր սերը՝ զեփյուռ թեթև՝
 Ամեն պահ կփարվի ձեզ:

1937

ՆՈՐԱԿԱՌՈՒԹՅՈՒՆ

Ես տեսնում եմ բարձրանում ես օր-օրի,
Տուֆաքար շենք, վարդապույն ու դեղեցիկ,
Եվ գիտեմ, որ մինչ ամառը բոլորի՝
Տուֆաքար շենք, կլինես դու երկնածիվ:

Եվ գիտեմ, որ մինչ քամին դա ցուրտ ձմռան,
Զյունափառ մեր լեռներից ձիգ իջնի վար,
Կհանգչի շատ բեռնակիր սայլ զո դռան,
Աչքերիդ վառ կրակները կերևան:

Ու գիտեմ, որ արյունի ու քրտինքի
Շաղախով են քո քարերը միացել,
Եվ արեւը քեզ վրա իր ստինքի
Շողերով վառ ճակատներ է լվացել:

Եվ կանգնել են բանվորները հողապույն,
Ու շարել են, ու շարել են, ու շարել,
Ու քարերը, շաղախները ջինջ հողու
Հուլիսերով ու խնդությամբ են պաշարել:

Ու տեսնում եմ բարձրանում ես օր-օրի,
Տուֆաքար շենք դեղեցիկ ու վարդապույն,
Մինչ արեւը լեռներից դեն մոլորի՝
Տուֆաքար շենք, աղանջի դու իմ հողուն:

Ես ուզում եմ խնդությունը լինի հորդ,
Դռներում քո, պատերից ներս, անվախճան,
Եվ ամեն մի բնակիչ քո անհաղորդ՝
Դառնության ու տրամության ու խեղճության:

Ես ուզում եմ, տուֆաքար շենք վարդապույն,
Որ ծոցում քո ճուղղեն շատ մանուկներ,
Նրանց խինդը ողողի բակ ու անկյուն,
Ու լինես դու նրանց հետ մի խաղընկեր:

Ու նրանք երբ մեծանան ու ծերանան,
Ու երբ կյանքը մաղերին սև ցանի ձյուն,
Դու լինես վառ հուշարձան մի խնդության,
Ու նրանց դեմ վերստին մի մանկություն:

Ես տեսնում եմ, բարձրանում ես օր օրի,
Տուֆաքար շենք, վարդապույն ու դեղեցիկ,
Եվ գիտեմ, որ մինչ ամառը բոլորի՝
Տուֆաքար շենք, կլինես դու երկնածիվ:

1934

ԽՆԴՈՒԹՅՈՒՆ

Այս փողոցում, ճամբի վրա,
Կիսամութին, թե լույսին,
Աշխատում են հայր ու աղա
Ամբողջ օրը միասին:

Ալևորը խոհերի հետ
Շարում է քարը քարի,
Որդին ջահել ճարտարապետ՝
Ավարտել է այս տարի:

— Հայրի՛կ, սլառը թեք է դնում,
Նայիր, գիծը ո՞ւր մնաց,
Հայրի՛կ, արագ, ետ ենք մնում,
Տես, արևը թեքվեց ցած:

Զվարթանում է ծերունին,
Խինդ է վառվում իր հողում.
— Ճարտարապետ վորդի ունիմ,
Մատաղ լինեմ ջինջ հողուն:

— Հայրի՛կ, ելել ենք մրցության
Կառուցման մեծ պայքարում,
Որ մեր կամքը, լի խնդությամբ՝
Անմահանա այս քարում:

Եվ ծերունին թափ է առնում,
Խառնում է ցեխը քարին,
Շաղախում է քարաշարում
Ժպիտները իր բարի:

— Հայրի՛կ, սիրտս չի համբերում,
Ուժ տուր, թափ տուր քո ձեռքին,
Ես առաջին քարն եմ դնում
Սոցիալիզմի մեծ շենքին:

Եվ ամեն օր, ճամբի վրա,
Կիսամութին թե լույսին,
Աշխատում են հայր ու աղա՝
Ամբողջ օրը միասին:

1932

Ա Ռ Ա Վ Ո Յ

Պայծառացի՛ր, ա՛յ առաջնա,
Երկիր, խմիր ցուքն արևի,
Կյանք առնեն թող արտ ու արտ,
Եվ այգիները խաղողի:

Մեր դաշտերում համայնական
Թող հնչի երգը լիաթոք,
Փող հնչի թող՝ իմ հաղթական,
Իմ նոր երկրում արևաշող:

Ասկի հասկեր, ոսկի բերքով,
Բամբակ լինի՝ ձյունե սավան,
Ողկուղները քաղվեն երգով
Այգիներում համայնական:

Պայծառացի՛ր, ա՛յ առաջնա,
Պայծառացի ու արևիր,
Մեր դաշտերը համայնական՝
Սպասում են քո բարեին:

1932

ԴԱՇՆԱԿԱՅԱՐ ԵՐԵՒԱ

Նվազում ես, աղջիկս, դաշնակահար երեխա,
Դաշնակահար երեխա, հնչյունների սիրահար,
Հնչյուններիդ անձրևը սրտիս վրա թող տեղա,
Որ արթնանան նրա մեջ իմ հույզերը անհամար:

Աշխատավոր քո հայրը այնտեղ կուլում է ահա,
Այնտեղ կուլում է ահա երկաթի ու քարի հետ,
Աշխատավոր քո հայրը համառորեն ու անահ՝
Նա ձգտում է մեր կյանքի երջանկությունը հավետ:

Նա ձգտում է մեր կյանքի երջանկությունը հավետ,
Դու նվազիր, աղջիկս, դաշնակահար երեխա,
Ահա բացվել է մեր դեմ մի նոր կյանքի արահետ,
Հնչյուններիդ անձրևը սրտիս վրա թող տեղա:

Օ, մենք ելել ենք խոնավ նկուղներից, խավարից,
Աշխատավոր քո հայրը այնտեղ կուլում է ահա,
Որ նոր կյանքի արևը մեր սրտերում վարարի,
Իսկ դու, իսկ դու նվազիր, դաշնակահար երեխա:

Մենք դեռ պետք է տիրանանք բարձունքները զիտություն,
Բարձունքները զիտության և արվեստի ու երգի,
Մեր դեմ, աղջիկս, մեր դեմ դեռ անառիկ բերդեր կան,
Դաշնակահար մանկիկս, դու նվազիր, նվազիր...

1932

ՔԱՂԱՔԸ

I

Այս քաղաքում տեսել եմ ես անթափանց մի դիշեր,
Եվ տնակներ կիսաքանդ՝ անսպասուհան ու անդուռ,
Որոնց վրա ծեր ժամի զանգի զողանջն է իջել,
Ու ծանրացել որպես մուշ, որպես անեծք, որպես բռն:

Եվ աչքերի նման կույր՝ ես տեսել եմ ամեն օր
Անապակի, ավերակ պատուհանները մույլ,
Ու նրանց դեմ ոռնացող պատուհանողմն ահալոր,
Որ իջնում էր լեռներից որպես սոված, դաժան դայլ:

Եվ սովալլուռի ու դժգույն մանուկներ եմ տեսել ես,
Ու մերկությունը նրանց, որ լիզում էր ցուրտ քամին,
Նրանց կյանքն էր չալրտել աչնան տերևների պես,
Որ այդ սաղարթների հետ հողմը քշի ու տանի:

Ու տեսել եմ գինեբույր շարանները կառքերի՝
Զուռնի նվոց միալար, որպես սոված որբի լաց,
Որ հնչում էր հին Գյումրու հեռու, խարխուլ թաղերից
Ու արձագանք էր տալիս հողինների մեջ հարբած:

Հիմա ո՞ւր են, էլ չկան, ինչ տեսել եմ ես առաջ,
Մնացել են ժամերի սիլուետները կիսաքանդ,
Եվ կուզիկ մի քահանա, որպես զանգի մի զողանջ,
Որոնք մեր մեծ կառուցման քարերի տակ կմնան:

II

Օ՛, քաղաք իմ, քեզ այնպես հարազատ եմ յես,
Մտերիմ եմ քո տաշած ամեն մի քարին,
Վարդազույն մի խնդություն տուֆ քարերիդ պես,
Ասեռ ներկել է կյանքիս տառնեմեկ տարին:

Վարդազույն մի խնդություն ջահել իմ հողում,
Ես չբջել եմ ամեն օր փողոցները քո,
Դու ապրել ես, շնչել ես ինձ հետ իմ երգում,
Ու հարբել ես խնդությամբ ամեն երեկո:

Շենքերը, որ հիմա կան, փողոցները նոր,
Կապույտ գոտին ջրանցքի, կայանը լույսի,
Խինդ են սփռել իմ հողում, որ այնտեղ մի օր
Հույզաթաթալ երգերի մի առու հոսի:

Շենքերը, որ հիմա կան, փողոցները նոր,
Բարձրացել են ու աճել աչքերիս առաջ,
Եվ աղմուկը կառուցման բարձրացել է, որ
Ես լսել եմ որպես երգ, նոր կյանքի զողանջ:

Ու ապրեք շարժել է երկիրը մի օր,
Օրորվել են շենքերիդ կատարները երբ,
Դու անվհատ ու համառ շառաչյունով նոր,
Մրտիդ անհուն եռանդով կանչել ես — ելե՛ք:

Ու ելել են աննկուն ջոկատները մեր,
Կառուցման նոր մարտերի, նոր կովի համար,
Շողախել են քրախնդով, ա՛խ, քանի քարեր,
Ու իրենց կամքն են թողել նրանց մեջ անմար:

Յ՛, քաղաք իմ, քեզ այնպես հարազատ եմ ես,
Ու մտերիմ քո տաշած ամեն մի քարին,
Վարդազույն մի խնդություն տուֆ քարերիդ պես,
Ասեռ ներկել է կյանքիս տառնեմեկ տարին:

Փոխվել է քո պատկերը ու փոխվել ես դու,
 Ու փոխվել է քո մեջ նա՝ կյանքը հարածուն,
 Կառուցվել ես երկնի տակ ու մեր ջինջ հոգում,
 Ու զանգակները ժամի էլ չեն ղողանջում:

Ու չի իջնում քեզ վրա միտիկ երեկո,
 Ու քո որտեղ չի նվում լացը որբերի,
 Պայծառ-պայծառ աստղերի անձրևի ներքո,
 Երեկոն քո՝ լուսեղեն վարդեր կրերի:

Կիջնի ահա երեկոն, կրացվեն լույսի
 Ծուշանաթերթ լամպերի կոկոնները վառ,
 Կնայի քեզ երկնքից մի գունատ լուսին,
 Որ անդոր է աշխարհին լույս տալու համար:

Կնայի քեզ երկնքից մի գունատ լուսին,
 Կիջնի ահա երեկոն, դիշեր կլինի,
 ✓ Մութը վրան կխփի լեռների ուտին,
 Եվ լույսերի սարսափից քաղաք չի մտնի:

Կշառաչի քաղաքում կյանքը, կլեռա՝
 Ռադիոների քաղցրալուր նվագների տակ,
 Ու դիներույր պանդոկի սանդուխտի վրա՝
 Ոչ մի սրտում չի խրվի Ֆիննական դանակ:

Փոխվել է քո պատկերը, փոխվել է այնքան,
 Ու փոխվել է քեզ հետ նա՝ կյանքը հարածուն,
 Ու հիմա քեզ լուսեղեն ու զվարթաձայն,
 Օ՛ր, քաղաք իմ, վաղվա նոր օրերն են կանչում:

ԺԱՍՍՊԱՅԸ

Փողոցները խաչածեղ
 Նորակառույց շենքերի մոտ
 Կա մի փոքրիկ բացատ փողոց՝
 Փոշիաշունչ ու արևոտ:

Այնտեղ ահա, ճամբարմիջին,
 Ուր անցնում են կառք ու ձիեր,
 Ուր արձանն է Մեծ Իլիչի՝
 Կանգնած է մի միլիցիոներ:

Ջահել է նա, ժիր ու զվարթ,
 Ու մոխրագույն շորեր հագին,
 Գլխին փափուկ մի սաղավարտ,
 Ու փոքրիկ փայտ սանի ձեռքին:

Մերթ ախտ է անցնում մոտով,
 Մերթ աղմկոտ մի սայլ կամ կառք,
 Նա իր ձեռքի փոքրիկ փայտով՝
 Անձայն տալիս է հրահանգ:

Եվ նայում է հեռու, հեռու,
 Ուղիղ կանգնած պոստի վրա,
 Եվ հիշում է՝ ինչպես հերու
 Պետր Մոսկով ճամբեց իրան:

Տեսնում է նա շենքեր հսկա,
Աղմկահուլյղ շարժում, հռինդ,
Հաղար ավտո ճամբրի վրա,
Տրամվայի գվարթ դղերդ:

Այդ բոլորը ձուլված է մի,
Մի ընդհանուր անափ ժխոր,
Կարծես հնչող համերգ լինի,
Ու ժամապահը դիրիժյոր:

Ու նայում է հեռու էլի,
Ու թվում է նրան ահա
Հաղար ավտո անցան հիմի՝
Իբեհ հանձնած պոստի վրա:

Եվ դալիս են տրամվայներ,
Ջրնդոցով անցնում արագ,
Շուրջը հսկա քարե շենքեր,
Պայծառագեմ ու բազմահարկ:

Տեսնում է նա ճամբրին ահա
Անց ու դարձի ծով ալեկոծ,
Ինքը կանգնած պոստի վրա՝
Դեմը անծայր, լայն մի փողոց:

Եվ ասֆալտե փողոցում այդ,
Ուր թնդում է խուլ մի ժխոր,
Նա շարժում է մի փոքրիկ փայտ՝
Վորպես հմուտ մի դիրիժյոր:

Բայց ժպտում է մեկը նրան,
Այդ մեծ արձանն է Լենինի,
Որ ասում է կարծես իրան—
— էյ, ժամապահ, այդ կլինի՝:

ՁԵՐՆԵԱՆ

Խառատաղի պես մի շողշողուն չքանչան,
Ջարդարում է քո անվեհեր կուրծքը, ընկե՛ր,
Մեր ողջ երկրի, մեր սրտերի հարգանքն է այն,
Որ քո կրծքին ու տնունին փայլ է տվել:

Մեր գետերի հունն ես փոխել դու գարավոր,
Ժայռերի հետ կռվել ես դու հերոսաբար,
Լույս ես քամել դու ձորերից անդնդախոր,
Ու կռվել ես երկրի վրա լույսի կամար:

Եվ ամեն օր, վառվում են երբ լույսերը մեր,
Ու բարախում կայանները սրտի նման,
Թվում է, թե երկրի կրծքին, քո անձնվեր
Աշխատանքն է վառվում օրպես չքանչան:

Կ Գ Ա Ն Ա

Կոմունիզմը կզա սրտերի,
 Սրտերի վրայով կզա նա,
 Համայնական հասուն արտերի,
 Արտերի վրայով կզա նա,
 Իմ երկրի փրփրաբաշ ջրերի,
 Ջրերի կանչերով կզա նա,
 Լույսով լի պղնձե լարերի,
 Լարերի հոսանքով կզա նա:

Կղնդան ռելսերը երկաթի,
 Երկաթե ճամբեքով կզա նա,
 Կվլչեն կարգերը զարերի,
 Դարերի վրայով կզա նա,
 Թշնամին կլինի մահով լի,
 Մահերի վրայով կզա նա,
 — Ընկեր իմ, շառաչուն մեր կավի,
 Մեր կավի շառաչով կզա նա:

Իսկ եթե չհասնեմ այն ուրին,
 Չհասնեմ այն ուրին, երբ դա նա,
 Իմացեք, որ սիրտս քայլերի,
 Քայլերի ձայներից կարթնանա.
 Միայն թե, ընկերներ իմ անթիվ,
 Ասացե՛ք — եղել է մի պոեա,
 Որ հառած աչքերը զո՛ւ ճամբին՝
 Շնչել է զո՛ւ ամեն քարի հետ:

1932

ԼԵՆԻՆԻ ՆԿԱՐԻ ԱՌԱՋ

Նկարն առաջնորդի նայում էր տան պատից,
 Մանուկների մի փունջ դիտում էր լուռ նրան.
 — Լենինն — առաջ Սեդան — տեսեք, նայում է ինձ,
 Արժիկը լաց եղավ. — ինձ է նայում միայն:

— Ինձ... ինձ... ձայն են տալիս երեխաներն իրար.
 Ու հայացքով նրա պատկերն են փայփայում,
 Մինչ դալիս է մայրը, ասում է քնքշաբար.
 — Լենինը, մանկիկներ, բոլորիս է նայում...

1940

Լ Ե Ռ Ն Ե Ր Ո Վ

Մենք իջանք լեռներով՝
Կռիվը տաք էր,
Երկիրը մահով լի՝
Մշուշի տակ էր,
Ձիերը փնչացին,
Դովեցին արագ,
Մեր շուրջը գնդացիք
Ու թեժ գնդակ էր։

Ճերմակ զորքերը մեզ
Պաշարել էին,
Չորս կողմ՝ գնդացիք էր,
Վոր շարել էին.
Նահանջի ելք չկար,
Չկար մի ուղի,
Մեր շուրջը խժր ձորեր,
Սեպ սարեր էին։

Ռումբերը թնդացին,
Կռիվը տաք էր,
Մեր վաշտը թշնամու
Գնդակի տակ էր.
Թշնամու թիկունքում
Թնդացին հանկարծ՝
Պարտիզան քաջերի
Խիզախ գնդակներ։

Թշնամու բանակում
Խուճապ, շփոթ էր,
Մեր գնդակի ճայնը՝
Մահ էր ու բոթ էր.
Թշնամին ջախջախված,
Քնկած էր արդեն,
Լուսանում էր ահա,
Արևը մոտ էր։

Մենք ելանք լեռներով,
Ուղին մեր բաց էր,
Բաշերը ձիերի
Շաղերով թաց էր,
Ձիերը փնչացին,
Դովեցին արագ,
Մեր դեմ արդեն պայծառ
Վառ այգաբաց էր։

1034

ԷՆ ՏԱՐԻ

Հողն անուժ էր,
 Փողն անուշ էր,
 Կյանքը դառն էր էն տարի,
 Հողի մարդը
 Աչքի փուշ էր,
 Ահը սրտում էն տարի:
 Սովի առաջ
 Դուռը բաց էր,
 Աչքը թաց էր էն տարի,
 Ոչ կարող էր
 Ցավը լացել,
 Ոչ էլ բաղդը էն տարի:

Աշխարհը վառ
 Բոցերի մեջ,
 Մահ, կոտորած էն տարի,
 Կրակը թեժ,
 Աղբառը խեղճ,
 Մերկ ու սոված էն տարի:
 Ջահել-ահել
 Կռվի տարան,
 Գյուղը դատարկ էն տարի,
 Հողը մնաց
 Առանց վարել,
 Արտը՝ կծղուն էն տարի:

Ծովը եկավ
 Դուռը բաց էր,
 Ողբ ու լաց էր էն տարի,
 Մահը եկավ
 Ով անհաց էր,
 Սրբեց տարավ էն տարի:
 Սրբեց տարավ,
 Եվ գյուղերից,
 Մահը կուշտ էր էն տարի:
 Կյանքը ծանր
 Դժոխք դառավ,
 Արե չկար էն տարի:

Ու հիմա երբ
 Միտք եմ անում
 Բերքը առատ էս տարի,
 Արտը հասուն
 Հետս խոսում,
 Ծիծաղում է էս տարի.
 Եվ հասկերի
 Ծփանքից մեղմ
 Ինձ են նայում հաղար գեմք,
 Նրանք ընկած
 Ընկերներս են,
 Որ մահացան էն տարի:

Նրանք կարծես
 Բարձրանում են,
 Օրորվում են ու ժպտում,
 Ու կարծես թե
 Արտերը մեր
 Նրանց արյամբ են փթթում,
 Ու կարծես թե
 Վարդերն երկրի
 Նրանց ծիծաղը լինի
 Ու կարծես թե

Նրանց հետ լուռ
Ձրուցում եմ ես հիմի:

Հողն անուշ է,
Երգն անուշ է,
Կյանքը՝ ուրախ էս տարի,
Հողի մարդու
Աչքը կուշտ է
Ահ չունի նա էս տարի
Երգ ու խնդում
Մեր սրտերում,
Կյանքը մերն է էս տարի,
Փառք մեր բերքին,
Ձեռքին, երգին,
Փառք մեր կույին էս տարի:

1933

ԿՈՄՍՈՅՈՒ ԷՆ ՏՂԵՆ...

Կոմսոմոլ էն տղեն,
Աչքս վրեն մնաց,
Հրեն ճամբի վրեն
Ձիով էն ո՞ւր գնաց:

Սիրաս տարավ իր հետ,
Կյանքս էլ ո՞ւր մնաց,
Հերբս կուլակ մի ժարգ՝
Հորբս դուշման գնաց:

Լուսըդ խավրի, իմ հե՛ր,
Դու անարև մնաս,
Կոմսոմոլ էն տղեն,
Առանց բարև գնաց:

Կոմսոմոլ, այ տղա,
Աչքս վրե՛դ մնաց,
Սեսս սրտիս վրա՝
Ձե՛դ դուփելով գնաց:

1928

ՔՍԱՆՎԵՑ ԸՆԿԵՐՆԵՐ

Շարժվում են արևոտ
Մեր շարժերը խրոխտ
Փողոցում գտնվում ենք, երգում.
— Քսանվեց ընկերներ,
Քսանվեց ընկերներ,
Քսանվեց կոմունար Բազմում:

Եվ հեշում է երգը,
Եվ դնում է երթը,
Եվ ձուլվում են բազում ձայներ.
Ու թվում է օդում,
Քնդաթյունն է հորդում,
Այն ո՞վքեր են մեր դեմ կանգնել:

Եվ հիշում ենք նրանց,
Շարժերով անթափանց,
Ճանաչում, ժպտում ենք, երգում.
— Քսանվեց ընկերներ,
Քսանվեց ընկերներ,
Քսանվեց կոմունար Բազմում...

Եվ նայում է կարծես
Շահումյանն ահա մեզ,
Հայացքից վառ խինդ է հորդում,
Խոսքերով կրքակոտ,
Բռնարիս սրտին մոտ
Սնցյալից ներկան է պատմում:

Եվ շարժերը մեր կուռ
Դուրում են դեռ ամառ
Հոսում են վողոցով եռուն,
Երգի մեջ հաղթական
Տեսնում ենք ապագան,
Եվ սնցյալ օրերի հեռուն:

Ու ժպտում է պայծառ
Մեղադին հայրաբար,
Մեզ ձեռքով նշան է անում,
Թվում է Այրոշան
Քայլերով առնական
Ժպտալով ամբիոն է ելնում:

Իսկ շարժերն արևոտ
Նրանց հետ, նրանց մոտ,
Քայլերով դուրում են, երգում.
— Քսանվեց ընկերներ,
Քսանվեց ընկերներ,
Քսանվեց կոմունար Բազմում...

Բայց ահա թախիծով
Հառաչում է մի ծով,
Նրա հետ մեր երթն է ծվում,
Ու թվում է հստակ,
Կապուտակ երկնի տակ
Երգելով ծովափն ենք դուրում:

Ու թվում է բազում
Աչքեր են երազում,
Ու նրանց սպասում, որ գան,
Բայց հողմն է շառաչում,
Ալիքներն են կանչում,
Ու ծովն է հառաչում. «Չկան»...

Եվ շարժվում են խրախա
Մեր շարքերն արևոտ,
Փողոցում գոփում ենք, երգում.
— Գառնվեց ընկերներ,
Գառնվեց ընկերներ,
Գառնվեց կոմունար Բաղվում...»

1937

ԿՈՍՈՒՆԱՐՆԵՐԸ

1

Ես աեռել եմ նրանց հրդեհներում այն մեծ,
Գնդակների շաշուն տարափների ներքո,
Մարտի այն օրերում, երկրում մեր հողմածեծ,
Աննկուն ու արի բազուկով ու հողով,
Աչքերի մեջ պայծառ լույսի կայանները,
Կովում էին նրանք, բյուր կոմունարները:

Կովում էին նրանք: Եվ հրդեհվող երկրի
Բոցի ծիրանափայլ լեզուներով ահա
Պատմությունն էր գրվում նրանց վսեմ կովի,
Մեր զառամած երկրի սևահողի վրա:
Ընկնում էին նրանք զրկած ալ վարդերը,
Կովում էին խիզախ, բյուր կոմունարները:

Եվ մեծ մարտնչումի պայքարներում վսեմ,
Ծիւի արյունափայլ ջուլանների վրա,
Տեսնում էին նրանք հաղթանակներ լուսե,
Տեսնում էին կյանքը նոր ընթացքով ահա,
Թնդում էին զվարթ նրանց խրամները,
Կովում էին նրանք, բյուր կոմունարները:

Ու շողջողուն մի օր, լուսե մի այգաբաց,
Խիզախ ու քաջասիրտ սուրհանդակի նման,
Մեր լեռներից ուրախ, ուժեղ մի հողմ սուրաց,

Եվ որտապ գլխով հորիզոնի վրա,
— Յնձա՛ թող երկիրը, ջնձան թող քրտերը,
Հաղթանակը տարան բյուր կոմունարները:

2

Ես տեսել եմ նրանց մեր երկրի ընդերքում,
Մետաղի ու քարի կոխվներում ահեղ,
Քանդում էին նրանք, երգեր էին երգում,
Հանքերի խավարում անթիվ ծեր ու ջահել.
Ու երգերով նրանց ցրվում էր խավարը՝
Քանդում էին նրանք՝ բյուր կոմունարները:

Քանդում էին նրանք և կուրծքը ժայռերի,
Եվ տները խարխուլ, գերեզմանի նման,
Եվ փրփրուն ջրերը մեր վիշապ գետերի
Հանում էին երկրի հորիզոնի վրա,
Որպես նոր արեգներ փռած վառ վարսերը,
Արևներ կառուցող բյուր կոմունարները:

Բարձրացող որմերի վրա եմ տեսել ես,
Քրտինքով չաղախված տուֆ քարերի վրա,
Տաշում էին նրանք քարերը վարդերես,
Ու կառուցում բազում տներ ու գործարան,
Ուրախ էին նրանք ու նրանց երգերը,
Որմեր էին շարում բյուր կոմունարները:

Ու հասուն արտերի ծախքներում անհուն,
Պակհատ ցորենի վառ շեղջերի առաջ,
Հասկերի հողմաչունչ ալսվոցում անքուն,
Համայնական անափ դաշտերի մեջ կանաչ,
Սփռում էին նրանք իրենց խինդն ու սերը՝
Արևի ու բերքի բյուր կոմունարները:

3

Մեծ է ձեր անունը, իմաստալից ու վեհ,
Սերունդների համար հավետ նվիրական,
Ինչպես բաղմախորհուրդ, լուսեղ-գործերը ձեր,
Ճամբաները պայծառ դեպի մեծ ապագան.
Գիտեմ, ձեր անունը կօրհներգեն դարերը,
— Երկրի ամեն խորշում կան կոմունարները:

Կթողնեք դուք երկրում արևաշող մի կյանք,
Երջանկություն ու սեր, պայծառ մի ապագա,
Եվ որպես թանկարժեք իմաստուն մի կտակ,
Կշողան նրանց դեմ, երբ որ աշխարհ կզան.
Սերունդների առաջ կթնդան քարերը.

— Երկրի ամեն խորշում կան կոմունարները:

Եվ ձեր անունի տակ պայծառ մի կյանք կաճի,
Կբարձրանան բազում մանուկներ արևաչ,
Ծաղիկներ կբուսնեն նրանց ամեն կանչից,
Ուրախ կլինի կյանքը, ուրախ ու բարեհաճ.
Ու երբ դարձնի հովը, կչրչան ծառերը.

— Երկրի ամեն խորշում կան կոմունարները:

Եվ երբ լինի գիշեր, մեր երկրի լուսածառ
Բիրերը կփայլեն արևների նման,
Երկիրը կդառնա շողշողուն լույսի ծով,
Աստղերը կաղոտեն հորիզոնի վրա.
Ու կե գրերի պես կժպտան լամպերը—

— Մեր հայացքի մեջ են բյուր կոմունարները:

1933

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԸ

Այն դամբանի առաջ կանգնեցի ես երկար,
Հողիս տրամուխամբ լի, սիրտս լեցուն հուշով:
Այն դամբանի վրա փայլուն ամեն մի քար
Ողողված էր արքայի թախիծով ու լույսով:

Եվ այդ քարերի առկ՝ երկրներից բերած,
Ղեկավարն էր ննջում մեր կռիվի ու դարի,
Այն դամբանի առաջ իմ հայացքը մնաց
Մտերիմ ու ծանաթ մի հարազատ քարի:

Այդ իմ երկրի քարն էր այն դամբանի վրա,
Բարաչարում կեցած պատգամավորը լուռ,
Ու սառել էր այնտեղ՝ հայացքի մեջ նրա
Երկրիս երախտապարտ համաերանքը անլուր:

Այդ իմ երկրի քարն էր մտերիմ ու ծանաթ,
Որպես հուղարկավոր, արցունքների նման,
Նա իմ երկրի կողմից ցողում էր վիշտ, կարոտ
Այն մեծ ղեկավարի դամբարանի վրա:

1934

ՊՈԵՏԸ

Դատաւարդի անհուն հուղումներով լեցուն,
Նա ողջ մի տարերք է անթիվ երգերով լի,
Նրա երգը որպես միլիոն սրտի լեզու՝
Հնչում է սրտերում ու ողջ աշխարհով մի:

Եվ մերթ խաղաղ է նա՝ պոետի ջինջ հողին,
Ու մերթ մոնչում է, որպես անդուստ օվկյան,
Երբ պատրաստվում է նա ծնունդ տալ իր երգին,
Օ, անհանդիստ է նա իր հույզերով այնքան:

Օ, անհանդիստ է նա, որպես հուղված տարերք,
Թնչպես երկինք-երկիր, որ խառնվում են իրար,
Թնչպես ծովն է հնչում մի շառաչուն համերգ,
Փչում է բյուր ալիքներ իր ափերի վրա:

Նա մռայլ է լինում իր երկունքի պահին,
Նրա երկինք հողին ամպում է խոհերով,
Եվ հույզերի հախուռն ու ամեհի քամին
Դալարվում է նրա ծով սրտի ափերով:

Եվ սուր զիզաղներով կայծակում են այնտեղ
Մաքերը պոետի ու հույզերին խփում,
Ու հանկարծ իր սրտի շառաչյունով ահեղ
Ողեշունչ երգերի անձրևներ են թափում:

Եվ երգերի այդ հորդ անձրևներից հետո
Խաղաղվում է կրկին ողջ տարերքը նրա,
Պարուրվում է պայծառ նրա հողին խինդով
Ինչպես արև ելնի լուրթ երկնքի վրա:

Եվ ինչպես նրբահյուս ծխածանի աղեղ,
Որ կախված է երկնի կապույտներից անհուն,
Խաղաղվում է այդպես նրա հողին ահեղ
Ու ժպտան է վալլում աչքերի մեջ խոհուն:

1932

ԽՈՍՔ՝ ԸՆԿԵՐ ՍՏԱՍԻՆԻ ՎԱՐՍՈՒՆԱՍՅԱԿԻ ԱՌԹԻՎ

Ես չեմ եղել աշխարհում,
Երբ որ ծնվել ես դու.
Երբ հայրենի Գորիում
Խաղով տարվել ես դու,
Երբ ձեր հյուղից հայրական
Թուել են քո մեծ հողու
Հառաչանքներն առնական
Աղառատենք մարդու:

Եղել եմ ես աշխարհում,
Երբ որ կուվել ես դու,
Երբ մեր արդար պայքարում
Կուվով տարվել ես դու,
Երբ աշխարհը բռնության
Համառորեն ու արթուն,
Լույս տենչերով մարդկության
Հիմքից փոխել ես դու:

Վարում եմ ես աշխարհում,
Երբ ամենուր ես դու,
Երբ աշխարհի արտերում
Սիրով հիշվում ես դու,
Երբ քո ամբողջ հմայքով
Ամեն, ամեն մի հողու՝
Վաթսունամյա ժպտով
Հանդարտ նայում ես դու:

1939

Մ Ր Ր Կ Ա Յ Ա Վ Ը

Մ. Գաբրիել հիշատակին

Ճախրեց երկինքներում մորկահալին հզոր,
Եղավ մորիկների հողին բարձունքներում,
Իբ ուռը հայացքով նա կարգաց դալիքը նոր
Չմուրրվեց երբեք մուսյլ, մութ ամպերում.
Կայծակ սվիններին հանձնած կուրծքը իրա՝
Մորկահալին երգեց բարձունքների վրա:

Եվ թափանցեց երգն աշդ սրտերի մեջ մարդկանց,
Դարձավ ըմբոստության ոգի երակներում,
Որպես հողու արև՝ ընկեր դարձավ նրանց,
Որոնք ճշմարտության ուղին էին փնտրում.
Մորկահալին անդուլ իր թևերով ահա
Մավառնում էր նրանց հողիների վրա:

Եվ նա երգում էր դեռ, երգում խիզախ, անդուլ,
Մանում էր նա հյուղեր և նկուղներ խորին,
Մարդկանց հողիների քար խավարն էր քանդում,
Մորիկների հզոր երգը շրթունքներին.
Մուսյլ ամպեր էին կախվում երկրի վրա,
Հնչում էր դեռ խրոխա, հնչուն երգը նրա:

Եվ մորիկը ճայթեց: Ահավոր մի ամպրոպ
Պայթեց երկրի վրա, խառնվեց երկինք, երկիր,
Որպես ախեզերքի սրտի ահեղ տրոփ

Թնդաց հզոր ձայնը մորկահալի երգի.
Ու գուրս ելան մարդիկ մարտնչումով համառ,
Կորած արեգակը որոնելու համար:

Ու մինչ արևը վառ, արյունափայլ, բոսոր,
Բարձրանում էր երկրի հորիզոնի վրա,
Մավառնում էր նա դեռ, մորկահալին հզոր,
Նոր ցնծության երգեր շրթունքներին իրա,
Հայացքն ուղղած դեպի արևմուտքը հեռա,
Նա նոր մորիկների ավետիս էր բերում:

Սակայն չըկա արդեն մորկահալին արի,
Կայծակներից խանձված իր թևերով նկուն,
Հանձնած իր ողջ կյանքը հրի ու պայքարի,
Նա ընդունեց մահվան բաժակը դառնադույն.
Մորիկների երգը շրթունքներին իրա,
Մորկահալին ընկավ իր բարձունքի վրա:

Սպրում է բայց երգը, չի մարելու երբեք,
Թափանցելու է նա նոր դարերի հեռուն,
Լինելու է նա նոր մորիկների մի երգ՝
Արևմուտքի մուսյլ, խավար երկինքներում.
Որպես հզորաշունչ մորիկների ոգի՝
Ոչթիվ բանակներ է հանելու դեռ ոտքի:

1936

ՊՍԱԿ ԾԱՅՈՒՄՅԱՆԻՆ

Ծո՞վն է արդյոք շիրիմը քո,
Ավաղո՞ւտը հեռավոր,
Դեզերում է հողիս երգով,
Դեզերում է ամեն օր:

Ու գտնում է կարծես թե նա,
Որ ամեն մի սրտում վառ
Մնում է դեռ ու կըմնա
Մի դամբարան քեզ համար:

Բայց ո՞ր մեկին դնեմ պսակ,
Ո՞ր դամբանիդ դամ այցի:
Եվ բոլորից պարզ ու հստակ
Մեր երկիրը ընտրեցի:

Նա լինի թող շիրիմը քո,
Վրան վարդերը բուրբ,
Կանաչները, որոնք երգով
Փրփրվում են ամեն օր:

Ու ոսկեվառ լույսերն երկրի,
Կառուցումները մեր վեա,
Ու դրանց հետ մեր երգերի
Բույլը պսակ լինեն քեզ:

1936

ՏԱՐԱՍ ԾԵՎՁԵՆԿՈՑԻՆ

1. Պոետի հետ

Կարծես ապրել էմ քեզ հետ ամբողջ մի տարի,
Քեզ հետ եղել էմ ուրախ, եղել էմ տխուր,
Ինձ ժպտացել է հաճախ քո դեմքը բարի,
Ասես չըջել ես երգով ինձ հետ ամենուր:

Ես զգացել էմ որտիղ զարկերը բոլոր,
Քո բարախուն տողերի հնչուն վանկերում,
Հողիս նրանց ունկնդիր՝ ամեն-ամեն օր
Ու կրայնական փառավոր հողն էր դեզերում:

Մերթ դեզերում էր ձմռան ձյունին ու բուքին,
Կատերինի հետ մեկտեղ, դրկած երեսան,
Մերթ Գոնատայի խոհերով՝ ասես իմ հողին
Իր հարազատ որդոցն էր դնում գերեզման:

Մերթ նետվում էր մոլեգնած դեպի Չիզիրիլն,
Կամ սլանում էր ահա, հասնում էր Ուման,
Մերթ կանչում էր մորմոքով, սիրով Օկսանին,
Ինչպես իր սերը կորցրած դժբախտ Յարեման:

Ու մերթ իջնում էր հողիս Դնեպրի ափին,
Եվ քո հայացքն էր փնտրում նրա ջրերում,
Եփվում էին ալիքներն ափի քարափին՝
Ու քո երգի հեռավոր մրժուռնը բերում:

Կարծես ապրել եմ քեզ հետ ամբողջ մի տարի,
Քեզ հետ եղել եմ ուրախ, եղել եմ ախուր,
Ինձ ժպտացել է հաճախ քո դեմքը բարի,
Ասես չքջել ես երգով ինձ հետ ամենուր:

1939

2. Այց դամբարանին

Կապույտ լեռներից դեն՝ Դընեպրի լուրթ ափին,
Մի բարձունքի վրա Տարասն է խոր ննջում,
Կապույտ լեռներից դեն՝ թռած իմ ջինջ հողին
Նրա դամբարանին խոսքեր է մրմնջում:

— Քընի՛ր, խաղա՛ղ քընի՛ր, բաղձաչարչար Կորդար,
Պայծառ քո երգերին չի իջնի ոչ մի ամպ,
Տարիների մութից մեր գալիքը տեսար,
Մեր ընտանիքը մեծ՝ կապված եղբայրությամբ:

Քընի՛ր, խաղա՛ղ քընի՛ր, ժողովրդի՛ զավակ.
Ամեն երկրում ունես դու հայրենիք ու տուն,
Ժողովուրդներն ամեն մեր լուրթ երկնքի տակ
Սիրում են քեզ, Տարաս, որպես իրենց որդուն:

Կապույտ լեռներից դեն, Դընեպրի լուրթ ափին,
Մի բարձունքի վրա Տարասն է խոր ննջում,
Կապույտ լեռներից դեն՝ թռած իմ ջինջ հողին,
Նրա հողը սիրո արցունքով է թրջում:

1939

Հ Ե Ն Ա Կ Ն Ե Ր Ը

Հողաղնդի անթիվ քաղաքներում բոլոր,
Եվ գյուղերում հետին, ճամբաների վրա,
Երբ ելնում է ոսկի արեղակը Գոսոր,
Ոսկեդերձան բաշով կարմիր ձիու նման,
Դադաղաձայն՝ որպես մահաօտարուռ քայլերդ,
Դոփում են գետինը միլիոն կենտ հենակներ:

Հենակներին կրթնած՝ արագիլներ որպես,
Մի ոտնանի մարդիկ, աչքերի մեջ ցատում,
Հոգիներում նրանց բյուր հույզերը հրկեղ,
Եվ սրտերում խորով փափազները բազում,
Օրորում են առաջ ոտները անընկեր. ①
Դոփում են գետինը միլիոն կենտ հենակներ:

Ես տեսնում եմ նրանց՝ հեռուներից տնձիբ,
Աչքերի մեջ սառած սարսափը ահադին,
Շարժումներում ճնշող տխրություն ու ձանձիր,
Ու դեմքերին իջած ապտակները կյանքի,
Խոհերում դիչերը՝ անթափանց ու անել,
Դոփում են գետինը միլիոն կենտ հենակներ:

Եվ չարժվում են նրանք գլխիկոր ու տրտում,
Քաղաքներում բոլոր և գյուղերում հետին,
Սմեն մեկը կարծես իրա ոտն է փնտրում,
Ձանձրացել են նրանք արդեն փայտե ոտից.
— Ձեր ոտները կերան հաղար ոտմբ ու արկեր,
Որ դոփեն գետինը միլիոն կենտ հենակներ:

Հնկերներ իմ անթիվ, ընկերներ անհամար,
Ես տեսնում եմ ահա ձեր ոտները կորած
Կապիտալի դժոխք հնոցների մեջ վառ,
Նրանց ծխաններում գորշ ու երկնաուլաց,
Որ դարձել են հաղար կյանք լափող կրակներ,
Որ դոփեն գետինը միլիոն կենտ հենակներ:

Եվ բոցերը գեղին՝ բյուր կյանքերով վառվող,
Ծավալվել են որպես մի անդիջում հրդեհ,
Թափ են առել որպես ձեր կամքերը հառնող,
Խաբխում են արդեն պալատներ ու շենքեր,
Ու նրանց շուրջ իրրե երգեր մահվան բոթի՝
Դոփում են գետինը միլիոն կենտ հենակներ:

Եվ կիլիչեն նրանք: Ես լսում եմ արդեն
Աղաղակներ հուժկու, միլիոնների ցատում,
Ոտնաձայներ խրոխտ, որ դոփում են իմ դեմ
Սմուր ոտների տեր բանակները բազում,
Որ խորտակեն բոլոր հրանոթ ու տանկեր,
Որ չդոփեն հողը միլիոն կենտ հենակներ:

Ես լսում եմ արդեն չառաչը պայքարի,
Ըմբոստացման անափ մաքառումը անհուն,
Որ աշխարհը լափող վառ հրդեհը մարի,
Որ մահը սավառնի կապիտալի հոգում,
Օվկյաններում սառեն անթիվ ոտմբ ու արկեր
Որ չդոփեն հողը միլիոն կենտ հենակներ:

Եվ աշխարհի անթիվ քաղաքներում մի օր,
Եվ գյուղերում հետին, ճամբաների վրա,
Կրարձրանա ոսկի արեղակը բոսոր,
Ոսկեդերձան բաշով, կարմիր ձիու նման,
Եվ կթնդան օդում հաղթանակի երգեր,
Պատմություն կդառնաք, միլիոն կենտ հենակներ:

ՎԵՐՁԱԼՈՒՅՍԸ

Մորթվեց արեգակը այնտեղ, արևմուտքում,
Դարերի տակ ճկում մի լեռան սապարտին,
Ամպերի սպիտակ կուրծքն է արյունոտում
Արյան չատրվանը այն բոցակաթիլ,
Ու նետում է մի ձեռք ահա դեպի երկինք՝
Արյունոտ մի դաշույն, իբրև լուսնի մահիկ:

Այնտեղ վերջալույս է, արևն է մահանում,
Ես զգում եմ նրա հեքը մահացողի.
Այնտեղ վերջալույս է. և աստղերն են ելնում
Որպես արցունքները մահը ողբացողի,
Այնտեղ վերջալույս է. երկինքը սղափոր
Իր փերուզե դեմքին քաշում է սև մի քող:

Եվ իջնում է մուլթը ու հողմն է բարձրանում
Փեշերը քսելով արտերին ու հողին,
Եվ գիշերն է ահա թանձրությամբ ծանրանում,
Երկիրը մտնում է խավար մի անկողին.
Մուլթի մեջ գծվում է սիլուետը մի լեռան,
Որպես արեգակի մի անշուք դերեզման:

Բայց դեռ մարմրում է իմ դեմ մի վերջալույս,
Արևմուտքի մուսյլ, խավար ֆոնի վրա,
Այնտեղ հիվանդ մի մարդ դալարվում է անհույս,
Եվ դեռ արյունոտ են չրթունքները նրա,
Եվ դեռ սնվում է նա կյանքերով մարդկային,
Ու արյուն է կաթում ժանիքներից ահա:

Այնտեղ մեռնում է նա՝ տիրանը աշխարհի,
Մուսյլ քաղաքների տիրակալը դեղին,
Նա, որ ցանկանում է հողագունդը վառի
Իրև հույսը վերջին, դալարքը մեռնողի,
Նա, որ ցանկանում է բոցերով հրդեհի
Բանալ արյունադավ փրկության մի ուղի:

Այնտեղ վերջալույս է, հոգեվարք է այնտեղ,
Քաղաքների թանձր մշուշներից ահա
Ես տեսնում եմ բարձր ծխաններից արդեն
Չի բարձրանում ժահրոտ, թունոտ չուշը նրա,
Եվ թույլ են բարակում մոտոր ու գորածրան,
Այդ մահացող մարդու խարխուլ սրտի նման:

Ես տեսնում եմ՝ այնտեղ ահա շրջում է նա,
Մի ուրվական լուսե՝ բաղմություններ խրոխա,
Որ չոքել են կարծես նրա կրծքի վրա,
Որպես մահասարսուռ և անողորմ մի բոթ,
Եվ փորվում է այնտեղ մի անդունդ անսահման,
Մահացողի անհուշ ու խորունկ դերեզման:

Վաղը կմեռնի նա այնտեղ, արևմուտքում,
Մուսյլ քաղաքների տիրակալը դեղին,
Որ դեռ հաղար կյանքեր ու սրտեր է ուտում,
Իր՝ մեռնողի, անհույս դալարքներով վերջին.
Վաղը կմեռնի նա: Եվ մուշ թողերն իմ այս
Գուցե հնչեն որպես զվարթածայն մահաող:

Այնտեղ վերջալույս է. բայց տեսնում եմ ահա
Վաղվա բոցաճառադ արեգակը չքնաղ,
Որպես արու առյուծ կանգնած լեռան վրա՝
Թափ է տալիս հպարտ ոսկե բաշը իրա,
Նա մարդկային կյանքի ոսկեդարն է ուտել,
Հրդեհվում են այնտեղ պայծառ արշալույսներ:

Ձ Կ Ն Ո Ր Ս Ը

Սեանա լճի մեջ լողում է նավակ,
 Նավակում նստողը ձկնորս է մի ծեր.
 Ձկնորսը ջրի մեջ ուռկան է գցել,
 Սեանա լճի մեջ լողում է նավակ:

Սեանա լճի մեջ հայացքն իր տխուր
 Տեսնում է ձկնորսը և թախծում է լուռ:

— Ձկնորս, ի՞նչ ես խորհում,
 Ձկնորս, ի՞նչ ես խորհում:
 Ու լիճը ծփում է, տալիս է փրփուր:

— Ձկնորսը գիշերը կարգաց լրագիր,
 Մտքով սլացալ նա հեռու մի երկիր.
 Իսպանիա երկիրը տեսալ հրի տակ,
 Ի՞նչ կյանքեր են այնտեղ լինում նահապետի:

Ձկնորսը մնաց ողջ գիշերը անքուն,
 Սեան ուռմբեր էին հոգում տրաքում:

— Ձկնորս, մի վհատի,
 Ձկնորս, մի վհատի:
 Ու լճի ջրերն են թեթև աղմկում:

— Ձկնորսը գիտե, որ կհաղթեն նրանք,
 Գիտե, որ կըլինի այնտեղ ազատ կյանք.
 Բայց, ա՛խ, քանի՜ գիշեր, քանի՜ մանուկներ
 Իրենց մայրերի հետ սոված են քնել:

Ձկնորսը ասում է, խորհում է հոգում,
 Հանկարծ վառ մի խինդ է նրան համակում:

— Ձկնորս, ի՞նչ եղավ քեզ,
 Ձկնորս, ի՞նչ եղավ քեզ:
 Ու լճի ջրերն են ուրախ աղմկում:

— Ձկնորսը հոգու մեջ իր ուժը զգաց.
 Քաշում է ուռկանը ջրի մեջ ձգած.
 Իսպանիա երկրում նա ունի եղբայրներ,
 Նրանց պեսք է օգնի և ձկնորսը ծեր:

Քաղաքի փողոցով անցնում է մի մարդ.
 Փողոցով անցնողը ձկնորս է մի ծեր.
 Ձկնորսը ուսին լի մի պարկ է գցել,
 Քաղաքի փողոցով անցնում է մի մարդ:

Ձկնորսը քայլում է մաքին իր հլու,
 Աչքերը հուզիչ մի հուրով են փայլում:

— Ձկնորս, ո՞ւր ես գնում,
 Ձկնորս, ո՞ւր ես գնում:
 — Ձկնորսը գնում է իր պարտքը տալու:

1937

Կ Տ Ա Կ

Կբարձրանաս մի օր, կլինես խելահաս,
Ու երկիր կմանես որպես զարուն դվարթ,
Գուցե հուզվի հողիդ, կամ դուցե զարմանաս,
Երբ ժպտա քեզ կյանքը և պայծառ, և հաղարտ:

Կշրջես արևոտ փողոցները երկրի,
Կնայես երկնահաս շենքերին, լույսերին,
Կնայելիք ինչպես մի ծեր պատմադրի
Ռոցաշունչ պատմության պայծառ երեսներին:

Ձմալյանքի խինդով հողիդ կպարուրես,
Կժպտան քո դիմաց շենքերը խոյանքով,
— Ինչպես են կառուցել,— գիտեմ կըհարցնես,—
Քարերը շենքերի կասեն քեզ— Քրտինքով...

Կսրսփա հողիդ խինդախառ թախիծով,
Եվ ասես կյանք կառնի քո դեմ ամեն մի քար,
Դու առաջ կչարժվես ճիշտ միևնույն դժով,
Ու քո դեմ կփռվի լուսեղ մի ճանապարհ:

Կբացվեն քո առաջ անհամար դործարան,
Ու հաղար մեքենա սրտատրոփ զարկով,
— Ինչպես են կառուցել,— կհարցնես նրանց,
Ու հաղար մեքենա կասեն քեզ— Ձրկանքով...

Կբայես դու էլի միշտ առաջ ու առաջ,
Կկանգնի քո դիմաց պանթեոն մի պայծառ,
Արձաններ մարմարի՝ սրախողխող արված
Մարտիկներ անվանի ու անանուն հաղար:

Կնայես, կխորհես՝ հողիդ թախիծով լի՝
Կճանաչես նրանց կոմունար անունով.
— Ինչպես են բարձրացել,— կհարցնես էլի,
Արձանները մեկ տեղ կասեն քեզ— Արյունով...

Բայց ինչ որ կասեն քեզ լեզուներով հաղար
Քարերը շենքերի, արձանները հսկա,
Ընկեր իմ անանուն, թող քո հողին պայծառ
Հաղար անդամ ալիլ, հաղար սրտով դրա:

1932

ԵՐԳԻՍ ՀԵՏ

Թուղթ, հանձնեմ քեզ խմ կյանքի
Վայրկյանները սիրելի,
Թե մի օր կյանքս հանգի՝
Կյանքս եղիր սիրով լի:

Պոսիր լեզվով հույզերի,
Հանդարտ խոսիր, ինչպես ես.
Ասա՝ հույզերի գերի
Կյանքս հանձնել եմ ես քեզ:

Ու երբ կարգա մեկը քեզ,
Ծննդա լուռ աղանջին,
Ասա, որ ապրել եմ ես՝
Աղանջս կյանքի կանչին:

Ասա՝ որ ապրել եմ ես
Մի անհանգիստ, մեծ դարում,
Որ ալեկոծ ծովի պես
Եռում էր ու մաքառում:

Ասա՝ սիրել եմ ես վես
Այդ կռիվը կատաղի,
Հանդարտ ասա դու, ինչպես
Մունջ տողերը այս առգի:

Ասա՝ մեկն եմ եղել ես
Երգիչներից այն բազում,
Որ տեսել են լուսերես
Կյանքը՝ երգում, երազում:

Այդպես ասա նրան դու.
Թե նա հույզով բռնկի,
Փարվիր նրա ջինջ հոգուն,
Երգով նրան համակի:

1934

Այս ճերմակ թղթի վրա
Գրում եմ իմ երգերը.
Թողնում եմ նրա վրա
Իմ կյանքի նուրբ մի թելը:
Նրբ կարգաս այս տողերը
Իմ սիրտը զգա քո դեմ.
Դիտցիր, որ էլ չկա նա,
Փոխվել է վաղուց արդեն:

1932

ԽՈՐՀՈՒՐԳ

Մի սարսափիկ մահից դու,
Իմ բարեկամ, իմ ընկեր,
Մահը կորուստ չէ մարդու,
Կործանում չէ դեռ:

Սարսափիկ դու՝ երբ դիտես՝
Ապրում ես ու կաս,
Ու քո կյանքում մեր կյանքին
Քան չունես, որ տաս:

1932

Լ ՈՒՑ Կ Ի

Լսիր, լուցկի՛ իմ ջնջին,
 Որ մարում ես իմ ջնջից,
 Իմ ընկերոջ թանգ կյանքի
 Մասը չունե՞ս քո միջին:

Չունե՞ս արդյոք դու նրա
 Արյան հյուլին քո բոցում,
 Ու չի՞ ալրվում քեզ հեռ նա՝
 Դո աննշան հնոցում:

1930

Ոչ վշտացիր, ոչ թախծիր դու,
 Կյանք է, կանցնի, կդնա,
 Որպես արձան անցնող մարդու՝
 Նրա դորձը կմնա:

Դարը կիջնի դարի վրա,
 Դարը դարից ուժ կառնի,
 Ու դարերի փոշին վրան՝
 Պայծառ դորձը կըհառնի:

1934

ԻՆՉ ՁԱՅԵԼ Ե ՖԻՐԴՈՒՍԻՆ

Անց են կացել քանի սերունդ, քանի տարի, քանի դար,
Դեռ քո երգի հուրը, շահի՛ր, մնացել է մշտավառ.
Հազար տարվա մութից հիմի որպես պայծառ մի լուսին,
Լույս է տալիս անունը քո, երգի արքա Ֆիրդուսի:

Ու դեռ քանի-քանի սերունդ, ու քանի խան, քանի չահ
Անց կկենան այս աշխարհով, դու կմնաս միշտ անմահ,
Հազար սերունդ կդա, կանցնի, կխոսի միշտ քո մասին,
Ամեն սերունդ կդա, կասի—ինչ ջահել է Ֆիրդուսին:

1934

ԴԱՄԲԱՆԱԿԱՆ

Կառուցման ժամին ընկավ մի բանվոր
Իրա բարձունքից ու փռվեց դետնին,
Հողին հանձնեցինք մենք շուքով այսօր
Պայծառ հերոսի դետնաթավալ դին:
Ընկե՛ր, կյանքը քո ավիր մեր Նյանքին,
Հերոսի փառքով դու խաղաղ քնի,
Դրանով հասար մի նոր բարձունքի,
Որանցից երբե՛ք, երբեք չես ընկնի:

1932

Ս Ե Ր

Ամենքի մեջ, ամենքի հետ դու կապուես,
 Ամեն արտում կվերածվես դու երգի,
 Ոչ մի իշխող չի կործանի երբեք քեզ,
 Եվ ոչ մի սուր, չի մատնի, ոե՛ր, քեզ վերքի =
 Եվ սերունդներ կըզան ու քեզ կըթպտան,
 Եվ սրտից օերտ կըտարածվես ամենուր,
 Եվ իբրեւ վեհ եղբայրություն մարդկություն
 Դու աշխարհից կջնջես վերք ու մոմուռ:

1938

Հ Ա Յ Ե Լ Ի

Զրպարտիչներին

Կարծում են թե ճշմարտության աղբյուր ես դու, հայելի՛,
 Տեսնում են երբ քո ջինջ ցուքում պատկերն իրենց արտաքին,
 Եվ դո՛ւ սրտով, ինքնավստահ ու հղիացած ավելի,
 Թաղում են նենգ մտքերի տակ և խիղճն իրենց և հողին:

Բայց, ա՛խ, եթե կարենայիր լինել սրտի հայելի,
 Ու ցույց տայիր նրանց հողու խարդախ դավերը բաղում,
 Սյն ժամանակ կըլինեիր այնքան, այնքան առեկի,
 Որ նրանք քեզ կըտեսներին միայն, միայն երազում:

1938

ԲԱԺԱԿԸ

Այս բաժակը անշունչ, որ լուռ նայում է ինձ,
Մերթ ուրախ է լինում, ու մերթ ախրաթախիծ,
Նրա մեջ վառ դինին՝ մերթ իբրև խնդություն,
Եվ մերթ ախրության պես նայում է իմ հոգուն:

Եվ իմ սիրտն էլ այդպես մի բաժակի նման
Լցվում է մերթ խինդով, մերթ վշտով անսահման,
Վշտով լեցուն պահին՝ դարձյալ ուրախ եմ ես,
Որ չի լինում սիրտըս դառարկ բաժակի պես:

1936

ԽՈՍՔ ՎԱՐՊԵՏԻՆ

Փռմանակները կանցնեն արծվի թևերով,
Բայց կենդանի կըմնա սիրտդ քո երգում,
Շատ սերունդներ կըզան դեռ սիրո վշտերով
Ու կըդտնեն նրանք քեզ երգերիդ դրքում:

Ու կըդտնեն նրանք քեզ, քո արտով կըզան,
Կըսիրեն քո երգերով նոր Զարոններին,
Պաղ հովերը Մանթաշի՝ թե առած կըզան,
Դո կարոտով կըփարվեն նրանց վարսերին:

Ու կըկարդան նրանք քո տաղերն ու հոգիդ,
Կըթրթոան հանդերիդ հեքերը կամաց,
Իսկ դո՛ւ, վարպետ, խնդության արցունքն աչքերիդ՝
Դո տողերի արանքից կըժպտաս նրանց:

1940

ԽՈՍՔ՝ 3. ԱՐԵՎՅԱՆԻ ՀԻՇՄԱՍԿԻՆ

Դերասանը մեռավ: Մեռավ բեմի արքան:
Դժվար է ինձ այնպես իմ հուզմունքը պահել.
Նա՛, որ իր ողջ կյանքում, ամեն զիչեր այնքան
Հուզել և հուզվել է մերթ ծեր ու մերթ ջահել:

Դերասանը խաղաց, վերջին դերն իր կյանքի,
Մեռավ և աշխարհում թողեց լոկ մի անուն.
Ա՛խ, երանի լիներ բեմի շորեր հագին,
Ու մահանար՝ ինչպես բեմում էր մահանում:

1936

ԽՈՍՔ՝ Վ. Պ. ԶԿԱՆՈՎԻ ՀԻՇՄԱՍԿԻՆ

Դերոշակները վա՛ր: Ընկավ մեծ օղաչուն:
Զրսպիր արտասուքդ, իմ հայրենի՛ք, իմ մայր,
Կրճքիդ վըրա՝ հերոս քո որդին է հանդիմ,
Արցունք հարկավոր չէ հերոսների համար:

Սփռենք նրա վըրա վարդերը ողջ երկրի,
Մեր սրտերում հավետ պահենք անունն անմար,
Սիրենք նրան, իմ մա՛յր, առանց արցունքների,
Հայրենիքի սիրով, հայրենիքի համար:

1938

ԽԱՂԱԼԻՔԸ

Լորդի չորս տարեկան երեխան
Ստացավ նվեր մի—խաղալիք,
Խաղալիքը մի նեղր մանկան
Սկահեր դուռն էր կլորիկ:

Ու մի օր, անդգույշ դիտվածով,
Ջարդեց նա խաղալիքը բակում,
Խաղալիքը, կարծես թե լացով,
Շշնջաց—դո՞ւ էլ ես ջարդում:

1932

ՄԱՆԿԱՆ

Դու բողբոջ ես մի հին ծառի,
Դու մի կանաչ, կանաչ տերև
Ուրախ կանչն ես դու ծիծառի,
Դու մի ծիլ ես՝ վրան արև:

Խնդությունն ես երկրում ծնված,
Դու ծաղկումն ես մի հին ծառի,
Օդում ուրախ, թևատարած
Զվարթ կանչն ես դու ծիծառի:

1937



Ես իջնում եմ ձորը, դու բարձրանում ես վեր,
Դու բարձրանում ես վեր, ես իջնում եմ ձորը,
Քո գեմ գալիք կյանքի լուսապայծառ լեռներ,
Քո գեմ օրը բացվող ու շողշողուն նորը:

Ու շողշողուն նորը, տես, նայում է նա քեզ,
Տես, նայում է նա քեզ, այն շողշողուն նորը,
Դու բարձրանում ես վեր, իսկ ես իջնում եմ, տես,
Իսկ ես իջնում եմ, տես, գեպի ձորը, ձորը...

1934

ՀԱՆԳԻՊՈՒՄ

Մանուշակը այս՝ ուր ժպտում է ինձ,
Արդյոք դեղեցիկ աչք չի՞ աղջկա,
Որ իբրեւ ծաղիկ բուսել է նորից
Հողից աճյունի, որ հիմի չկա:

Եվ չի՞թը ցողի՝ թերթերին իջած,
Սիրած պատանու շունչը չէ՞ վրան,
Որ օդում վազուց գոլորչի դարձած՝
Տարիներ հետո գտել է նրան:

1936

Արթնացալ իմ մեջ մի պայծառ երազ .
Թվաց՝ նստել եմ մեր հին պարտեզում ,
Հասմիկի ծառը թեքվել է վրաս՝
Ու աչքս դրքի թերթերն է լիզում :

Մընո՞ւմ է արդյոք պարտեզը այն հին ,
Հասմիկի ծառը փարթամ ու պայծառ ,
Որպեսզի նա իմ պառավ մայրիկին
Հեռավոր որդու վառ կարտաք տար . . .

1936

Դու որո՞մի նման չար ,
Մեր երգերի ծաղկոցում ,
Անփառունակ , անքանքար
Դառնություն ես տարածում :

Բայց կդա մի անողորմ՝
Ծաղկաքաղի պայծառ օր ,
Ի՞նչ կլինես դու , որո՞մ ,
Որո՞մ , չար ու թունավոր :

1934

Օ՛, ես դեռ մանկուց, երբ աչքս բացի՝
Շրջում էր վրաս ճերմակ ակացին.
Հողիս աստղերի փայլով հրմայլած՝
Ականջիս՝ ձայնը ակացու բացի:

Եվ երբ մեծացա, տարիներ անցան,
Ու մանկությունս փոխվեց երազի,
Դառնաթով հողով ես նոր իմացա,
Որ ես եմ թախծոտ, տխուր ակացին:

1920

Ծաղիկները քուն կմտնեն, երբ լինի աշուն,
Կանաչները լուռ կթռչեն աշնան մշուշում,
Աղբյուրները մարդարտաշիթ՝ երբ ձմեռ լինի,
Էլ չեն կանչի, չեն կարկաչի ինչպես որ հիմի:

Ուրեմն դու, սի՛րտ իմ, շող տուր հույզերդ առատ,
Ինչպես դարձան ծաղիկները ջինջ ու անարատ,
Ու քո խորքից թող, որ վճիռ քո երգը հոսի,
Մարդարտաշիթ աղբյուրի պես կանչի ու խոսի:

Ծաղիկները քուն կմտնեն, երբ լինի աշուն.
Սիրտ իմ, դու էլ պիտի թռչնես աշնան մշուշում:

1934

Երբ չեմ լինի ես, երբ չեմ լինի ես,
Երբս կմնա թղթերի վրա,
Ապուղ տողերն իմ եղեգներն պես
Համբ շշուկով հաբց կտան իրար:

— Ո՞ր է միտքը այն, որ փայլ ավեց մեզ,
Աչքերը, ու մեզ թղթին ցողեցին,
Սիրտը՝ հույզերի մի սափոր կարծես,
Որից մենք առատ հույզեր լամեցինք...

Ի՞նչ մի վերջակետ, աննշմար ու խեղճ,
Կասի—բոլորը հաշվեցին ձեր մեջ:

1934

Ծ Խ Ա Խ Ո Տ Ս

Ծխախոտս, այրվում ես, վառվում ես ինքդ քեզ, ինչպես ես,
Ժպտում ես, հորանջում ես, ծխում ես, ինչպես ես,
Անտրտունջ ու խոհուն շիկանում, մոխրանում ես լուխ,
Ծխախոտս, այրվում ես, վառվում ես ինքդ քեզ, ինչպես ես:

Լուցկին շուրթերը վառեց, շիկեցիր, ինչպես ես,
Որ խոհերս քամուն եմ տըվել ու տխուր սիրտս քեզ,
Դու ծխիդ ոլորտների, ես մտքերիս մեջ եմ մոլորված,
Ծխախոտս, այրվում ես, վառվում ես, ինքդ քեզ, ինչպես ես:

Դու շիկում ես երբ քեզնից սփոփանք եմ ծծում ես,
Ինչպես ես, երբ ինձնից ուրիշներն են ուզում այդ,
Սակայն կրկին մոայլվում ես, ծերանում ես, ինձ պես, տե՛ս,
Ու խամրում ես, մոխրանում ես, ինչպես ես, ինչպես ես...

1920

Վ Ա Յ Ր Կ Յ Ա Ն

Ջրերը հորդում են, ձյունհալ է, ջան, դարուն,
Կարկաչում է առուն, սի'րտ իմ, խնդա:
Այս կարկաչը, սի'րտ իմ, էլ ետ չի դառնալու,
Այս կարկաչը սի'րտ իմ, էլ չես զգա:

Ձրկանդեց վայրկյանը, քո վրայով անցավ,
Ու կատարեց սահուն թռիչքն իրա,
Ու թռթալեց ահա զարկերի հետ մեկտեղ
Ի՞ր բերածը, սի'րտ իմ, նա քեզ վրա:

Դու էլ անցար, սի'րտ իմ, անտրտունջ ու անձայն,
Ես էլ քեզ հետ մեկտեղ և ամեն ինչ,
Հիմա ուրիշ եմ ես, հիմա ուրիշ ես դու,
Այլ է աշխարհն հիմա և ամեն ինչ...

1929

Օ Ր Ա Ց ՈՒ Թ Ց Ը

Պոկում եմ ես այսօրվա քո թերթիկը, օրացու'լյց,
Խինդաշաղախ թախիժով, հաճույքով եմ պոկում ես,
Ինչպես աչնան մի տերև ու վարդի թերթը ինչպես,
Պոկում եմ ես այսօրվա քո թերթիկը, օրացու'լյց:

Ես տեսնում եմ նրա մեջ ժամերի վաղըր վսեմ,
Մահացումներ եմ տեսնում և ծնունդները բազում,
Ես տեսնում եմ նրա մեջ դալիք մեր կյանքը լուսե,
Այնքան հստակ, այնքան ջինջ, ինչպես վճիռ երազում:

Ու քրտինքներ հորդառատ ու եռանդ եմ տեսնում ես,
Դո թերթիկում, օրացու'լյց,—ժամանակի անջինջ քայլ,
Եվ խորտակված սերերի մորմոքումները հրկեղ,
Եվ խանդավառ սրտերի ցնծությունն եմ զգում ես:

Եվ դիտեմ, որ պոկում է նա էլ մի օր իմ կյանքից,
Եվ առաջ է ընթանում կյանքը մի քայլ ավելի,
Մահայն հոգիս, օրացու'լյց, որպես մանուկ անհանգիստ
Ականջում է նոր կյանքի երկաթաձայն քայլերին:

Ու դիտեմ ես, դիտեմ ես, ժամանակի որպես քայլ
Թարմ հեղեղը այսօրվա դեռ աշխարհում կմնան,
Որպես ծիծաղ, որպես մահ, հերոսության որպես փայլ,
Որպես ծնունդ, որ հյուսեց ժամանակի մեքենան:

Պոկում եմ ես այսօրվա քո թերթիկը, օրացույց,
իլլյուստրացիա թախիծով, հաճույքով եմ պոկում ես,
ինչպես աչնան մի տերև ու վարդի թերթը ինչպես,
Պոկում եմ ես այսօրվա քո թերթիկը, օրացույց:

1933

Վ Ե Ր Ա Դ Ա Ր Ձ

Տուն դարձա նորից լեռներից հեռու,
Ձորերից, խորունկ, դաշտերից արձակ,
Ջրերից, որոնք ժայռերն են քերում,
Դեպքերում վայրի, մութ ձորերի տակ:

Եվ անտառների թովչանքը անձիր,
Եվ թռչունների համերգը հնչուն,
Եվ ծաղիկների գորգեր ցան ու ցիր
Տարածվում էին իմ ճամբամիջում:

Ու ալիք-ալիք ծփծփում էին
Արտերը հասուն նոր բերքով հզի,
Եվ լուռ նայում էր երկինքը մեր հին
Մեզ վեհ լեռներին, ձորերին, հողին:

Եվ լուռ նայում էր երկինքը մեր հին,
Ես անցնում էի դյուղեր, ալմաններ,
Քաղաքներ, որոնք ժայռերի ծայրին
Կարծես հիմա էլ ինձ նայում են դեռ:

Տուն դարձա կրկին: Ու բերել եմ ես
Իմ հողում պահած խինդ ու տխրություն,
Ու ձորերը խոր, լեռները այն վեհ,
Կարծես թե ինձ հեռ բերել եմ ես տուն:

1936

Չ Յ Ո Ւ Ն

Ձյո՛ւն, փափուկ ձյուն, սպիտակ ձյուն,
 Ձգույշ իջիր դաշտերին,
 Ծաղիկները մտել են քուն,
 Հողն է նրանց անկողին:

Հանդարտ, կամաց իջիր ափսոս,
 Որ ծաղկունքը չարթնանան,
 Ծածկիր նրանց քնքուշ ու հեղ,
 Ձգույշ, զգույշ անսահման:

Ձյո՛ւն, փափուկ ձյուն, սպիտակ ձյուն,
 Հանդիստ, խաղաղ իջիր վաթ,
 Ծաղիկները մտել են քուն,
 Ծաղիկները ցրտահար:

1935

Գ Ի Շ Ե Ր Ա Մ Ո Ւ Տ

Ամպի ծվենները վառվում են ահա,
 Հանդչում է արևը, հալչում է ասեռ,
 Ու մութը նստել է սարերի վրա,
 Խոհուն են սարերը, սարերը ինձ պես:

Խոհուն են սարերը դարերը ուսած,
 Հանդչում է արևը, արևը ահա,
 Ու մութը թափվում է հողի պես դեռ թաց,
 Մեռած մի ցերեկի դադաղի վրա:

Ու մութը թափվում է հողի պես դեռ թաց,
 Ամպի ծվենները մարել են ահա,
 Մի լեռան կատարից լուսինն ընկավ ցած
 Ու փչրվեց կարծես աշխարհի վրա:

Էլ չկա ցերեկը, գիշեր է իմ դեմ,
 Խոհուն են սարերը դարերը ուսած,
 Թրկնքի ջահերը, ջահերը արդեն
 Վառվում են: Գիշերը ինչ նուրբ է հյուսած:

1933

ԱՅՆԱՆԱՅԻՆ

Այն քամին է քշում տերեւները դեղին,
Բարի ողջուն քեզ էլ, վերջին աշուն,
Դաշտերիդ բերքառատ ու զո պարարտ հողին,
Ոսկեծամ իմ երկրին ողջուն, ողջուն...

Սև հողին է հանձնում իմ երկրի դյուղացին՝
Իր հատիկը՝ ոսկի հույսերով լի,
Որ նոր դարնան պայծառ, լուսե այգարացին
Իր երկրի հյութերը նա վայելի:

Ահա նա է հիմա աղոթում սև հողի
Կուրծքը փխրուն, փափուկ ու բերքառատ,
Ողջուն մեր դաշտերի այդ «երկաթե հյութին»,
Սեպտեմբերի լաղուր երկնքի տակ:

Ցանում ենք հատիկը և հողում, և սրտում,
Թող ծլի, աճի նա ու մեծանա...
Այն քամին է հիմա դաշտերում թփրատում,
Ամռան շունչը վերջին—թող մահանա...

Մահացումն է ծնում ամեն ինչ, որ նոր է,
Հզոր է մեռնողից էլ ավելի.
Կմեռնի հատիկն էլ, որ ապրի նա նորեն,
Մի ոսկի հասկի մեջ ու բերքով լի:

Հատիկի մեջ անգամ կա կռիվ ու պայքար,
Կռիվը ծնում է, կա, կմնա,
Կռիվը ծնվել էս ես, ամեն մի ծառ ու քար,
Կռիվը ծնված այս հին հողի վրա:

Այն քամին է քշում տերեւները դեղին,
Բարի ողջուն քեզ էլ, վերջին աշուն,
Մենք հատիկ ենք հանձնում հիմա զո ցուրտ հողին,
Այդ հատիկի մահվան ողջուն, ողջուն...

1933

Վ

ՉՄՈԱՆ ԳԻՇԵՐ

Երկրին իջավ արծաթ գիշեր,
Հանդերում ձյունը ցուլաց,
Որպես լույսով լեցուն լճեր՝
Լուսնի աչքից վար ծորած:

Պսպղացին ողում անքուն
Լույս ավաղներ անհամար,
Խորասուզվեց տիեզերքում
Աչխարհն ինչպես նետած քաբ:

Միայն մեկն է շրջում հեքով,
Այդ ժամանակն է արթուն,
Որ լուսնյակի լույսի ներքո՝
Հավերժությունն է կարգում:

1938

Պ Ե Յ Չ Ա ժ

Պանդնած է սարն իմ դեմ դիմաց
Հպարտ իր հասակով,
Գլխին ամպե գլխարկ դրած՝
Լույսի վառ պլսակով:

Խոհուն է նա: Նայում է լուռ
Հանդերի լուրթ հեռուն,—
Սնծիր արտերն են վստիկհուռ
Ծովի նման հեռում:

Եվ բլուրներն են հայրենի՝
Վրբանների նման.
Քանի՜ դույնի քառանկյունի
Կարկատաններ վրան:

Եվ գյուղերն են հեռուներում,
Խրճիթներն են քարե,
Հովիտներում ու ձորերում
Ահա լուռ ծրվարել:

Մայրամուտ է, սարն է իմ դեմ
Հպարտ իր հասակով,
Հանդին գիշերն իջավ արդեն
Աստղի լույս պլսակով:

1939

ԱՂՁԿԱ ԵՐԳԸ

(Երգ՝ գրված կիևոֆիլի համար)

Ասում են, թե մի աղջիկ,
Ամեն-ամեն առավոտ,
Մազերն արձակ ու բորբիկ
Շրջում է դաշտ ու արոտ:

Ու դեռ արև չըծաղած՝
Սրտում պահած վիշտ ու սուգ՝
Շրջում է նա ու հոգնած
Թափում է ցող-արտասուք:

Տխուր, արցունքն աչքերին,
Հոգին ամպած, սրտում ցավ,
Պատմում է ողջ վարդերին՝
Սիրածն ինչպես մոռացավ:

Պատմում է նա ու լալիս,
Շրջում է նա դաշտերում,
Ու ծաղիկներն անհանգիստ
Գլխիկներն են օրորում:

1939

ՄԱՆՈՒԾԱԿ

Կանաչ դաշտում մի մանուշակ
Հարցրեց. — Գիտե՞ս ինչ եմ ես.
— Երկնից պոկված շիթ ես հստակ, —
Մեղմ շնչաց հովը հեղ:

— Ոչ, չիմացավ, — ժպտաց նա լուռ,
Դու առա, ամպ սպիտակ,
Ամպը վերից նայեց տխուր՝
— Դու մի կորած փիրուղ աղ:

— Ոչ, ավելի քնքուշ եմ ես,
Դո՞ւ ինչ կասես, ջինջ աղբյուր,
Եվ աղբյուրը բյուրեղի պես
Արցունքները թափեց բյուր:

— Դու մի երգչի ջինջ սիրածի
Չքնաղ հայացքն ես սառած,
Որով մերժեց բանաստեղծին,
Ու հեռացավ թե առած:

Եվ կարտի հուրը հոգում
Երգիչն ամեն առավոտ
Դալիս է, որ քո նայվածքում
Զգա նրան սրտին մոտ...

— Ի՞նչ... — Արևը վերելց խանդեց,
Քանդեց վարսերն իրա շեկ—
Մանուշակին կանեմ աշնպես,
Որ չերևա էլ երբեք:

Ու թափեց իր շողերը հուր
Կանաչ դաշտին լայնարձակ,
Մանուշակը թառամեց լուս՝
Փիրուզ երկնի աչքի տակ:

Կանաչ դաշտում մի բանաստեղծ
Կանչեց. Ո՞ւր ես, մանուշակ,
Եվ աղբյուրը լաջով հըծծեց.
— Պատասխան տուր, արեգա՛կ:

1937

ՀՈՐՈՏ ՄՈՐՈՏ

(Հայկական լեգենդ)

Թանկադին վարդետին՝
Այլետիք Իսահակյանին:

Աստղեր էին Հորոտ-Մորոտն երկնքում,
Կարոտ սբտով նայում էին միշտ իրար,
Պահած սիրո կրուկն իրենց ջինջ հոգում,
Թարթում էին շող-արցունքներ անհամար:

Ուղում էին փարվել, դրկել մեկ մեկու—
Հորոտ աղջիկն ու Մորոտ լույս պատանին,
Բայց անհույս էր նրանց սերը երկնքում.
Տիեզերքն էր հսկում հազար-աչքանի:

Ու մի դիչեր, երկինքը երբ ամպի տակ
Մտել էր քուն երազներով անհամար,
Զույգ աստղերը պատռեցին ամպն ըսպիտակ,
Ու նետվեցին դեպի իրար, իջան վար:

Իջան, սակայն չըփարվեցին իրարու.
Կանաչ դաշտում պահած կարոտ, պահած սեր,
Լուսարացին իրար դիմաց, բայց հեռու,
Դարձել էին Հորոտ-Մորոտ ծաղիկներ:

Լուսաբացին նայում էին մեկ-մեկու,
Հովն էր խաղում նրանց քնքուշ երեսին,
Ու նայելով՝ ծաղիկ-աստղերն այդ երկու,
Սչնան մի օր անհաս սիրուց թռչնեցին:

Եվ հողի տակ, ամեն-ամեն մի դարուն
Խոր կարոտով հառաչում են նրանք դեռ,
Ու նրանց հուր հառաչանքից՝ դաշտերում
Ծաղկում են բյուր Հորոտ-Մորոտ ծաղիկներ:

1940

Կըմահանաս մի օր դու,
Կընկնես անզգա,
Ու սառնությունը հողուդ
Ցուրտ հողը կզգա:

Եվ գուցե թե այդ հողից
Բուսնի մի եղեդ,
Ու արթնանաս դու նորից
Մի պայծառ ցերեկ:

Ու երբ երեկո լինի,
Ու վառվեն աստղեր,
Հանկարծ քո մխտըն ընկնի՝
Խորտակված մի սեր...

Ու մորմոքից այդ սիրո
Ուղես հառաչել,
Ու լաց լինել հույզերով՝
Ինչպես առաջ էր:

Բայց, ա՛խ, արցունք չըլինի,
Չունենաս լեզու,
Հովը առի ականջիդ՝
— Արթնացար իդո՛ւր...

1920

ԾԻԾԵՌՆԱԿՆԵՐԸ

Ծիծեռնակներն եկան, անցան,
Ականջիս տակ ծլվացին.
Արդյոք նրանք զվարթաձայն՝
Մորըս բարե՞ն ասացին:

Արդյոք դալիս տեսա՞ն նրան,
Աչքը ճամբին, մեն-մենակ,
Տխուր նստած մեր տան դռան՝
Մայրամուտի ժամանակ:

Ծիվ-ծիվ... նրանք անցան կրկին,
Ծլվացին ինձ ախպես—
Տեսանք, տեսանք քո մայրիկին,
Հացի փըշուր դցեց մեզ:

Ասաց—մեռնեմ ձեր թևերին,
Տարեք նրանց օրհնություն.
Արև մաղթեք էն լույս երկրին,
Բարե տարեք իմ որդուն:

Ծիծեռնակներն ասին, անցան,
Հեռուներում ծլվացին.
Արդյոք նրանք քրտիս անձայն
Թրթիռները զգացի՞ն:

1939

Ո Ս Կ Ի Ն

— Հայրի՛կ, ինչո՞ւ է ոսկին
Արեղակի պես փայլում:
— Տղաս, չե՞ր որ նրա մեջ
Աշխատալոր մարդկության
Սիրտն ու արյունն է այրվում:

— Հապա ինչո՞ւ է դեղնել
Ինչպես համբույրը մահի:
— Տղա՛ս, նրա հետևից
Ազա՜ մարդիկ են ընկել,
Նա էլ դեղնել է ահից:

— Հայրի՛կ, հայրի՛կ սիրելի,
Ասա, ինչո՞ւ է հնչում:
— Տղա՛ս, սիրտը ահով վի
Նա դեռ երկու աշխարհի
Արյան կովի է կանչում:

1933

ՄԱՆՈՒԿՆԵՐԸ

Դեռ մանուկներ են նրանք,
Անդեռ մանուկներ,
Նրանք սիրում են խաղալ
Մինչև երեկո,
Նրանք ունեն անհամար,
Բյուր խաղալիքներ.
Դեռ մանուկներ են նրանք,
Անդեռ մանուկներ:

Նրանց համար աշխարհը
Խաղարան է մի.
Նրանք դեռ չեն ճաշակել
Ոչ վիշտ, ոչ կոփւլ,
Օրերը դեռ նրանց գեմ
Ժպտում են հիմի,
Ու աշխարհը սիրելի
Խաղարան է մի:

Բայց խաղալիքներն իրենց՝
Գաղտնիքներ ունեն,
Այն ի՞նչ է, որ շարժվում է
Գնդակների մեջ,
Ի՞նչպե՞ս եղավ, որ հանկարծ
Սուղիչը սուլեց,
Օ, խաղալիքներն իրենց՝
Գաղտնիքներ ունեն:

Ու ջարդում են, որ բանան
Գաղտնիքները խոր,
Գնդակները պատռում են,
Որ մեջը նայեն,
Չե՞ որ նրանք դեռ անդեռ
Մանուկներ են, նոր...
Ու ջարդում են, որ բանան
Գաղտնիքները խոր:

Ու թող խաղան ու ջարդեն,
Մինչև մեծանան,
Մինչև հաղար խորհուրդներ
Բարդվեն նրանց դեմ,
Մինչև օրերը մթնեն,
Տարիներ անցնեն,
Դեռ թող խաղան ու ջարդեն,
Մինչև մեծանան:

1926

ԱՆՅՈՐԴՆԵՐ

Տեսա զվարժ մի պատանի,
Քայլում էր նա անվեհեր.
Ու ասացի—սլատասխանիր,
Ինչո՞ւ ես միշտ նայում վեր:

Ասաց—այնտեղ իմ հոգեթով
Երազներն են հմայուն,
Դրա համար ես կարոտով
Լուրժ երկնքին եմ նայում:

Տեսա մի մարդ արդեն հասուն,
Եվ կենսախինդ, և ամուր.
— Ինչո՞ւ ես դու անվերջ վազում
Ու միշտ նայում ամենուր:

Ասաց—կյանքը ամեն տեղ կա,
Լինի ուրախ թե տխուր,
Դրա համար սրտով աղա՛հ՝
Նայում եմ ես ամենուր:

Ու կորամեջ մի ծեր տեսա,
Կնձիռներով անհամար.
Ու ասացի—ինչո՞ւ, ասա.
Նայում ես միշտ դեպի վար:

Ասաց—կյանքս անցավ, դնաց,
Մատնեց ինձ ահ ու դողի.
Դրա համար ես սարսափած՝
Անվերջ նայում եմ հողին:

1940

ՄԱՅՐԻԿԻՍ

Քեզ միտքս բերեց իմ տուն,
Ես քեզ հետ զրույց արի,
Ա՛խ, մա՛յր իմ, մա՛յր իմ անքուն,
Աչքըդ իմ ճանապարհին:

Նստեցիր անկողնիս մոտ,
Ու ձեռքդ ճակտիս դրած՝
Հայացքով քո արևոտ
Հարց ու փորձ արիր կամաց:

Ասացիր.—Փոխվել ես դու,
Մազերիդ իջել է ձյուն,
Գորովանքը քո հոգու
Աչքերիս բերում էր քուն:

Ու հետո փաղաքշարար
Ասացիր թախիծով խոր.
— Տեսել եմ օրրոցըդ վառ,
Օրորել, երգել օրոր:

Տեսել եմ պատանեկան
Քո կյանքը խաղով տարված,
Հիշո՞ւմ ես, որ մի անգամ
Կտուրից ընկար դու ցած:

Իսկ կյանքըդ երիտասարդ
Անց կացավ ինձնից հեռու.
Դու արդեն մի ալեզարդ,
Իսկ ես քեզ լուկ այցելու:

Եվ հետո չիմացա էլ,
Քուն իջավ իմ աչքերիս,
Իսկ դու էլ ինձ համբուրեց,
Գրնացել էիր Թավրիզ:

1937

Մ Ա Յ Ր Ի Կ Ի Ս

Թվում է՝ լսում եմ ես քո շունչը,
Թվում է՝ ինձ մոտ ես դու էլի,
Թվում է, քո ամեն մի շունջը
Իջնում է խաղաղ այս տողերին:

Տեսնում եմ քո դեմք մշուշում ես
Մերթ փայլում է ու մերթ աղոտում,
Ես գիտեմ, դու հաճախ ինձ հիշում ես,
Քննելիս ինձ համար աղոթում:

Եվ գիտեմ, որ ամեն մի ուրախ օր՝
Բոլորված սեղանի շուրջ մեր տան,
Լցվում է քո սիրտը կարոտով մոր,
Դու թախծում, հառաչում ես այնքան:

Թռչում են քո այդ հառաչները,
Որպես նուրբ, ձյունաթույր աղավնի,
Կտրելով լեռներն ու սահմանները
Իջնում են կարծես իմ սեղանին:

Կրծում է իմ սիրտն էլ մի կարոտ հուր,
Կտցում է իմ սիրտը որպես ցին,
Ու հոգիս մշուշվող երեկո լուռ,
Հազնում է ամպերը թախիծի:

Եվ ինչպես երկիրը, որ դառնում է
Սրեգակ իր մոր շուրջն ամեն օր,
Միտքը, մայր, շուրջը սավառնում է՝
Ինչպես որ երկիրը իրա մոր:

Բայց ի՞նչ է, բայց ի՞նչ է այդ կարոտը,
Օ, մայր իմ, ես այդ չեմ հասկանում.
Արդյոք ա՞յն, որ կյանքիս Առավոտը
Դո խորը ցավով էր լուսանում:

Արդյոք ա՞յն, որ դու ինձ տրվել ես
Կաթը քո լուսեղեն ստինքի.
Արդյոք ա՞յն, որ դու արեի պես
Նայել ես մանկական իմ դեմքին:

Բայց չէ՞ որ անցել են տարիներ շատ,
Փոխվել եմ ես այնպես, ու այնքան,
Եվ քո լույս ստինքի հյուսիսից դատ
Շատ հյուսիս եմ խառնել իմ արյան:

Եվ քո լույս աչքերի շողերից դատ
Նայել են ինձ բազում արևներ,
Բայց դու կաս, մնում ես ամենից շատ,
Ամենից լուսեղեն վառ մի սեր:

Ու հիմա, դրում եմ երբ այս երգը,
Ո՞վ դիտե՞ քնած ես, թե արթուն.
Բայց նայում է կարծես ինձ քո դեմքը
Ու հանդարտ արցունքներ է թափում:

Թվում է՝ լսում եմ ես քո շունչը,
Թվում է՝ ինձ մոտ ես դու էլի,
Թվում է՝ քո ամեն մի շշուկը
Իջնում է խաղաղ այս տողերին...

1937

ԵՐԵՐ ԵՐԳ ՆԱԶԻԿԻՆ

1.

Ի՞նչ խաղաղ է քո հողին—
Մեղմ երեկո ես դու,
Որ հեռավոր մի երգի
Մբմունջն ունի օդում,
Որ խոհերի պես քո հեղ
Զեփյուռն ունի նազուն,
Հույզերիդ պես՝ լուսերես
Աստղեր ունի բազում.
Ի՞նչ խաղաղ է քո հողին,
Լուրթ երեկո ես դու.
Աստղերով քո երկնքի
Լույս տուր իմ հողուն:

Երբ ես երգեր եմ գրում,
 Ինձ հետ հուզվում ես դու,
 Ինձ հետ ուրախ ես լինում,
 Ինձ հետ տխրում ես դու:
 Թե որ մի տեղ եմ գնում,
 Մտքով դալիս ես դու:
 Հոգուս թե ամպ է իջնում,
 Թագուն լալիս ես դու:
 Իսկ երբ տարված երգերով
 Նստում եմ ես անքուն,
 Քնքուշ, քնքուշ խոսքերով
 Ինձ նախատում ես դու:

1934

Երբ գնում եմ հեռուներ ես,
 Քաղաքներ շեն, մեծանուն,
 Ուր եռում է ժխորի պես
 Կյանքն ալկեոժ ու անհուն,
 Ինձ թվում է, թե երգի պես
 Ականջին իմ օրն ի բուն
 Դու կանչում ես, դու կանչում ես,
 Դու կանչում ես—արի տուն:

Բայց հեռու է լինում տունը,
 Եվ հեռու եմ լինում ես,
 Գիշերվա ուշ, խաղաղ քունը
 Բարուրում է դուցե քեզ,
 Եվ դուցե թե երազում ես
 Դու քնի մեջ կամ արթուն,
 Դու կանչում ես, դու կանչում ես,
 Դու կանչում ես—արի տուն:

Իսկ ես միտքս՝ ծխախոտին,
 Նստած խաղաղ մի անկյուն
 Լուռ ծխում եմ ուշ գիշերին,
 Մտորում եմ ես անքուն,
 Ու ծխի լուրթ քուլայի պես
 Ծփում է սիրտըս անհուն,
 Դու կանչում ես, դու կանչում ես,
 Դու կանչում ես—արի տուն:

Երբ մտնում եմ անկողին ես
 Հոգիս լիքը մշուշով,
 Դու նստում ես մոտըս կարծես,
 Ու խոսում ես շշուկով:
 Ու թվում է օրորում ես,
 Որ աչքերիս լճնի քուն,
 Ու կանչում ես, ու կանչում ես,
 Ու կանչում ես—արի տուն:

1938

ԶԱՆՏՈՒ

Փոփրիկ հովիվին

Զա՛ն, փոքրի՛կ, սիրո՛ւն տղա,
 Քեզ արե՛, քեզ կյա՛նք, քեզ սե՛ր:
 Հայացքդ սրտիս վրա
 Վառում է հաղար հույսեր:

Սրե՛ի որդին ես դու
 Այս ծաղկող հողի վրա,
 Ու ոսկե մի վառ խոստում,
 Զա՛ն, փոքրի՛կ, սիրո՛ւն տղա,

Քեզ համար դեռ որքան չուտ,
 Ինձ համար ուշ է արդեն,
 Զգում եմ խինդը հոգուդ,
 Զա՛ն, փոքրի՛կ, սիրո՛ւն տղա:

1929

ԻՄ ԵՐԳԵՐԸ ՔԵՉ...

Փոփրիկ Օդոքեիմ

Քո օրերը բարձրանում են,
Բարձրանում ու շողշողում են,
Շողշողում ու դուրդուրում են
Գուրդուրում են քեզ:

Իմ մաղերը ճերմակում են,
Ճերմակում ու ծերանում են,
Ծերանում ու մոխրանում են,
Մոխրանում են, տե՛ս:

Քո հույզերը արթնանում են,
Արթնանում են ու ծաղկում են,
Օ, ծաղկում են ու բուրում են
Ու բուրում են սե՛ր:

Իմ հույզերը, օ, խամրում են,
Օ, խամրում ու մահանում են,
Մահանում ու մոխրանում են,
Մոխրանում են դեռ:

Քեզ դալիքը ողջունում է,
Ողջունում է ու կանչում է,
Օ, կանչում ու ճաճանչում է,
Ճաճանչում է, տե՛ս:

Օ, մանկիկ, քեզ իմ ձեռքերը,
Իմ ձեռքերը, իմ հեքերը,
Իմ հեքերը, իմ երգերը,
Իմ երգերը քեզ:

1934

ԼԵՆԻՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Ես գիտեմ, որ և մեռած ես և ապրում ես դու հիմա,
 Եվ, քո ողին միշտ կմնա ժամանակի պես անմահ.
 Դու, մարդկության երջանկության հզորաշունչ մարդաբե,
 Թափանցեցիր մտքով՝ գալիք հազար տարի ու դարեր:

Եվ երջանիկ ու բախտավոր մարդկությունը սպադա,
 Մինչև վերջին սերունդը իր, արեգակը քանի կա,
 Իր տիեզերք հոգում երբեք չի մոռանա քո մասին,
 Դու կմնաս այնտեղ պայծառ, որպես արև ու լուսին:

ՎԵՐՁԵՐԳ

Երգեր, ես եմ ձեր ստեղծողն ահա,
 Կյանք եմ տվել ձեզ հույզով իմ սրտի,
 Որպեսզի լինեք զիմացկուն, անահ,
 Եվ ջերմ իմ սիրտը ձեր մեջ չցրտի:

Եվ ինչպես փարթամ բնությունը վեհ
 Իր միլիոնավոր արարածներին
 Պաշտպանության բյուր զենքեր է տվել,
 Որ վտանդների չլինեն դերի,

Ես էլ տվել եմ ձեզ լավ կամ թե վատ
 Պաշտպանության զենք—պատկեր ու հանգեր,
 Տվել եմ ձեզ իմ հույզերը առատ,
 Քանի դեռ նրանք իմ մեջ չեն հանգել:

Ապրեցեք կյանքում՝ կարող էք եթե,
 Ինձնից օգնություն չուզեք երբևե,
 Իմ նեղ օրերում օգնո՞ւմ է միթե
 Նա՛ որ ինձ կյանք ու արև է տվել:

1934



მეშვენი





ՀԵՔՅԱԹ ԾԻՐԱԿԻ ՄԱՍԻՆ

1



Երակը կին էր մի ջահել,
Շիրակը գյուղացու մի կին,
Չէր սիրում, չէր ուզում մարդուն,
Իր մարդը ծերուկ էր ու հին:
Դե ջահել մի կին նորահարս
Ո՞նց սիրի մի չոր ծերունու.
Նա չէ, դու, կսիրե՞ս, կառնե՞ս
Մի սմբած, կաշեղեն մարդու:
Շիրակը սիրում էր մեկին,
Առույդ, մի ջահել տղի,
Եռանդով սիրտն ու հոգին լի,
Որ ուզի՝ երկաթներ կծոի,

Որ ուզի՝ արեւներ կկոխ,
Որ ուզի՝ աշխարհը կհոռի,
Կքանդի ու նորը կձուլի:
Եիրակը սիրում էր մեկին,
Առույգ, մի ջահել տղի:

Ծերուկը չդիտեր այդ մասին,
Ծերուկը քնկոտ մի ահել,
Լսել էր հեքյաթներ դատարկ,
Ջրույցներ էր լսել փուչ ու սին:
Աստըծու, աշխարհի, չարքերի,
Դժոխքի, աստանի մասին:
Կարծում էր, թե նա չի ուզի
Դժոխքում խաչի ու եփի,
Ու երբեք ու երբեք ու երբեք
Չի նայի Եիրակը ծուռ ճամբի:
Այսպես էր մտածում էն ահել
Ամուսինը Եիրակի մասին,
Բայց դե նա, դեռատի մի կին,
Իհարկե, ջահելին կուզի:

2

Եվ ահա խոսում են այն մասին,
Թե Եիրակը ամուլ է... չունի...
Որ արդեն անցել է տարին,
Աշխարհը դարձել է նորից,
Հասել է իր աեղը կրկին,
Կանաչը զարթնել է քնից,
Կաքավը երդում է քարին,
Իսկ էնտեղ—հիվանդ է հիմա նա:
Եիրակը տաքություն ունի,
Թոքերը խաչվում են կարծես,
Մարմինը ուռել է ցավից:

— Եիրակը անկար է, փուչ է,
Զբեր է Եիրակը,—ասին:

— Եիրակը ինքն էլ մի բան չէ,
Անպարկեշտ ու լիրբ է,—ասին:
— Ափսոս, ծերունին լավ մարդ է,
Ոսկի է, գոհար է,—ասին:
— Եիրակը առողջ է, լավ է,
Բայց մարդը հիվանդ է,—ասին:

— Ժայռերի շուրթերից ջուր քամեք,
Պատուեցեք կուրծքը ժայռերի,
Եիրակի շուրթերը չորցել են,
Ուրիշ ջուր էլ նրան չի օգնի:
— Եինեցեք ջրանցք մի քարե,
Թող լողա Եիրակն էն ջրում,
Եիրակի մարմինը քար է,
Ուրիշ ջուր էլ նրան չի օգնի:
— Կմեռնի, ափսոս է Եիրակը,
Օգնեցեք, թե սիրում էք նրան,
Կմեռնի, կմնա սիրածը,
Ուրիշ ջուր էլ նրան չի օգնի:

— Ծերունին չի հոգում այդ մասին,
Ծերունին քնկոտ մի ահել,
Կանչեցեք սիրածին Եիրակի,
Էն կայտառ իզիթին ջահել:
Կանչեցեք, թող դնա՝ քանդի՝,
Հավաքի ջահելներին բոլոր,
Քաղաքի բանվորներին ջուռ
Ու բոլոր իզիթներին հանդի:
Կանչեցեք, թող դնան փորեն,
Ջրանցք մի, քարե մի որկոր,
Եիրակի մարմինը նորեն
Կյանք առնի, թարմություն մի նոր:
Ասացեք՝ Եիրակը մեռնում է,
Մարմինը ուռել է ցավից,
Ասացեք՝ թող ելնեն հանդը,
Ջուր հանեն ջրերի բանալից:

Դյանքը կըսա
 Էն ջահելը Շիրակին,
 Զուր կքամի
 Քարերի բիրտ սրտերից,
 Իրեն կտա
 Պայթյունների կրակին,
 Զի վախենա
 Ուժանակի հրդեհից:
 Կհալաքի
 Ընկերներին իր բոլոր
 Ու քաղաքի
 Բանվորներին էն ջահել
 Ու կրոնի
 Կապտի ճամբան էն քարոտ
 Ու կհասնի
 Ախուրյանին էն մոլոր:

Ու հասնում են նրանք,
 Աշխատում են արդեն,
 Մեղունների նման
 Բանվորները առույգ:
 Ու փորում են նրանք,
 Ու կանչում են իրար,
 Ու կանչում են, իրար
 Ճանաչում են նրանք:
 Ու պայթում է ահա
 Քարաժայռը մեկ էլ,
 Ու թռչում են ասես
 Բեկորները վերև,
 Ու իջնում են թափով
 Քլունդները թեթև
 Ու բահերը չափով
 Բարձրանում են վերև:

Եվ հնչում են ուրախ
 Աշխատանքի երգեր,
 Ու լցնում են հողը
 Ու կախվում են ներքև,
 Բարձրանում են նորից,
 Սպասում են կարծես,
 Ու պայթում է ահա
 Քարաժայռը մեկ էլ:

Ծերունին մեռել էր վաղուց,
 Ծերունին քնկոտ մի ահել,
 Շիրակը սպասում էր արդեն
 Իր սիրած իգիթին ջահել:
 Անցել են տարիներ երկու՝
 Անկողին է մաշում Շիրակը,
 Անցել են տարիներ երկու՝
 Քարաժայռ է տաշում սիրածը:
 Լսել է՝ որ պիտի դան շուտով,
 Լսել է՝ որ քիչ է մնացել,
 Լսել է՝ որ էսօր կամ էղուց
 Զրանցքը կբացվի շառաչով,
 Ու ջուրը կհոսի կշկշան,
 Ու իրեն դեպի ջուր կտանեն,
 Ամենքը հրճվանքից կճշան,
 Երբ ջրից ողջ առողջ կհանեն,
 Ու դիտե, որ կդառնա նա էլ
 Ու շուտով հարսանիք կլինի:
 Իր սիրած իգիթին ջահել
 Շիրակը հարադատ կլինի:

Դիտի բացվեն,—ասին,—
 Դռները էն բանտի,
 Ու դուրս թռչի ջուրը,

Բռնի ճամբան հանդի,
 Որ գյուղերը խնդան
 Ու հյուղերը բոլոր,
 Ու սրահերը թնդան
 Ու չմնան մոլոր.
 Պիտի բացվի,—ասին,—
 էն ջրանցքը հսկա,
 Որ Շիրակը իրեն
 Առողջ ու լավ դղա,
 Ասին՝ երբ որ ուժգին
 Օղը ուրախ թնդա,
 Թնդանոթը ահեղ
 Երբ որոտա, խնդա,
 Հանդի ճամբով, ուրախ
 էն ջրանցքը կղա,
 Որ Շիրակը իրեն
 Առողջ ու լավ դղա:



Խոնքովում է բանտի դռան
 Բաղմությունը անհամբեր.
 — Գնա, քամի, դեպի ջրանցք
 Ու Շիրակին համբավ բեր:
 Սպասում են պայծառ ժամի
 Թնդանոթին. էն ահեղ:
 — Ահա համբույր, գնա, քամի,
 Տուր սիրածին էն ջահել:

7

Եվ պայթում է ահա,
 Որպես սրտի կարոտ,
 Հորիզոնի վրա
 Թնդանոթի որոտ:
 Զուրը կանչով զվարթ,

Կտրում է ճամբաներ,
 Ժպտում են հանդ ու արտ,
 Յնծում են բյուր սրտեր:
 Եվ նետվում են ահա
 Թեժ գնդակներ կրկին,
 Կարծես երկրի վրա
 Կախված մութ ամպերին,
 Ու շաչում է ջուրը,
 Շառաչում է ուժգին,
 Եվ ուռչում է կարծես,
 Ոլորում է ուղին:
 Ու դառնում են նրանք
 Հաղթանակով մարտից,
 Որպես աշխույժ, կայտառ
 Հնձվորները արտից.
 Հավաքվում են էն հուր
 Արևի տակ ոսկի,
 Սպասում են կարծես
 Ջահել հարսի խոսքի:
 Ու Շիրակը ահա
 Լողանում է էնտեղ,
 Լողանում է էնտեղ,
 Սպասում է մեկին,
 Ու Շիրակը կարծես
 Հարբած լինի էնտեղ,
 Դեհ, Շիրակը ջահել՝
 Արծաթ գոտին մեջքին:

Եվ սիրածին ահա
 Մոտ են բերում չուտով
 Ու քրտինքը ճակտին
 Հարսնիք անում փութով,
 Ու սիրածին ջահել
 Մոտ են բերում, ասում՝
 Ահա Շիրակը քո
 Հիմա քեզ է հասնում:

Ու չաչում է ջուրը,
Շառաչում է ուժգին,
Եվ ուռչում է կարծես,
Ոլորում է ուղին:

— Շիրակի աչքը դուրսը չի,
Հղի է Շիրակը,—ասին:
— Շիրակը ահելից է հղի,
Բայց մարդը չիմանա,—ասին:
— Այ հողս, քնկոտի՞ց էն հին,
Որ քայլել չդիտեր,—ասին:
— Շիրակը նամուսով մի հարս է,
Մի հարս է՝ ոսկեվարս է,—ասին:
— Շիրակի մարդը հղոր է,
Հղոր է, անահ է,—ասին:
— Որ ուղի՝ կկտի, կձուլի
Երկինքը երկրի հետ,—ասին:
— Որ ուղի կխառնի, կհրւղի,
Ու կարգեր կքանդի,—ասին:
— Որ ուղի, կքայլի աներեր,
Աշխարհը—հողադուները ուսին:

Շիրակը կին է մի ջահել,
Մի ջահել, բուլշևիկ տղի,
Ու արդեն վաղուց է ծնել
Ոսկեչող բերքը իր հողի:
Ծնել է և մի լույս տղա,
Որպես մի պայծառ արեգակ,
Որ լույս տա, հեա, շողշողա,
Ու փայլի ջրերի կանչի տակ:

1925

ԼԱՎ ՕՐԵՐԻ ՀԱՅՍԻ

1

Հազար կեծի ունեի հոր ճակատը նրա,
Արեախաչ դեմքին ժպիտ չկար բնավ,
Հույսը դրած իրա բազուկների վրա,
Նրա կյանքը՝ ծովում հուսակառուր մի նավ:

Որդին դեռ պատանի, տասչորս դարուն տեսած,
Բազում սոված օրեր ու տանջանքներ հողու,
Դառնություն ու զրկանք հոր հետ հալալ կիսած:
Ո՞ր էր դժվանք ու կյանք ծնողի և որդու:

Ապրում էին նրանք հետին մի փողոցում,
Որդին, հայրը բռնվոր, մեկ էլ մայրը պառավ,
Իրենց խարխուլ ու հին հողաչեն խրճիթում,
Ուր ուր կյանքը նրանց պատիժ ու մահ գառաղ:

Ուր ուր չկար արև, ուր ուր ծիծաղ չկար,
Ուր կարիքն էր թքում իրենց սև պատերին,
Ուր ձմեռվա բուքին մի կտոր փայտ չկար,
Ու պարում էր բուքը իրենց հին կտուրին:

2

Աչնան ցուրտ քամին է խուլ հեծկտում դրսում,
Մութը արդեն ընկավ, բայց դեռ հայրը չկար,

Պոնալ հին խրճիթում դեռ դողում են, մրսում,
Սպասում են նրանք, մինչև որ հայրը գա:

Մեկը մայրն է պառավ, մեկը որդին ջահել,
Սպասում է մեկը վաղվա դալիք մահին,
Մեկը սիրում է միշտ կյանքին սուրախ նայել,
Ու խորթ լինել կյանքում սնորհալին ու ահին:

Մեկը իր ողջ կյանքում չի խնդացել բնավ,
Քաղցին ու մերկության եղել է միշտ գերի,
Մեկը փրփուր ծովում ափին հասնող մի նավ,
Հուսով է, որ կյանքը լավ օրեր կըբերի:

Սակայն ուշ է արդեն, լուսինը ո՞ւր ելավ,
Դրսում արթուն են լոկ ոստիկանն ու քամին,
Քամին ոստիկանի խուլ սուլոցը բերավ.
— Ինչո՞ւ հայրը չեկավ գիշերվա այս ժամին:

3

Ամուր խփում է նա խրճիթի հին դռան,
Վճռական են նրա հարվածները, հատու.
Ինչ որ մի ուժ այսօր կյանք է տվել նրան՝
Նման է նա կովում հաղթանակող մարդու:

Ահով բաց է անում դուռը՝ կինը նրա,
Ելնում ե հոր դիմաց որդին իր պատանի,
Կարծես ծիծաղում է տանջված դեմքը նրա,
Իսկ զրսում դեռ սուլում, սուրում է մի քամի:

— Ուրախ եղիր, կնիկ, լավ օրեր պիտի դան,
Պիտի կռիվ լինի տիրոջ ու բանվորի,
Պիտի փշրենք չուտով ամեն շղթա, կապանք,
Պիտի պատրաստ լինենք այդ մեծ կովի օրին:

Ու լսում է որդին հիացմունքով, արի,
Ուզում է, որ շուտ գան այդ օրերը եռուն,

Ինքը դուրս գա հոր հետ ու դրոշակ պահի,
Մաս ունենա ինքն էլ այդ մեծ օրից կովում:

4

Այդ պատանու մաքուր ինչե՛ր, ինչե՛ր չանցան,
Ոսկի երազներով ցուրտ խրճիթը լցվեց,
Մինչև հողնած գլխով քեի գիրկը անցավ,
Ու քնի մեջ տեսավ դալիք օրերը մեծ:

Տեսավ թոչում էին գնդակները հրե,
Ռումբեր էին պայթում պալատների վրա,
Մի բռունցք էր կախվել պալատներից վերե,
Այդ բռունցքը կարծես հոր ձեռքն էր իրա:

Տեսավ իրան՝ սիրուն, կարմիր շորերը հագնե՛ն,
Բաղմահազար ջահել աղջիկներ ու տղերք,
Առջևում էր կանդնել ինքը այդ մեծ շարքի,
Լսվում էր շատ խրոխտ ու հաղթական մի երգ:

Սոնարհվեցին իրենք այդ բռունցքի դիմաց,
Ու խոսք տվին լինել նրան միշտ հարազատ,
Այդ բռունցքի նման ամուր ու միացած,
Այդ բռունցքի նման վճռական ու ազատ:

5

Եվ թնդում է դրսում ահեղագոյ որոտ,
Ճայթում են գնդակներ անթիվ ու անհամար,
Զինված դուրս են եկել բանվորները, որանք
Կովում են երկիրը ձեռք բերելու համար:

Դուրս եկավ կովի դաշտ նրա հայրն էլ այդ օրը:
Ոտքից մինչև գլուխ գնդերի մեջ, պտարտառ,
Որդին երկար խնդրեց ու աղաչեց հորը,
Որ իրեն էլ տանի այդ օրը կովի դաշտ:

Բայց խրատեց հայրը ու համոզեց մնալ,
Ասայ՝ պիտի տեղա դնդակներ թաքաւի,
Չբարձրանա կտուր ու փողոց չը դնա,
Փողոցներում լի են այսոր մահ ու սարսափ:

Եվ թնդում է դրսում ահեղագոյ որոտ,
Ճայթում են դնդակներ անթիվ ու անհամար,
Ձինված դուրս են եկել բանվորները, որոնք
Կովում են երկիրը ձեռք բերելու համար:

6

Գնդակներն են վզըում փողոցներում ահա,
Եվ սուրում է ուրախ հոկտեմբերի քամին,
Դուրս է եկել փողոց մի պատանի անահ,
Քւր է գնում արդյոք այս ահուկի ժամին:

Դնում է նա այնտեղ, որ իր հորը գտնի,
Դնում է, որ հասնի այդ արյունոտ կովին,
Դուցե ինքը այնտեղ պիտանի կլինի,
Ջուր կբերի, կօգնի կովող ընկերներին:

Անցնում է ծուռ ու մուռ փողոցներով հետին,
Աւ թեքվում է ահա մի ամայի փողոց,
Աւր դիակներ կային փոված սառը գետնին,
Աւ լավում էր ուժեղ ահալոր մի սուլոց:

— Կանգնիր, ո՞վ ես,— դռնեց սարսափ ազդող մի ձայն,
Աւ մոտեցան նրան երկու զինված մարդիկ,
Նրանք իր հոր նման ունեին հրացան,
Հազել էին հոր պես դեղին անդրաժարտիկ:

Թվաց նրան, թե հոր ընկերներն են նոքա,
Աւ թվաց, թե նրանք ճանաչում են հորը,
Աւ կարծում էր հիմա, որ իր հայրն էլ կգա,
Չվախեցավ, պատմեց համարձակ բոլորը:

— Իմ հայրն էլ ձեզ նման կովող բանվոր է մի,
Նա էլ գնաց կովի լավ օրերի համար,
Ուղում եմ, որ ես էլ այնտեղ լինեմ հիմի,
Ու օգտակար լինեմ այդ մեծ կովի համար:

Այդպես խոսում էր դեռ՝ որոտաց մի ապառախ,
Ու պատանին փովեց պաղ մայթերի վրա,
Ու որոտով կպավ շիկացած մի գնդակ,
Եվ քարերը ներկեց մուգ արյունը նրա:

Այդ փողոցում հողմը մահը երգեց նրա,
Արեւը համբուրեց ճակատը դժգունակ,
Գամին լսեց միայն վերջին ձիւր նրա,
Մեկ էլ կողքի քարը սառը գետնին ընած:

7

Տուն էր դառնում հայրը հաղթանակով արի,
Մուլում էր հողմի հետ նա էլ ուրախ մի երգ,
Աչքը ընկավ հանկարծ արյունոտ մի քարի,
Ու այդ քարի վրա՝ արյունոտված մի ձեռք:

Երբ մոտեցավ քարին՝ հեկեկաց նա բարձր,
Տեսավ արյունաներկ դիակը իր որդու,
Ու կոացավ, դրկեց դորովանքով քաղցր,
Որդուն կրծքին սեղմած՝ հուզված դարձավ նա տուն:

Ուր որ չկար արեւ, ուր որ ծիծաղ չկար,
Ուր կարիքն էր թքում իրենց սև պատերին,
Ուր ձմեռվա բուքին մի կտոր փայտ չկար,
Ու պարում էր բուքը իրենց հին կտուրին:

Դուռը հրեց ոտքով ու ներս մտավ նա տուն
Եվ դիակը դրեց մերկ սեղանի վրա,
Մայրը ճշաց ցավից, դրկեց մեռած որդուն,
Համբույրներով ծածկեց սառած դեմքը նրա:

Հայրը կանգնել էր լուռ, չբխնձրները սեղմած,
Պաշտոն էր, որ լացը տառամներով պահի,
Քամին աղմկում էր դրսում բերանը բաց,
Ու աշխարհին ուրախ ավետիս էր տալիս:

— Լաց մի լինի, կնիկ, եղիր հանդիստ, արի,
Հաղթանակը տարանք այս մեծ օրվա կովում,
Վերջին շապիկն առ, որդուս պառան կարի,
Այս օրվանից կյանքը մեզ նոր բախտ է կոտմ:

Այսօրվանից մեռավ ամեն տանջանք ու մահ,
Հաղար նոր սերունդներ պիտի հիշեն հավետ
Նրանց, որ մահացան, բայց մնացին անմահ,
Մեր որդուն էլ մեռած այդ քաջ բյուրեղի հետ:

1926

ՆԱԽԱՏԻՆՔԸ

Հոգում փոթորիկ էր, աչքերի մեջ՝ զայրույթ,
Նկուն գեմքի վրա մոռյաղեմ գիշեր.
Սիրտը հուսալքման մութ կասկածն էր այրում,
Եվ հոնքերի մութը աչքերին էր իջել:
Եվ զայրույթը որպես անընկճելի դադան
Կրճոտում էր կարծես նրա սիրտը, լավում,
Եվ դառնացած հոգուց տրտունջներով հաղար
Հայհոյանքի, թուրի անձրևներ են թափվում:
Վրդովել է նրան մի հաշվապահ ջնջին,
Միայն հաշիվներ է բարդել նրա վրա,
Անվանել է նրան «գրամաշորթ», «չարչի»,
Եվ նա դառնացած է ամբողջ հոգով հիմա:

Ու տուն մտավ այդպես, հոգին զայրույթով լի,
Առաջ վազեց նրա չորս տարեկան տղան:
Եվ ուրախ կարկաչով փարվեց հոր ոտներին,
Մակայն նա սառնությամբ մի կողմ հրեց նրան:
Տղան լռեց, տխուր նայեց մոր աչքերին,
Իր մանկական հոգում լացը պահած կարծես,
Տղան լռեց, հետո գորովանքը գեմքին
Մայրը համբուրելով երեխային զրկեց.
Նա զգաց իր մարդու զայրույթը կատաղի,
Փոթորիկը զգաց, որ կար նրա հոգում,
Եվ երեխան, կարծես իր վշտից ու ահից՝
Կուչ էր եկել քաղցր իր մայրեկի գրկում:
Իսկ նա սենյակի մեջ չրջում էր դեռ երկար,

Շրջում էր նա լարված մեքենայի նման,
Կովում էր նա իր մեջ որքան հոգում ուժ կար,
Հայհայում էր մտքում սրան-նրան:

Հետո հոգնեց, փովեց մահճակալին իրա
Եվ հայացքը հառեց անորոշ մի կետի.
Վերջալույսի շողն էր դեմի պատի վրա,
Նրա միջից մեկը լուռ նայում էր պատից:
Արկաշան էր, իր հին բարեկամը արի,
Այդ նկարն էր նրա պատից նայում համառ,
Աշխատել են նրանք մեկ տեղ քանի՞ տարի,
Ու միասին կովել ազատության համար...
Եվ լուռ նայում է նա խոհուն այդ նկարին,
Կարծես ափսոսանքով շշնջում է նրան.
— Հիշո՞ւմ ես մեր սրտում ինչ վառ հույսեր կային,
Ի՞նչ երազներ ոսկի, ո՞ւր են նրանք հիմա:
Վերջալույսի վերջին շողքն է պատի վրա,
Արկաշան է նայում հայացքներով խոհուն,
Թվում է, թե նա լուռ նախատում է նրան,
Թվում է, թե նա լուռ ինչ որ բան է խորհում:
Արկաշան է, իր հին բարեկամը արի,
Նա լուռ նախատում է իր հայացքով համառ.
Աշխատել են նրանք մեկտեղ քանի տարի,
Ու միասին կովել ազատության համար:
Եվ մտքերը նրա թափանցեցին հեռու,
Տարիները անցան ու վայրերը ծանոթ,
Մտքերի մեջ ահա կոփվները եռուն,
Մտքերի մեջ՝ պայթող արկեր ու հրքանոթ:
... Ահա գիշեր է մեղմ, արծաթազոծ գիշեր,
Առկայծում են երկնի աչերն աղամանդե,
Իր բարձունքից լուսինն արդեն վար է իջել
Ու ողողել լույսով քաղաքներ ու հանդեր:
Ճնշող լուսթյան մեջ նիրհում է մի քաղաք,
Քարացել է կարծես այդ քաղաքը ահից,
Եվ գիշերում խաղաղ՝ թևտտարած ահա
Սովառնում է կարծես ոտը չունչը մահի:

Մի մութ պատուհանից, նեղլիկ, մռայլադեմ,
Եվ ճաղապատ, խորունկ դերեզմանի նման,
Լուսնի շողերի տակ դուրս է նայում մի դեմք,
Արմունկներով հենված ցուրտ ճաղերի վրա:
Նա սուլում է կամաց: Եվ սուլոցը նրա
Ծանր մտքերն առած տարածվում է հեռու,
Եվ գիշերվա ճնշող լուսթյան մեջ ահա
Այդ սուլոցի թախծոտ հնչյուններն են հեռում:
Եվ քաղաքի խաղաղ կառուրների վրա
Թվում է, թե թեղ-թեղ բղկավում է մի սիրտ:
Թվում է, թե մռայլ մի անձրևոտ օրվա
Տխուր հոգմն է սուլում մուգ կիթճերի միջից:
Նա սուլում է: Եվ մեղմ հնչյունները երգի
Նրա կյանքի ամբողջ պատմությունն են անում,
Նա սուլում է, և այդ դուցե նրա վերջին,
Վերջին ցանկությունն է այս լայն, հին աշխարհում:

Հետո լռեց: Հետո... Ահա շուռ եկավ նա,
Էլ չկա նա արդեն պատուհանի դիմաց,
Եվ լուսինն է սառած հայացքներով իրա
Ողողել այդ փոքրիկ պատուհանը դեռ բաց:
Դուրս բերեցին նրան չորս զինվորներ մռայլ,
Ու քայլում է նա լուռ նրանց միջով ահա,
Հետևում է նրանց ստվերը քայլ առ քայլ,
Գրնում է առջևից մի սպիտակ սպա:
Ջրնդում են նրա խթանները փայլուն,
Ջրնդում են, ու նա լուռ շարժվում է առաջ,
Եվ այդ զրնդոցը թախիծով մի անհուն՝
Հնչում է մեղմ, որպես մահվան զանգի դողանջ:
Իսկ նա քայլում է լուռ, գլխահակ ու արտում,
Ոտքի տակ տնքում է քարոտ մի ճանապարհ,
Քարը սիրտ չեր՝ դդար ինչ ուներ նա սրտում,
Ընկերներին վերջին, վերջին բարևը տար:

Ու կանգ առան նրանք: Ահա եկեղեցին,
Պավար գիշերվա պես խորհրդավոր նստած,
Նրա վրա խաչը՝ արնածարավ մի ցին,

Իր բարձունքից ահա մուսլ նայում է ցած:
 Ահա բակը: Ահա արծաթադոծ մի լիճ,
 Փարթամորեն կեցած կանաչ խնձորենին,
 Սուլճրի տակ նրա արյունոտ մի դահլիճ,
 Որ լուռ սպասում է ահա հրամանի:
 Եվ ոճի պես սառը պարանի մի կտոր
 Խնձորենու ճյուղից ահա կախվել է ցած,
 Եվ երկինքն անհուն լուսթյան մեջ անդորր,
 Որպես լույսի հալվածք ջինջ մի ասուղ ծորաց:
 Սպան նշան արավ: Եվ դահլիճը մուսլ
 Սռաջնորդեց նրան դեպի խնձորենին,
 Եվ սարդնած լուսնի շողերը դառն, անխալ,
 Ընկան նրա խոհուն ու դժգունած դեմքին:
 Ու բարձրացավ նա լուռ պատվանդանի վրա
 Շուրջը գիշեր, աստղեր, դեմը գունատ լուսին,
 Դահլիճը լուռ կապեց ձեռք ու ոտքը նրա,
 Եվ պարանի օղը պցեց նրա վզին...
 Ահեղ չառաջյունով պատվանդանը ընկավ,
 Ու լուսինը վերից նայեց տխուր, մոլոր,
 Խնձորենու ճյուղը իջավ ու վեր ելավ,
 Սրսիացին ծառի տերևները բոլոր...
 Խնձորենու ճյուղը իջավ ու վեր ելավ,
 Երկու տերև պցեց կանաչ խնձորենին,
 Երկու կանաչ տերև՝ արցունքների նման,
 Եկեղեցու բակի մամուռ, ցուրտ քարերին:

Իսկ նա օրորվում է ծնոտն հենած կրծքին,
 Օրորվում է մահվան խորունկ նիրհով ահա,
 Եվ աստղերը՝ կանաչ տերևների միջից
 Լույս են սփռում նրա սառ դիակի վրա:
 Եվ նայում է մուսլ հսկա եկեղեցին,
 Խավար գիշերվա պես խորհրդավոր նստած,
 Ու վրայից խաչը, որպես սոված մի ցին,
 Իր բարձունքից ահա ադահ նայում է ցած:

.

Վերջալույսի շողն է դեմի պատի վրա,
 Նրա միջից մեկը նայում է լուռ, խոհուն,
 Թվում է, թե նա լուռ նախատում է նրան,
 Թվում է, թե նա լուռ ինչ որ բան է խորհում:
 Մրկաչան է, իր հին բարեկամը արի,
 Այդ պատկերն է նրա պատից նայում համառ,
 Աշխատել են նրանք մեկտեղ քանի տարի,
 Ու միասին կռվել կոմունիզմի համար...
 Եվ նայում է նա լուռ: Ու կյանք առած ահա
 Նա հեղնում է կարծես ու աչքերը թարթում,
 Ու կարծես թե խոհուն հայացքներով իրա
 Նա ընկերոջ կծու նախատինք է կարդում:
 Նա ասում է — տեսա՞ր կանաչ խնձորենին,
 Տեսա՞ր ողում ճոճվող իմ դիակը սուռած:
 Սակայն ոչ մի տրտունջ չիջավ իմ շուրթերին,
 Մեռնում էի՝ աչքս հաղթանակին հառած:
 Ու մեռա ես, ինձ պես հաղարները ընկան,
 Ընկան հաղարները, անդերեղման, անթաղ,
 Նրանց սրտում սակայն ոչ մի տրտունջ չկար,
 Կռվում էին նրանք աներեր ու անվախ:
 Իսկ քեզ վրդովել է վարձկան մի հաշվապահ,
 Զրկել է քեզ ինչ որ կոպեկներից չնչին,
 Եվ դու, ողորմելի՛, մորթապաշտի նման
 Նահանջել ես ուղում մեր մարտերից վերջին:

... Խնձորենու ճյուղը իջավ ու վեր ելավ,
 Սրսիացին ծառի տերևները բոլոր,
 Երկու կանաչ տերև՝ երկու արցունք ընկավ...
 Ու նայում է դեմից իր ընկերը մոլոր...
 Ու նայում է դեմից իր ընկերը մոլոր,
 Օրորվում է օղում և նայում է նրան,
 Եվ օսկեվառ վաղվա երազներով բոլոր
 Դուք թևատարած իջավ նրա վրա:

Լուսաբացին նորից վառ լուսաստղը շողաց,
 Հեռո դժգունեցին աստղերն ադամանդե,
 Արեգակը կարծես անկողնից դուրս օղաց,

Ու կյանք առան կրկին քաղաքներ ու հանդեր :
 Եվ քաղաքի բոլոր կտուրների վրա
 Հնչեց զվարթաձայն մի աղմկոտ համերգ,
 Այդ սուլիչներն էին, ձայնակցելով իրար,
 Կանչում էին կարծես — ելեք, ելեք, ելեք...
 Ու արթնացավ նա էլ. կայտառ, զվարթաձայն
 Մի երգ պահած իրա շրթունքների վրա,
 Ու կուցցավ կամաց մահճակալին մանկան,
 Անուշ նիրհը այնտեղ օրորում էր նրան :
 Երկու համբույր թողեց վարդ այտերին մանկան,
 Գորովանքի մի շող փռեց դեմքի վրա,
 Ու գործարան դնաց լարած ուժ ու մկան,
 Իր մեքենան այնտեղ սպասում էր նրան :
 Ու ներս մտավ ահա : Եվ ողջունեց նրան
 Գործարանի զվարթ աղմուկը միալար,
 Մեքենաներն այնտեղ երգում էին համառ
 — Կոմունիզմի համար, կոմունիզմի համար...

1933

Պ Ա Յ Ա Կ Ը

— Այ լեզուդ պապանձվի հայ—ձայն
 ավեց էն կողմից որսկան Օսեփը
 — Այ տղա, ընչի՞ ես էդպես ասում,
 ինչ մի փաս բան ա երկաթուղին
 Հովն. Թումանյան

Ձեր հին ձորերով անցա ես, վարպետ,
 Տեսա ժայռեր ու քերձեր վիթխարի,
 Անտառից փչող զեփյուռների հետ
 Դե—Ֆեղը երգով ալիք էր տալի :
 Տեսա Լոռեցի որսկան Օսեփին,
 Որքա՞ն, որքա՞ն էր փոխվել նա, վարպետ,
 Դե—Ֆեղի զուլալ ջրերի ափին
 Կանգնած էր նա իր մանուկների հետ :
 Այն հնամենի փափախն էր գլխին,
 Հին տրեխները, որ ուներ առաջ,
 Բայց չէր անիծում նա երկաթուղին,
 Բռնել էր ձեռքին լապտերը կանաչ,
 Որ շոգեքարչը սուլի համարձակ,
 Դղրդան Լոռում անտառ ու ձորեր :
 Որսկան Օսեփի ահել կրճեքի տակ
 Այն հին սարսափը վաղուց է կորել :
 Ձեր հին ձորերով անցա ես, վարպետ,
 Տեսա ժայռեր ու քերձեր վիթխարի,
 Անտառից փչող զեփյուռների հետ
 Դե—Ֆեղը երգով ալիք էր տալի :

Ունենա անտեսող փայտաշեն մի տուն,
 Մի աղջիկ ունենա ու երկու տղա.
 Ռեւսերի վրա հսկում էր արթուն,
 Գծի պահակ էր կոչումը նրա:
 Կարմիր ու կանաչ դրոշներ ունեն,
 Կարմիր ու կանաչ լապտերներ սիրուն,
 Շրջում էր նա միշտ դժով վար ու վեր,
 Գնացքը դալիս՝ դըրոշ էր պահում:
 Գնացքը դալիս դըրոշում էին
 Ու կենդանանում ձորերն այդ ամա,
 Եվ կանաչ դըրոշ բռնած իր ձեռին՝
 Նա կանգնում էր մինչ դնացքն հեռանա:
 Իսկ երբ հոգնում էր կամ թե ձանձրանում,
 Նստում էր զուլաբ Դե-Բեդի ասիին,
 Դիտում էր՝ մուլթը ոնց է թանձրանում,
 Ու ձորը կախվում ամեն քարափից:
 Իրիկվա մուժում նստում էր նա լուռ,
 Երկինք էր ելնում լուսինն արծաթի,
 Ու դեռն էր թափում հստակ ու մաքուր
 Աստղերի կաթը կաթիլ առ կաթիլ:
 Ու թռչում էին խոհերը նրա
 Մտախի ու հեռու տարիներն անցած,
 Կարծես Դե-Բեդի ջրերի վրա
 Հին կաղնի լիներ խոհուն կռացած:
 Կարծես Դե-Բեդի ջրերի միջով
 Իր ջահել կյանքի օրերն են հոսում,
 Ու ալիքները քաղցր կարկաչով
 Իր օրտի հետ են զրուցում, խոսում,
 Բայց հանկարծ հեռվից փնջալով, խրոխտ
 Մուրում էր հսկա դնացքն արևաչ,
 Նա վեր էր կենում, կանգնում դժի մտ
 Բռնած իր ձեռքին լապտերը կանաչ:

Դուք էր այն դիշեր—ոչ ասող, ոչ լուսին.
 Զորը լցված էր խավարով անհուն,
 Փայտե խրճիթից ճրագի լույսի
 Շուքն էր կայծակտում թանձր խավարում:
 Որոտում էին ամպերն ահարկու,
 Ճայթում, ճարձատում, դըրոշում էին,
 Կայծակն անհունի մեջքն էր մտրակում,
 Ու թնդում էին ձորերը այն հին.
 Ու թնդում էին ձորերը այն հին,
 Թափում էր առատ հորդ տեղաառափ,
 Եվ անձրևի տակ լվացվում էին
 Ու ծեծվում էին քերձեր ու քարափ:
 Գծի երկայնքով, խավարում հեռու,
 Կանաչ մի լույս էր դեղերում անահ,
 Մերթ կորչում էր նա ու մերթ երևում.
 Երբեք սիրուն ասուպի նման:
 Գծի պահակն էր, լապտերը ձեռին
 Հսկում էր ահա դիժը՝ վար ու վեր,
 Լապտերի լույսն էր փռում ու լսերին,
 Իսկ անձրևը հորդ շափշափում էր դեռ:
 Իսկ ամպերը դեռ ոբոտում էին,
 Ճայթում, ճարձատում, թնդում ահարկու,
 Մռայլ անհունի ամպած կողերին
 Ահեղ կայծակն էր թափով մտրակում:
 Բայց հանկարծ հնչեց ահեղ մի թնդյուն,
 Փուլ եկան մթնում լեռները կարծես,
 Երկիրը ցնցվեց, կարծես ընդերքում
 Վառողի հսկա ահեղ լեռ պայթեց:
 Ու արձագանքը ահեղ թնդյունի
 Անցավ ձորից ձոր, թնդաց լեռից լեռ,
 Ու կորավ խորքում հեռու անհունի,
 Իսկ անձրևը հորդ շափշափում էր դեռ:
 Վաղում էր կանաչ լապտերը ձեռին
 Գծի պահակը հուզված, ահաբեկ.

— Ասես ի՞նչ եղավ հիմա զձերին—
 Լուռ մտմտում էր նա իր հոգու հետ:
 — Ասես ի՞նչ եղավ... — Ու վազում էր նա
 Անձրեկից ծեծված, թրջված, ծանրացած,
 Բայց ներքին մի ուժ մղում էր նրան
 Գծի երկայնքով՝ շտապ դեպի ցած:
 Վազում էր... Հանկարծ կանգ առավ սառած,
 Լապտերի կանաչ լույսի տակ աղոտ՝
 Ահադին մի ժայռ, լեռներից պոկված,
 Ընկած էր գծին, իր ոտների մոտ:
 Լեռներից պոկված ահադին մի ժայռ,
 Մահվան պես դաժան նստած ռեսերին,
 Շուրջը ամայի քարափներ ու ծառ,
 Եվ մթին դիշեր — ոչ աստղ, ոչ լուսին:
 — Հիմա ի՞նչ անի, գնացք պիտի դա—
 Ու կանգնած տեղը շվարեց ահով—
 Կգա ակները քարովը կտա,
 Ձորը կլցվի արյունով, մահով:
 Ու թվաց նրան՝ գիշերվա մթնում
 Հսկա գնացք է խորտակվում ահա,
 Ու հազար դիեր Դե-Բեդն են թափվում,
 Օրորվում նրա ջրերի վրա:

Բայց հանկարծ, ինչպես կայծակը մթնում
 Փայլատակում էր անտառ ու ձորեր,
 Լուսավոր մի խոհ շողաց իր մտքում,
 Իսկ անձրեկը հորդ շափշափում էր դեռ:
 Իսկ ամպերը դեռ որոտում էին,
 Ճայթում, ճարճատում, թնդում ահարկու,
 Մռայլ անհունի ամպած կողերին
 Ահեղ կայծակն էր թափով մտրակում:
 Վազեց նա դեպի խրճիթը իրա,
 Անձրեկից ծեծված, հուզված, ահաբեկ,
 Կարծես մտքերը խիզախ ու անաչ
 Մարտնչում էին նրա հոգու հետ:

Նստած փայտաշեն խրճիթի խորքում,
 Ճրագի լույսով դժգույն ու աղոտ,
 Պատանի որդին իր դասն էր կարդում,
 Կնացած պառավ իր մոր ծնկան մոտ:
 Երկու փոքրերը— աղջիկ ու տղա,
 Նիրհում էին լուռ մի թախտի վրա,
 Իսկ պառավ մայրը դողդոջ ու երեք,
 Լուռ կարկատում էր շորերը իրա:
 Իսկ անձրեկը դեռ ծեծում էր դրսում,
 Ծեծում էր անվերջ ծածկ ու լուսամուտ:
 Դուռը ճռնչաց. խրճիթի շեմքում
 Երևաց ծեր հոր կերպարանքը մութ.
 Ներս մտավ շտապ, ոնց երկնից պոկված
 Անձրեկող ամպի կախված մի քուլա,
 Շորերից ջուրը կաթկաթում էր ցած՝
 Փայտաշեն իր տան հատակի վրա:
 — Գիրքը թող, որդի, գնա Սանահին... —
 Ու վառեց շտապ մի կարմիր լապտեր,—
 Ասա՝ թող պետք գնացքը պահի՝
 Թե կայարնից դուրս չի եկել դեռ:
 Մայրը սարսափեց. իսկ որդին տրտում,
 Տեսնելով իր հոր դեմքը վշտահար,
 Վեր կացավ տեղից, անխոս, անձպտուն,
 Լապտերը առավ, ընկավ ճանապարհ:
 — Վեր հանիր դու էլ երեխաներին,
 Շուտ արա, կնիկ, ժամանակ չկա,
 Աժդահա ժայռ է ընկել ռեսերին,
 Հիմա ուր որ որ է գնացքը կգա:
 Իսկ նա վառում էր կարմիր լապտերներ,
 Ու ինքը իրեն շշնջում ահով.
 — Կգա ակները քարովը կտա,
 Ձորը կլցվի արյունով, մահով:

 Ռեսերի վրա երկու մանուկներ,
 Ջեռների կարմիր լապտերներ պահած,

Գնացքի ճամբին սպասում են զեռ,
 Հորդ անձրևի տակ, քունները կտրած:
 Իսկ այնտեղ հեռվում, դժով դեպի վեջ,
 Վազում է արագ մի կարմիր կրակ,
 Ռելսերի վրա երկու մանուկներ,
 Խավար ձորի մեջ, հորդ անձրևի տակ:
 Իսկ ծնողները մարտնչում էին
 Նրանցից ներքև, հսկա ժայռի հետ,
 Որ մահի նման նստել դժերին,
 Համառում էր զեռ ու չէր դառնում ետ:
 Ռելսերի վրա երկու մանուկներ,
 Ջեռներին կարմիր լապտերներ պահած,
 Իսկ անձրևը հորդ շափշափում էր զեռ,
 Ծեծում, հեծեծում, թրջում էր նրանց:
 Իսկ ամպերը զեռ որոտում էին,
 Ծայթում, ճարճատում, թնդում ահարկս,
 Մռայլ անհունի ամպած կողերին
 Ահեղ կայծակն էր թափով մտրակում:

4

Հանկարծ զիչերվա մթնում ահուկի,
 Որպես վերափոր դադանի ոռնոց,
 Կարծես մահադուժ սարսափներով լի,
 Հնչեց գնացքի թախծառ ծղրտոց:
 Ահով լցվեցին ձորերը կարծես,
 Գնացքի կանչը կրկնվեց ահա,
 Դողացին անող թռչունների պես
 Երկու մանուկներ դժերի վրա:
 — Ասես կարո՞ղ է գնացքը պահի...
 Ասես տեսնո՞ւմ է լույսերը կարմիր...
 Գծի պահակը երկյուղից, ահից
 Կարծես մոռացավ անելիքը իր:
 Իսկ գեմից հսկա վիշապի նման
 Գնացքն էր ահա ֆլալով սողում,
 Եվ ահեղադու թնդյունից նրա

Ապառաժներն ու ժայռերն են դողում:
 Ու մոտենում էր զույգ աչքերով վառ,
 Ընթացքը նրա չէր դանդաղում զեռ,
 Ու դժի վրա դիակի պես սառ:
 Դեռ կանգնած էին երկու մանուկներ:
 Բայց ահա կարծես դանդաղում է նա,
 Շարժաթևերը դառնում են կամաց,
 Ու դալարվելով, սողալով ահա
 Գծի վրայով նա սահում է ցած:
 Իսկ անձրևը հորդ շափշափում էր զեռ,
 Իսկ ամպերը զեռ որոտում էին,
 Ու դողում էին երկու մանուկներ
 Կարմիր լապտերներ բռնած ձեռներին:
 Գնացքն ավելի դանդաղեց կարծես,
 Էյ չունեք նախկին թափը սրընթաց,
 Ու հողնած, անքուն ուղեորի պես
 Կանդ առավ կարմիր լույսերի դիմաց:
 Մեքենավարը քրտնած, ահարկի,
 Իր շողեքարչից շտապ թռավ ցած,
 Գծի պահակի ահել սրտի հետ
 Ահուկի ձորը խնդությամբ թնդաց:
 Ու մթին ձորի թանձր խավարում
 Մեքենավարը փաթաթվեց նրան,
 Եվ հուզմունքով լի, ջերմությամբ անհուն,
 Նրանց չուրթերը միացան իրար:
 Իսկ ամպերը զեռ որոտում էին,
 Իսկ անձրևը հորդ շափշափում էր զեռ,
 Ու կարմիր լապտեր բռնած ձեռներին՝
 Լուռ նայում էին երկու մանուկներ:

Ձեր հին ձորերով անցա ես, վարպետ,
 Տեսա ժայռեր ու քերձեր վիթխարի,
 Անտառից փչող զեփյուռների հետ
 Դե-Բեզը երգով ավիջ էր տալի:

Տեսա Լուսնի որսկան Օսեփին,
Որքա՛ն, որքա՛ն էր փոխվել նա, վարպետ,
Դե-Ֆեդի զուլալ ջրերի ափին
Կանգնած էր նա իր մանուկների հետ:

1934

ԳԵՂԱԿՈՒՅՈՒ ԵՐԱՅԸ

Լսեք պատմե՛մ՝ էս գիշեր
Էն ի՛նչ երազ տեսա ես,
Էն ի՛նչ խինդ էր էս գիշեր
Միտա վառել բոցի պես:
Տեսա՝ ես եմ, մեր Ջարեն,
Կուկիտիվի արտերում,
Անծե՛ր, դեղի՛ն արտերում,
Քաղում էինք մենք ցորեն,
Հովն էլ հեռվից, շա՛տ հեռվից,
Թեթե մի ձեն էր բերում
Ու արտերը օրորում:

Միտա լցվեց: Մեր Ջարեն
Ասաց.—Նանի, հրեն տես
Ո՞վ է գալիս դեպի մեզ՝
Օրորելով հասկերի
Ալիքները ոսկեդեզ:
Նայե՛մ՝ ճիշտ որ արտերով
Կամաց գալիս է մի մարդ,
Մեկ նայում է արտերին,
Մեկ երկնքին կապուտակ,
Մեկ մեր բարձր սարերին,
Մեկ ամպերին սպիտակ:
Գալիս է նա ու նայում,
Ձեռքով անում դեպի մեզ,
Մեկ մոտիկ է երևում,

Մեկ հեռանում է ասես:
 Էդպես դանդաղ քայլերով,
 Դալիս է նա ու դալիս,
 Ու ամեն տեղ սարերը
 Նրան դուրս են տալիս,
 Ու ամեն հասկ, ամեն թուփ,
 Դաշտի ամեն մի շուշան,
 Հալաքվում են ու խումբ-խումբ
 Լուռ լսարևում են նրան:

Ու դալիս է հասնում մեզ:
 Կանգնում է նա, նայում լուռ,
 Սիրտս խփում է ամուր,
 Ուզում եմ ձեն տալ նրան,
 Ուզում եմ, բայց... լեզուս լուռ,
 Խոսք չի դոնում ասելու:
 Ու ճչացի.— Լենին ջա՛ն...
 Վախ, մեռնեմ քո անունին,
 Քո ոտներին ես դուրբան,
 Եկած ճամբիդ ես դուրբան,
 Քո շնորհքին ես դուրբան...
 Ասում, ծնկիս եմ տալիս,
 Ու Զարեն էլ խնդումից
 Ծիծաղում է ու լալիս...

— Հողնա՞ծ ես դու, Լենին ջա՛ն,
 Շողել հո չե՞ս, Լենին ջա՛ն,
 Ծարավ հո չե՞ս, Լենին ջա՛ն...
 Բայց Լենինը չի խոսում,
 Նայում է մեզ ու լսում:
 — Գնամ քեզ սառ կաթ բերեմ,
 Գնամ ցորեն հաց բերեմ,
 Գնամ կաթի սեր բերեմ,
 Գնամ մի լիքը կողով
 Խնկի պես խաղող բերեմ:

Ասում, նայում էմ նրան,
 Մեկ էլ, հոնքերի տակից՝
 Ժպտում է նա ասես ինձ,
 Ասես սրտի խնդության
 Լույս է կաթում երեսից,
 Ասես թե ողջ աշխարհը
 Խնդությունն է տալիս ինձ:

Էդպես ժպտում է երկար,
 Ու կատակում է սրտանց.
 — Քեզ ո՞րտեղից կաթը սառ,
 Քեզ ո՞րտեղից ցորեն հաց,
 Քեզ ո՞րտեղից կաթի սեր,
 Խաղողով լի կողովներ...
 Ու նայում է աչքերիս.
 Ու ծիծաղում է կամաց.
 Բայց ծիծաղի տակ հանկարծ՝
 Նրա սիրտը մղկտաց.

— Կույեցինք մենք շա՛տ երկար.
 Որքա՛ն զոհեր տվինք մենք,
 Քանի՞ կյանքեր քաջարար
 Կուլում ընկան արնաներկ:

...
 Եվ նրան եմ հիշում ես,
 Քո ամուսնուն, որ ընկավ,
 Վառվում էր նա բոցի պես,
 Վառվեց, կույեց ու հանդավ.
 Ու դույզ ուրբով քեզ թողեց
 Սովա՛ծ, տկո՛ր, մահամերձ...

Ու մենք, ես ու մեր Զարեն,
 Լաց ենք լինում անդադար,
 Լաց ենք լինում, բայց կարծես
 Մեր սրտերում վիշտ չկար:
 Իսկ նա պատմում է երկար...
 Մեկ էլ հանկարծ խնդությամբ

Փայլեց հայացքը պայծառ.
— Բայց հաղթեցինք մենք կովում.—
Ասում, բռունցքն է սեղմում,
Նայում է ինձ, Ջարեին,
Ու աչքերից խնդովյա՜ն
Ճառագայթներ է քամում:

Ուրախանում է Ջարեն.
Ուրախանում եմ և ես.
Ու լենինը խնդալեն
Դառնում, ասում է էսպեռ.
— Երեկ, բարձր երկնքում,
Տեսա խիղախ քո որդուն.
Նա օդանավ էր վարում
Սովառնելով ջինջ օդում.
Տեսա ու սիրտս խնդաց,
Հիշեցի հորը նրա,
Եվ ձեր օրերը սոված
Մռայլ ճամբեքի վրա:
Տեսա և քեզ, Ջարեին,
Տեսա, փոխվե՛լ եք որջան,
Եվ դեռ որջա՛ն ավելի
Պայծառ օրեր պիտի դան...

Ասաց, Ժպտաց խինդով լի,
Ժպտաց... Ու մեկ էլ չկար,
Ձուլվեց ասես հասկերի
Ալիքներին հողմավար:

Ու մեկ էլ ես տեսա էն՝
Կանգնած ենք ես ու Ջարեն,
Մեր դեմ արտերն են հասուն,
Ու հովերը մեղմորեն
Հասկերի հետ են խոսում.

Կանգնած ենք մենք ու մեկ էլ
Ձեռք զգացի իմ ուսին:

Շուռ պամ՝ որ մեկը եկել,
Նայում է մեր երկուսին՝
Ուրախ ծիծաղ երեսին...
Նայում եմ ու ճանաչում.
Ջարեն փարվում է նրան,
Ես էլ անունն եմ կանչում.
— Ստալին ջա՛ն, ախպեր ջա՛ն...
Խնդովյուն եմ դարձել ես.
Սիրտս խփում է արագ.
— Մեռնեմ բոլիշ, մեռնեմ քեզ...
Իսկ նա ասում է.— Գնանք.
Մեզ հետ քայլում է առաջ,
Դեմն էլ էն ի՛նչ ճանապարհ,
Ի՛նչ ծաղիկներ, ի՛նչ կանաչ,
Ի՛նչ պարտեզներ անհամար...
Ստալինն էլ հայրաբար
Նայում է մեզ խինդով լի,
Ետեից էլ անհամար
Բաղմովյուններ են դալի
Պմեն ազդի ու դույնի:

Հետո ասում է հանդարտ.
— Կանաչ սարն ենք դնում մենք,
Որ չի տեսել ոչ մի մարդ
Աշխարհի մեջ դեռ երբեք.
Երջանկովյան սարն է նա,
Կանաչ սարն այդ դեղեցիկ...
Ու այդ խոսքերի վրա
Բաղմովյուններն երգեցին:
Երգում էին բաղմազան
Լեզուներով ներդաշնակ,
Երգում էին նրան փառք,
Երգում էին նրան սեր,
Երգում էին նրան կյանք,
Պմեն բարիք ու մաղթանք...

Իսկ մենք գնում էինք դեռ,
Գրնում էինք անդադար,
Չորս կողմ կանաչ, ծաղիկներ,
Ու պարտեզներ անհամար,
Եվ նայում էր դիմացից
Մեղ մի չքնաղ, կանաչ սար...

1937

Ք Ա Ղ Ղ Ե Կ Ը

1

Վճիռը որոշ էր, վճիռը մեկին.
Կանչել է ղինկոմը վաչտի քաղղեկին:

Գրված է հրամանը — ահա մի ծրար.
Ճերմակ բանակի մոտ նա պետք է գընար:

Դրված է նրա մեջ կուռ կամքը զորքի—
Վրանդելը պիտի որ երկիրը լքի:

Հանձնի իր դերքերը, թողնի, հեռանա,
Թե չէ կստանա մեր հարվածն անխնա:

Վճիռը որոշ էր, վճիռը մեկին,
Կանչել է ղինկոմը վաչտի քաղղեկին:

2

Եկով նա, ջահել է, հրացանը ձեռքին,
Պատվի է առել նա ընկեր ղինկոմին:

Սրտի բաբախումը դարձել է արագ,
Պայթում են ուռմբերը, արկերը վայրագ:

Նայում է ղինկոմը վաչտի քաղղեկին,
Գզվող մի հմայք կա խրոխտ իր դեմքին:

Աչքերը լեցուն են սիրով անսահման,
Սիրով այդ զինկումը նայում է նրան:

— Կարո՞ղ ես — ասում է — ծրարն այս շտապ
Հանձնել թշնամուն մեր, տանել այն՝ շտապ:

Տեսնո՞ւմ ես, թափում է կրակ թշնամին,
Տեսնո՞ւմ ես, կրակն է չրջում ոնց քամին:

Տեսնո՞ւմ ես, չորս կողմը փռում է նա մահ,
Կարո՞ղ ես տանել այս ծրարը հիմա:

— Պատրաստ եմ — ասում է քաղղեկն անվարան,
Հպարտ իր հայացքը հառում է նրան:

Նայում է զինկումը, խրոխտ իր հոգում,
Ասես հիացման վառ վարդեր են ծաղկում:

Ասես թե թախծում է թաղուն իր հոգին,
Ասես զնդակված է տեսնում քաղղեկին:

— Դիտցիր, կսպանի քեզ դաժան մի զնդակ,
Թե՛ դու, թե՛ ծրարը ճամբին կըմնաք:

Տեսնո՞ւմ ես կրակը դարձավ բորբոքուն,
Կընկնես դու մենակ ու ... չկա փրկություն:

— Պատրաստ եմ — ասում է քաղղեկն անվարան,
Պատիվ է մեռնելը հանուն հաղթության:

Վառվում է զինկումը, աչքերն են վառվում,
Սիրով լի աչքերը նրան են հառվում:

Գրկում է զինկումը, ժպտում է կրկին,
Ճամբու է գցում նա հերոս քաղղեկին:

Գնում է քաղղեկը նստած նոսրեղին,
Անցնում է, ճամբեքը դուրսում է ուժգին:

Թնդում, որոտում են թե արև, թե զնդակ,
Շնչում է ճամբան այն մահով դժնդակ:

Թռչում է նոսրեղը, հեծյալն է թռչում,
Բրտինքը ձիու սև բաշերն է թրջում:

Երկինքը ամպած է, արթուն է քամին,
Անդուլ կրակում է դեռ սև թշնամին:

Ու այդ կրակի տակ, նստած նոսրեղին,
Գնում է հեծյալը, դուրսում է ուժգին:

Եվ նա անձնատուր իր խորունկ մտքերին՝
Թվում է տեսնում է ահա զինկումին:

Թվում է կանգնած է նա դեմ հանդիման,
Անթարթ իր աչքերը նայում են նրան:

Թվում է թախիծ է իջել ջինջ դեմքին,
Գուցե ափսոսում է դժբախտ քաղղեկին:

Գուցե համարում է մեռած նա նրան,
Ու խորը թախիծ է իջել իր վրան:

Գնում է հեծյալը նստած նոսրեղին,
Անցնում է ու սիրտը խփում է ուժգին:

Հանկարծ որոտում է մոտերքը մի արև,
Որոտը գառնում է հեռվում արձագանք:

Թնդում է երկրորդը, երրորդը... հանկարծ
Խրոխտ այն քաղղեկը գետնին է ընկած:

Աչքերը մթնում են, դժգուշն է դեմքով,
Շնչում է արագ նա, շնչում է հեքով:

Կապույտ են շուրթերը ու դեմքն է հողատ,
Ասես քարացել են թե ձեռն և թե ոտ:

Արդեն կիսամութ է, արթուն է քամին,
Անդուլ կրակում է դարձյալ թշնամին:

Բացում է աչքերը, նայում է չորս կողմ,
Շոյում է իր դեմքը աչնան ցուրտ մի հողմ:

Արագ նա նստում է, նայում է վրան,
Ոչ վերք կա և ոչ ել հետքեր կան արյան:

Ընկել է նժույզը այնտեղ, քիչ հեռու,
Տնքում է ինչպես մի խփած եղջերու:

Ելնում է քաղղեկը, նայում է նրան,
Հեռում է նժույզը սևուկ, նրբիրան:

Թեքվում է ձիուն նա, տխրում է անձայն,
Քամու դեմ ձիու սև բաշերն են ծածան:

Հանդավ իր նժույզը, մարեց ոնց կրակ,
Գնում է քաղղեկը, դնում է մենակ:

Արդեն թանձրացել է գիշերը խավար,
Մթնում թշնամու նենդ արկերն են դեռ վառ:

Գնում է քաղղեկը, չորս կողմը կրակ,
Գնում է ոտքով նա, դնում է մենակ:

4

Արթուն են դեմքերը ձերձակ բանակում,
Ամպերը մթնում լուռ արցունք են թափում:

Դաշտին լուսարձակը հսկում է անթարթ,
Դայլի աչքերի պես փնտրում է նա մարդ:

Նայում են դեմքերը լույսի շողի հետ,
Տեսնում են դաշտի մեջ շարժուն մի սև կետ:

Քայլում է խիղախ նա, քայլում է անահ,
— Այն ո՞վ է մթնում, որ դալիս է ահա:

Գերված մեր զինվորն է փախել թշնամուց,
Սպա՞ է արդյոք, որ կորել է վաղուց:

Խորհում են դեմքերը ու չեն կրակում,
Նայում են նրանք լուռ, նայում են թաղուն:

Արդեն մոտենում է, հասնում է արդեն.
— Կանչելի՛ր — ու դեմքերն են ելնում նրա դեմ:

Կանգնում է քաղղեկը, նայում է խրոխտ,
— Տարեք ինձ շտաբը, տարեք պետի մոտ:

Գնում են, զիչերն է եղել արդեն կես:
Գնում են: Շտաբն է, մտնում է նա ներս:

Նստած է այնտեղ մի ծերուկ զնդապետ,
Խաղում է հանգիստ նա իր աջ բեխի հետ:

Կանգնում է քաղղեկը նրա հանդիման,
Հանում է ծրարը, տալիս է նրան:

Կարդում է ծերուկը, փրփրում է հանկարծ,
Որպես բամբակի մի քուլա բռնկված:

Թափում է խոսքերը ձայնով իր խոպոտ,
— Իսկ դո՛ւ, աղավնյա՛կա, մնա դեռ ինձ մոտ:

Ժպտում է քաղղեկը — ներիր ղնդապետ,
Մնալ անկարող եմ, դառնում եմ ես ետ:

Ասում ու նետվում է նա դուրս, ոնց քամին,
Հետքից կրակում է վառված թշնամին:

Չորս կողմ որոտում է կրակ, աղաղակ,
Վազում է քաղղեկը, թռչում է արագ:

Հեռու ե արդեն նա, կորած նա մթնում,
Հերոս այն քաղղեկը առաջ է դնում:

Ծեծում է անձրևը, իսկ շուրջը կրակ,
Գնում է ոտքով նա, դնում է մենակ:

Ծ

Արևն իր գույներն է փռել երկնքին,
Կանգնել է զինկոմը մի հողս կա դեմքին:

Նայում է հեռուն նա, նայում է առաջ—
Արդյոք երևո՞ւմ է քաղղեկը այն քաջ:

Խորհում է զինկոմը, խորհում է... հանկարծ
Հերոս այն քաղղեկը իր դեմն է կանգնած:

Ցնծում է իր սիրտը, ասես առած թև,
Կանգնել է քաղղեկը, ժպտում է թեթև:

— Խնդիրն կատարված է — ասում է հպարտ,
Փայլում է զինկոմը, փայլում է զվարթ:

Աչքերը լեցուն են սիրով անսահման,
Դրկում, համբուրում է զինկոմը նրան:

.
.

Անցան տարիներ շատ, եկան նոր օրեր,
Պալրում է հիմա էլ քաղղեկն անվեհեր:

Հիմա էլ պատմում է հուշեր երբ մեկին,
Հիշում է զինկոմը հերոս քաղղեկին:

1938

ՊՐՈՒՈՐ ԻՎԱՆՈՎ

1

Մարտադաշտին իջավ դիշեր,
Սնճրեային, միգամած,
Եվ ոչ աստղեր չողջողացին,
Ոչ էլ լուսին երևացի:
Սուրաց դաշտում խորունկ աշնան
Նոյեմբերյան ցուրտ քամին,
Դիրքերն անցավ, ինչպես դաժան
Սվիններով թշնամին:
Ու խավարի դրկում կորան
Ձիւրի թարմ դեակներ,
Որոնք պառկել են բաց բերան,
Ծիծաղում են ասես դեռ,
Ու Սիվաչի երկու ափին
Երկու բանակ թշնամի,
Դիրքերի մեջ ցրված էին,
Արթուն էին այդ ժամին:
Ու ինչպես չար հայացք աչքի՝
Կարմիր զորքի դիրքերում
Վրանդեյան լուսարձակի
Շողերն էին դեգերում:
Մերթ թափանցում էին վերև,
Ու մերթ վազում էին վար,
Մերթ Սիվաչի ջրերը սև
Դարձնում էին լուսավառ:

Եվ թշնամու հրետանու
Կրակը չէր դադարում,
Ամպրոպի պես արկերը թեթ
Խավարն էին սպառառում,
Խրվում էին թաց հողի մեջ,
Ցեխի կույտեր հանում վեր,
Կրակի տակ սպասում էր
Կարմիր զորքը անվեհեր:

2

Եվ դիրքերում կարմիր զորքի
Ձինվորները անհամբեր,
Խումբ-խումբ նստած իրար կողքի,
Զրույց էին անում դեռ:
Պատմում էին նրանք անցած
Կռիվներից քաջարի,
Աչքերն ասես կրակնացայտ՝
Մթնում կայծեր են տալի:
Վառվում էին... Բայց դեռ չկար
Հարձակվելու հրաման,
Կարմիր զորքերը խանդավառ
Դեռ սպասում են նրան:
Վառվում էին... Եվ չէր լուռ
Հըրետանի, հրացան,
Եվ լուսարձակը դիրքերում
Դեռ դեգերում էր անձայն:
Ահա մի դիրք: Այնտեղ ահա
Մի վաշտապետ անհամբեր,
Բորբոքվում են հողում նրա
Հաղթանակի կրակներ:
Իսկ նրա մոտ, դեմքով դունատ,
Քսանամյա մի ջահել,
Խոհուն աչքերը միզապատ
Հեռուններին էր հառել:
Նա անհանդիստ շրջում էր մերթ,

Մերթ նստում էր, մերթ ելնում,
 Մերթ իր բաղում մաքերի հետ
 Լուիկ զրույց էր անում:
 Հիշում էր իր ընկերներին,
 Ասես տեսնում էր նրանց,
 Թվում էր, թե կանչում էին
 Իր ընկերները մեռած:
 — Եվ Մաթվեյը ընկավ կովում,
 Եվ Տիմոֆեյն սպանվեց,
 Եվ Բորիսն է այնտեղ մարում...
 Հանկարծ ասես բռնկվեց,
 Լցվեց վրեժի թույնով անհուն,
 Ու ջերմ զգաց ճակատի...
 Դարձավ մի ուռմբ, որ խաղաբուս
 Ասես հիմար կալայթի:

Հետո թվաց հոգում ահա
 Տեսնում է նոր մի աշխարհ:
 — Կապրեն մարդիկ այնտեղ անաչ,
 Կրճուռանան վիշաք դառ:
 Այնտեղ մարդիկ կըլինեն տեր
 Իրենց արդար վաստակի,
 Կըլինի խինդ, կըլինի սեր,
 Կապրեն առանց տանջանքի:
 Խորհում էր նա... Պայթեց հանկարծ
 Ամպրոպի պես մի թեթ արկ,
 Ու Պրոխորը հանկարծ զգաց
 Դեմքին ցելի մի ապտակ:
 Կանգնեց: Որպես երկու նռնակ
 Բռունցքները սեղմելով՝
 Թքեց դեպի զորքը ճերմակ,
 Սրբեց երեսն իր թևով:
 Մոտեցավ նա ընկերներին,
 Ու լուռ նստեց նրանց մոտ,
 Վերավորներն տնքում էին,
 Շնչում էր օդը վառող:

Վաշտապետը զբեկեց նրան,
 Եվ ընկերները ժպտուն
 Խաղարի մեջ տեսան ահա
 Նրա հայացքը խոհուն:
 — Վաղը տոն է,—ասաց—հանդարտ,
 Ու աչքերը փայլեցին.
 Եվ ընկերներն աչքերն անթարթ
 Պրոխորին հառեցին:
 — Վաղը մեր ողջ Ռուսաստանի
 Մահն քաղաք ու ավան
 Երրորդ տարին պիտի առնի
 Հոկտեմբերյան հաղթության:
 Վաղը կերպեն ուրախ երգեր,
 Ալ դրոշներ կըծփան,
 Վաղը կերպեն կովի երգեր,
 Մեր անունները կըտան...
 Եվ լուեց նա: Նրանք մտքով
 Թռան դյուղեր ու քաղաք,
 Թվաց անցան նրանք շարքով
 Դրոշների փայլի տակ:

3

Հանկարծ մթնում խուլ ու անհայտ
 Աղաղակներ հնչեցին,
 Վրանգելյան լրտես էր այդ,
 Որ դիրքերում բռնեցին:
 Թշնամի՞ն է արդյոք թագուն
 Անցել արդեն ավեր մեր,
 Թե՞ մեր զորքերն են աղմկում,
 Վառում երգ ու կատակներ:
 Ելան շտապ, գենքեր առան,
 Վաշտապետը սառնարյուն
 Իր ձեռքն առավ մի հրացան,
 Ու լուռ առաջ է նայում:
 Հավաքվեցին և շուրջը իր

Զինվորները քաջարի,
Նայում են լուռ և ուշադիր՝
Թե ինչ պիտի պատահի:
Նայում են լուռ ու անհամբեր,
Սմբակի ձայն է դալիս,
Ահա մի խումբ ձիավորներ
Մթնում սևին են տալիս:

Սլանում են, դոփում նրանք,
Փնչում են տաք՝ սառն օդում,
Գառամբակ ու համարձակ
Արագ դաշտերն են դոփում:
Չափ են ընկել, առել են թափ,
Շտապ դալիս են նրանք,
Ոնց սուրհանդակը հրատապ՝
Դարձել են տապ ու կրակ:
Եվ ընդարձակ դաշտն է տնջում,
Թնդում արագ վազքի տակ,
Զինն անքուն ու աննկուն
Դոփում, դալիս են արագ:

Մոտենում են ահա նրանք,
Ահա հասնում են արդեն,
Ու ծառու ելած ձիով ճերմակ՝
Մեկը կանգնեց նրանց դեմ:
Երկար շինել ուներ հադին,
Գլխին մի թեք, չալ փափախ,
Թուխ բեխերը կախ՝ չրթունքին,
Դեմքը վճռող ու անվախ:
Ու մինչ ողջուն էր տալիս նա
Իր դեմ կանգնած բոլորին,
Դիրքերով մեկ հնչեց ահա
Խրոխտ ձայնը Պրոխորի:
— Ընկեր Ծրունդե՛ն... Մեզ մոտ է նա,
Հրամանատարն ճակատի...
Ու թվաց, թե Պրոխորն ահա

Խնդությունից կպայթի:
— Ընկեր Ծրունդե՛ն—հնչեց նորեն
Հռու և մոտ դիրքերում,
— Ընկեր Ծրունդե՛ն... ընկեր Ծրունդե՛ն...
Չայները չեն դադարում...
Դարձել է հուր ամեն զինվոր,
Ու քաջությամբ բորբոքուն,
Այդ անունը ամեն-մի օր
Ուժ է տվել իր հոգուն:
Այդ անունը ամեն կովում
Իր հետ եղել է ընկեր.
Այդ անունը իր ջերմ սրտում
Նա կպահի երկար դեռ:

4

Եվ Ծրունդեն իջավ հանդարտ
Ճերմակաբաշ ձիուց վար,
Մութն աղոտեց երիտասարդ
Հայացքներից խանդավառ:
Կանգնեց խրոխտ ու առնական,
Զինվորները խմբի մոտ,
Սմեն զինվոր դգաց նրան
Վաղուց իրեն հետ ծանոթ:
Վաշտապետը պատվի առած
Եկավ նրա հանդիման,
Ու դլուխը բարձր բռնած՝
Կանգնեց ահա զեկուցման:
— Թողնել: Հայտնի է ամեն բան —
Նշան արավ նա ձեռով,—
Շուտով կանցնենք մենք հարձակման:
Ու լուրն անցավ դիրքերով:
Ու թնդացին սրտեր բազում,
Զինվորները առան զենք,
Վաղուց էին այդ երազում,
Լուրն այդ հնչեց որպես երգ:

Հանկարծ թնդաց կարմիր զորքի
 Հըրետանին որոտով,
 Ու խավարը խոնավ օդի
 Ծվաավեց վառ վառողով:
 Լուեց, ասես թե վախեցած
 Հըրետանին սպիտակ,
 Ոնց ոռնացող դայլ, որ հանկարծ
 Տեսնում է լույս ու կրակ:
 Իսկ Ֆրունզեն իր շինելի
 Փեշերն խրեց գոտիկին,
 Ու դիրքերի երկայնքով մի
 Դիմեց ահա իր զորքին —
 — Պատրաստ կռվի և հարձակման.
 Ընկեր կարծիր զինվորներ,
 Շնորհավոր հոկտեմբերյան
 Երեքամյա տոնը ձեր:
 Թնդաց «ուռան» որոտածայն,
 Ծարժվեց նրա զորքը քաջ,
 Առավ Ֆրունզեն մի հըրացան,
 Անահ նետվեց նա առաջ:
 Երկու ձեռքով բռնել էր նա
 Հըրացանը գլխից վեր,
 Մինչև ծունկը ջրում ահա՝
 Սլանում էր անվեհեր:
 Ու թնդացին հրետանի,
 Գնդացիք ու հրացան,
 Զորքերը քաջ դեպ թշնամի
 Կրակները սլացան:
 Գնում էին ջրով նրանք,
 Գնում էին քաջաբար,
 Գնում էին կրակի տակ,
 Ու կրակում անդադար:
 Գնում էին, ոտքի տակ ջուր,
 Ընկնում, ելնում էին վեր,
 Վաշտապետը դարձել էր հուր.
 — Առաջ, առաջ, մարտիկներ...

Եվ դնդակները ճարձատում,
 Թնդում էին ոտմբ ու արկ,
 Ոմանք ընկնում էին մարտում,
 Մնում էին ջրի տակ:
 Սահայն ո՞վ է ողով արի
 Երգում խրոխտ ու կտրուկ —
 «Ելիք ու՛մ կյանքն անխճել է,
 Ով ճորտ է, մերկ և ստրուկ...»
 Հնչում է ալդ երգը կռվի,
 Վաշտապետն է նալում ետ,
 Տեսնում Պրոխոր Իվանովին,
 Որ քայլում է երգի հետ:
 Երգում է նա ու կրակում,
 Դարձել է բոց մի անմար,
 Ու թեժ արկերն են տրաքում,
 Աստղերի պես ծորում վար:

Երգում է նա: Ու սրտերում
 Վառվում էր երգն, ինչպես ջահ,
 Հոսում էր նա երակներում,
 Դարձնում կռիվը անահ:
 Երգում էր նա: Պայթում են դեռ
 Արկերն, ընկնում աջ ու ձախ,
 Ու Պրոխորը դեռ անվեհեր
 Երգում, կռվում է անվախ:
 «Սա է վերջին ...» — ու որոտաց
 Պայթեց, ուժգին մի վառ արկ...
 Ու Պրոխորի երգը խղզաց,
 Ասես մնաց արկի տակ:
 Ընկավ: Տնքաց նա մորմոքով,
 Աչքերն ասես քարացան,
 Թվաց՝ զորքերը իր մոտով
 Ստվերների պես անցան:
 — Ինչո՞ւ լուեց, ընկա՞վ արդյոք,
 Վաշտապետը դարձավ ետ,
 Ու փռվել էր Պրոխորն անօդ,

Մարում էր իր երգի հետ :
 — Պրոխոր... Պրոխոր... դռնից տխուր
 վաչտապետը : էլ չկար :
 Դարձել էր նա քարի պես լուռ,
 Երգը շուրթին, վերքը վառ...
 Ու համբուրեց շուրթերը սառ,
 Համբուրեց նա ու անցավ,
 Ու ջուրը ոնց շիրիմաքար՝
 Նրա վրա ծանրացավ :

Իսկ կոխվե թնդում էր դեռ,
 Գնում էր զորքն աննահանջ,
 Ու Ֆլորուսյեն դեռ անվեհեր
 վարում էր զորքը առաջ :
 Գնում էին ջրով նրանք,
 Գնում էին քաջաբար,
 Գնում էին կրակի տակ
 Ու կրակում անդադար :

5

Նայեց արփին առավոտ վաղ,
 Որպես մի աչք արնավառ, —
 Մարտադաշտը անշամանդաղ,
 Սիվաշն արյամբ էր վարար :
 Երկինքը պարզ, կոխվ չըկար,
 Ու թչեամի՞ հուսահատ
 Կարմիր զորքի դեմ հողմավար՝
 Նահանջել էր ոնց սաղարթ :

Թնդում էին ուրախ ձայներ,
 Կարմիր զորքը փառապանծ,
 Տոնում էր քաջ ու անվեհեր՝
 Հոկտեմբերյան տարեդարձ :
 Երգում էին ու ձայնն ուժգին
 Արձադանքում էր հեռվում,

Ամեն ղինվոր հաղթանակի
 Նոր կրակով էր վառվում :
 Իսկ «Տաճկական վալի» վերա,
 Արեղակի աչքի տակ,
 Արյան փայլ էր առել ահա
 Մի ալ-կարմիր դերոշակ :

1938

ԽՈՒԱՆ ԹՈՐՆԱԴ

Խուան Թորնադ, դու սրբացար,
Կարգացի ես քո մասին,
Դու կովում ես արիարար
Բուրբի հետ միասին:

Բուրբովում է, դիտեմ հիմի
Վրեժխնդիր քո հողին,
Խուան Թորնադ, դու ամեհի
Իսպանիայի քաջ որդին:

Աղատությունն է կանչում քեզ,
Եվ վրեժը հայրական,
Դու վառվում ես ալ բոցի պես,
Ժպտում է քեզ ապաղտն:

Եվ հիմա ես երկրից ազատ
Ողջուններ եմ հղում քեզ,
Խուան Թորնադ, իմ հարազատ,
Իմ հարազատ եղբոր պես:

1

Դեռ թնդում է կռիվն ահեղ,
Կորդովայի ճակատում,
Ֆալխտների արյունահեղ
Գնդակներն են ճարճատում:

Եվ նրանց դեմ մինչ իրիկուն
Բանվորական մի ջոկատ,
Կրակում է, կրակում է,
Կրակում է անընդհատ:

Ու կովում է նրանց շարքում,
Մի պատանի արևաչ,
Ահեղ ումբեր են տրաքում,
Բայց անվախ է տղան քաջ:

Խուան Թորնադ է անունը
Այդ քաջարի պատանու,
Պատերազմի տաք սամումը
Նրան կովի է տանում:

Եվ կովում է արիարար,
Գնդակներով իր դիպուկ,
Մարտը բռնած ձորեր ու սար,
Շատաչում է որպես բուք:

Շատաչում է և որպես ամպ
Իսպանիայի հանդերում,
Վառողի ծուխն է թանձրությամբ
Քուլա-քուլա դեզերում:

Եվ ընկնում են հերոսարար,
Եվ բարձրանում են էլի,
Դղրդում են ձորեր ու սար,
Որոտներից ահռելի:

Ու կովում է նրանց շարքում
Խուան Թորնադ պատանին,
Մինչև մութը Իսպանիայում
Սար ու դաշտեր պատանի:

Մինչև իջնի գիշերը խոր
Եվ աստղերը նայեն վար:

Մինչև քարերն հաղարավոր,
Բարձեր դառնան հողատար:

Ու թնդում է կռիւն ահեղ
Կորդովայի ճակատում,
Փաշխտներն արյունահեղ
Գնդակներն են ճարճատում:

Եվ նրանց դեմ, մինչ իրիկուն.
Բանվորական մի ջոկատ
Կրակում է, կրակում է,
Կրակում է անընդհատ:

2

Խուան Թորնադը չի քնում,
Գլուխն հենած մի քարի,
Պատանին դեռ միտք է անում
Հայացքն աստղոտ կամարին:

Մտածում է: Եվ խոհերն իբր
Նրան տանում են հեռու,
Դեպի ազատ մի նոր երկիր
Հեռու—հեռու ավերում:

Բայց հրաման եկավ երեկ.
Բանվորական ջոկատին,
«Հավաքեցեք, թիկունք տարեք»
Կռվի ահեղ ճակատից,—

Ովքեր փոքր են, մանկահասակ,
Մինչև տասնվեց տարեկան,
Նրանք սլիտի դնդակի առկ
Ու ճակատում չմնան»:

Խուան Թորնադը չի գնա
Ու չի մնա թիկունքում...

Եվ լուսինն է նրա վրա
Ծիծաղում լուռ երկնքում:

Եվ տեսնում է կարծես նա իր
Հորը կացնով դիտատված,
Ու թվում է մի զուլդ կարմիր
Աչք է նայում նրան բաց:

Ոչ, ճակատից նա չի գնա,
Ու չի մնա թիկունքում,
Ու հանկարծ իր դիտում անահ
Մի վառ միտք է բռնկում:

Խուան Թորնադը չի քնում,
Գլուխն հենած մի քարի,
Ու մի հնար է որոնում,—
Ի՞նչպես միտքը կատարի:

Ոչ, ճակատից նա չի գնա,
Ու չի մնա թիկունքում,
Եվ լուսինն է նրա վրա
Ծիծաղում լուռ երկնքում:

Եվ պատանին առավոտ վաղ,
Ըշտար մտավ համարձակ,
Դեմքը դունատ, սրտում մատաղ
Բողոքն, ինչպես տաք դնդակ:

— Խուան Թորնադն ուղում է, որ
Այցի գնա մորն անքուն,
Խնդրում է նա ազատ մի օր
Ու նոր լինի թիկունքում:

— Խուան Թորնադ, գնա, ասաց,
Ըշտարի պեսն հայրաբար,
Ու տղայի աչքերը թաց,
Լուռ կախվեցին դեպի վար:

Նա հրաժեշտ տվեց պետին,
Ու դուրս ելավ համարձակ,
Դեմքը դունատ, խորքում սրտի
Բողոքն, ինչպես տաք զնդակ:

Եվ պատանին անցավ, դնաց
Խրամներով թումբ առ թումբ,
Մարտադաշտում կարծես հանկարծ
Որոտացին հաղար ումբ:

Թվաց նրան կանչում էին,
Գնդակները ճարձատուռն,
Ասում էին ձայնով ուժգին,
— Արի, կովիր ճակատում:

Եվ պատանին նայում է ետ,
Շարունակում իր ճամբան,
Իր համարձակ խոհերի հետ,
Եվ քայլերով հաղթական:

Խուան Թորնադն այնպիսի բան
Պիտի անի քաջաբար,
Որ կովելու իրավունք տան
Մեծերի հետ հավասար:

Եվ պատանին խիզախ ու լուռ,
Սիրտը լցված վրեժ, ցավ:
Անցավ հաստատ կամքով ամուր,
Իր խոհերով հեռացավ:

Ու թվում էր կանչում էին,
Գնդակները ճարձատուռն,
Ու թվում էր, ասում էին,
— Արի կովիր ճակատում:

Եվ օրն ամբողջ թափառեց նա,
Սահմաններում թշնամու,
Եվ արեն էր նրա վրա,
Իր բորբ շողերը քամում:

Եվ քամին էր ուժեղ թափով,
Խփվում նրա երեսին,
Գնում էր նա դեռի ամբողջ,
Ու դեռի հետ միասին:

Եվ մազլցում էր ժայռերով,
Եվ անցնում էր դաշտ ու ձոր
Բայց մութն արդեն սև թևերով,
Գրկեց լեռներն ահավոր:

Հանկարծ մի ձայն լսեց կարծես:
Նա թաղ կացավ քարի տակ,
Ձոր գլորվող մի քարի պես,
Պայթեց հեռվում մի գնդակ:

Եվ պատանին առաջ սողաց,
Դիրքերն էին թշնամու,
Այնտեղ հողմն էր բերանը բաց,
Փոչերով սլանում:

Խուան Թորնադը կլտնի
Գնդացիքը անպայման,
Բայց շշուկով, կարծես դադանի,
Լավեց մթնում ինչ որ ձայն:

Խոսում էին յոթ զինվորներ,
Ձոր քարերին նստոռած,
— Ախ, փախչելու հնար լինե՞ր
Մեղմ հառաչեց մեկն հանկարծ:

— Համաձայն եմ ես էլ դրան—
Ասաց ուրիշ մի զինվոր:

— Կը տանեմ ձեզ — հնչեց մի ձայն
Մթնում խոր ու ահալոր:

Եվ յոթ զինվոր ահաբեկված
Գուշն ստացան քաթանի,
Ու կանգնել էր նրանց զիմաց,
Խուան թորնաղ պատանին:

— Ո՞վ էս տղա, — հնչեց մի ձայն, —
Ի՞նչ էս անում այստեղ դու,
— Ձոկատից եմ բանվորական
Ու մեկնեց նա մի հին թուղթ:

Եվ պատանին պատմեց նրանց,
Պատմությունն իր համարձակ,
Ու լուսինն էր լուռ ու կամաց,
Մտնում մռայլ ամպի տակ:

— Իսկ եթե մենք քեզ անխնա
Նվիրենք մի հավերժ քո՞ւն...
— Լավ է այստեղ դրկել սև մահ,
Քան թե ապրել թրկունքում:

Եվ հիացած այդ պատանու
Խիղախությամբ անվեհեր,
Յոթ զինվորները թշնամու,
Միանգամից ելան վեր:

— Տար մեզ տղա, ջոկատը ձեր
Քեզ հետ գալիս ենք արդեն,
Խուան թորնաղը անվեհեր,
Կանգնեց նրանց դեմ ու դեմ:

— Կապեցեք դուք ձեր զենքերը,
Ու ավեր իմ շալակին,
Երբ կհասնենք մեր դիրքերը,
Ես կստանաք դուք կրկին:

Եվ պատանին առած ուսին,
Ձենքերի մի ծանր բեռ,
Ձինվորների հետ միասին
Իջավ կամաց ձորն ի վեր:

5

Ուշ է արդեն, խորունկ գիշեր,
Լուսինն է լուռ դեզերում,
Ողջ ջոկատին քուն է իջել
Քանվորական դիրքերում:

Լոկ պահակն է շրջում անքուն,
Գնում է նա ու գալի,
Եվ հսկում է նա բարձունքում,
Լուսթյան մեջ ահալի:

Հանկարծ լսեց քայլերի ձայն,
Եվ նայեց նա դեռ ու դեռ,
Կարծես քայլերը մոտեցան,
Ու երևում են արդեն:

— Ո՞վ է, — կանչեց նա ահալի.
Արձազանքեց մի այլ ձայն,
— Խուան թորնաղն է հո գալի:
Ու բոլորը մոտեցան:

— Իսկ ո՞վքեր են քեզ հետ սրանք:
Ու նայեց նա կասկածոտ:
— Խոստացել եմ սրանց ես կյանք,
Առել, բերել եմ մեզ մոտ:

Ու զնացին նրանք շտաբ
Պահակի հետ միասին,
Պետը տեղից ելավ շտապ,
Խորունկ զարմանք երեսին:

— Խուան Թորնադն է եկել ետ—
Ժպտուն նայեց նա պետին,
Յոթ զինվոր է բերել իր հետ,
Միացնելու ջոկատին:

Եվ պատանին պատմեց նրան,
Ինչ վիշտ ուներ իր հոգում,
Խնդրեց նրան աղաչաձայն,
Որ չլինի թիկունքում:

— Կեցցես, տղաս, իմ քաջարի,
Սառց պետը հայրաքար—
Մնա այստեղ ու պայքարի,
Մեծերի հետ հավասար:

Եվ քանի որ մենք ունենք շատ,
Պատանիներ քեզ նման,
Աղատությունը հարազատ
Կնւաճի Իսպանիան:

Լույս էր արդեն: Լեռան շուրթին
Սրբին վարսերն էր քանդում,
Երբ գնդակները առաջին
Որոտացին ջինջ օդում:

Եվ սկսվեց վառոդի բուք,
Կորդովայի ճակատում,
Խուան Թորնադն արդեն ղեպով
Գնդակներ էր ճարճատում:

Խուան Թորնադ, պատանի վառ,
Կարգացի էս քո մասին,
Դու կովում ես արիարար
Բոլորի հետ միասին:

Եվ հիմա ես երկրից ազատ,
Ողջուններ եմ հղում քեզ,
Խուան Թորնադ, իմ հարազատ,
Իմ հարազատ եղբոր պես:

1936

ԱՆՎԱՐՈ

Թախո դետն է օձազալար
Ալիքալիք հոսում,
Ալիքները դրկած իրար,
Իրար հետ են խոսում.
Եվ անցնում են ու աղմկում
Ու փրփուր են տալի,
Ծառերի շուքն է բեկբեկուն
Ջրում դնում դալի:

Թախո դետի ափով կանաչ՝
Մի քաջ տղա դինաված,
Քայլում է լուռ դեպի առաջ
Հետախուզման ելած:
Թփուտներն մեջ աննկատ
Ճամբով արևալի,
Ալվարոն է երիտասարդ
Թուրքոյից դալի:

Ջուկատից է բանվորական,
Եվ քաջ, և աննկուն,
Նրա դնդակը հաղթական
Երբեք չի վրիպում:
Թախո դետն է օձազալար
Ալիքալիք հոսում,
Եվ Ալվարոն է խանդավառ
Մտքերի հետ խոսում:

— Իսպանիա, քեզ աղատություն
Մենք կըբերենք արյամբ,
Քեզ վառողի ծուխն է պատում
Հիմա ինչպես սև ամպ.
Աղատության արևով վառ
Կըցրենք ամպ ու մեղ,
Ու կլինենք կովում համառ,
Ձենք նահանջի երբեք:

Եվ քայլում է թողած ահա
Մի բարձրաբերձ կամուրջ,
Որ հսկում է դետի վրա,
Արծվի պես լուռ ու մունջ.
Թախո դետի ափով կանաչ
Խոհերի մեջ թաղված,
Ալվարոն է դնում առաջ՝
Ոտքից դըլուխ դինաված:

Բայց նկատում է նա հեռվում
Թանձր փոշի հանկարծ.
— Արդյոք քամի՞ն է այդ պարում
Փոշու սյուներ հաղած.
Արեգա՞հն է այնտեղ քամում
Տաք դուրրչին ջրի,
Թե՞ դորամասն է թշնամու
Ստորոտում բլրի:

Եվ ակնապիշ նայում է լուռ
Ալվարոն իր տեղում,
Բայց արևի տակ բազում սուր
Նիզակներ են շողում.
— Ձորամաս է ֆաշիստական,
Ոհմակի պես դալի,
Որ դադաղած, ծարավ արյան
Թուրքոն է դալի:

Բայց նա ի՞նչպէս ջոկատ գընա,
Ի՞նչպէս իմաց անի,
Մինչև գընա, կգա հիմա,
Կըհասնի թշնամին.
Եվ ինչպէս մի ուրուր օղում
Սալառնելով դա ցած,
Խիզախ մի միտք է պտտում
Նրա գլխում հանկարծ:

Եվ նետվում է ավուլ նա ետ՝
Թփերն օրորելով,
Զգույշ, իր քաջ խոհերի հետ,
Ինչպէս թեթև մի հով.
Մաքցում է կամուրջն ի վեր,
Կանգ է առնում ափսոսեղ,
Որպէս արծիւիւր անվեհեր
Հայացքով իր ահեղ:

Ու մտած մի ծառի ետև
Նայում է նա հեռու,
Իր շուրթերին հովը թեթև
Երդի ձայն է բերում.
Մոտենում են կարծես նրանք,
Բարձրանում է փոշին,
Ինչպէս կիզիչ արևի տակ
Հողի տաք գոլորշին:

Եկան ահա: Ալվարոն քաջ
Հանդիստ նայում է ցած,
Թեքվել է նա դեպի առաջ՝
Հըրացանին կքած:
Եվ ինչպէս դռն մի սուր կայծակ,
Ամպրոպի խիստ որոտ,
Շառաչյունով մի թեթ գնդակ
Պայթեց զորքերի մոտ:

Քնկավ զինվորը առաջին,
Եվ երկրորդը ահա,
Ու կըրակում է կամուրջից
Քաջ Ալվարոն ահա.
Եվ թշնամին է կրակում
Գնդակներն իր բաղում,
Եվ գնդացիներն է անհատնում
Վառող ու հուր հաղում:

Եվ դղրդում են սար ու ձոր,
Մարտը առնում է թափ,
Ու կամուրջից կարծես հզոր
Կռվում է ողջ ջոկատ.
Քնկավ զինվորը իններորդ,
Եվ տասներորդն ահա,
Կըրակում է դեռ անհողդողդ
Քաջ Ալվարոն ահա:

Ու գնդակները թշնամու
Կատաղությամբ անհուն,
Որպէս մըրիկ, որպէս սամում
Կամուրջին են խփվում.
Ու կարծես թե ետ են դառնում
Որոտումով ահա,
Եվ արյան փայլ է նկատվում
Թախտ դետի վրա:

Քնկավ զինվորն քսաներորդ,
Եվ նորերը ահա,
Դեռ կըրակում է անհողդողդ
Քաջ Ալվարոն անահ.
Եվ բռնել է դաշտեր ու սար
Մարտի որոտ, շառաչ,
Ու թշնամին արդեն համառ
Գըրոհում է առաջ:

Եվ մաղցում է արդեն վեր
Դեպի կամուրջն ահեղ.
Ու Ալվարոն չի փախչում դեռ,
Կըրակում է այնտեղ.
Նա իր վերջին ուժն է լարում
Քաջ առյուծի նման,
Բայց թշնամին արդեն վերում
Օղակել է նրան:

Ու կատաղած մի սառ սվին
Խրվեց կողը նրա,
Եվ Ալվարոն դեռի ափին
Ճչաց խոտի վերա:
Ընկավ: Աչքերը մթնեցին:
Ծանր է չնչում արդեն:
Ու մարում էր դեռի ափին
Մի բոբր իրիկնադեմ:

.
Լուսաբաց էր: Բոցի նման
Արփին փայլ էր տալի,
Մի ջոկատ էր բանվորական
Թուղեգոյից դալի.
Արդեն ջարդել էր թշնամուն,
Դալիս էր թափ առած.
Ու վարսերը հանձնած քամուն
Ալվարոն էր պառկած:

Ու երբ բացեց աչքերը նա
Առավոտյան հովում,
Նրա վառվող ճակատն ահա
Մի սառ ձեռք էր չոյում.
Ճանաչեց նա, Ժպտաց նրանց,
Իր ընկերներն էին,
Ձեռքով նշան արավ կամաց
Բոլոր մարտիկներին:

— Իսկ ինչո՞ւ դու դեռը չընկար,
Չէ՞ որ լողալ գիտես,
Եվ Ալվարոն թույլ ու անկար
Հաղիվ պատասխանեց.
— Ես դեռ չէի սպառել իմ
Գնդակները բոլոր...
Եվ նրա թույլ գեղին դեմքին
Մահն էր իջնում անդորր...

Մեռնում էր նա: Աչքերը խոր
Հեռուներն են նայում.
— Ուրախ կլինի կյանքը մի օր
Աղատ Իսպանիայում...
Հանդեց: Վերջին խոսքը նրա
Առավ քնքուշ մի հով,
Ու սլացավ, սլացավ նա
Ամբողջ Իսպանիայով...

Թախտ դեռի կանաչ ափում
Կա մի շիրիմ պայծառ.
Ալվարոն է այնտեղ ննջում՝
Վերան թեքված մի ծառ,
Այնտեղ ջրերն են աղմկում
Ու փրփուր են տալի,
Ծառերի չուքն է բեկբեկուն
Ջրում գնում դալի:

1937

ՖՐԱՆՍԻՍԿԱ ՍՈՒՆՆ

Գուադարրամի բարձր լեռներում
Ամպրո՞պն է արդյոք պայթում ահարկու,
Կայծա՞րն է այնտեղ իր սուրը սրում
Պատռելով լեռան ամպի վերարկուն:
Ո՛չ: Մարտն է այնտեղ շառաչում խրոխտ
Դե-Լեոն բըլբի սահմանների մոտ:
Ո՛չ: Ռումբերի դու թինդն է ահարկու
Փռել լեռներին ծխի վերարկու.
Ո՛չ: Գնդակների պայթյունն է հատու՝
Կայծակների պես օդը ծվատում:

1

Երկու ջոկատներ, բռնած ձոր ու սար,
Վառողի բուքով խփում են իրար.
Եվ ինչպես թանձր ածուխի փոշի,
Ծուխն է տարածվում լեռների դռնին:
Մի ֆաշիստական ջոկատ մոլեղնած
Բռնել է հովտում դիրքեր անհամար,
Հաղում է այնտեղ դնդաղիքն անսանձ՝
Դե-Լեոն բըլբուն առնելու համար:
Եվ նրա դիմաց մի քաջ զորաչար,
Մի բանվորական ջոկատ քաջարի,
Բլբի լանջերից կռվում է համառ,
Եվ որոտում են ժայռերն վիթխարի:
Եվ դղրդում են ձորերն ահարկու,
Եվ մարտիկներ են ընկնում վերավոր,

Եվ լսվում են խուլ նրանց արանքում,
Մահամերձների ճիչերն ահալոր:
Բայց ահա մի արկ հողի մեջ խրված՝
Պայթում է այնտեղ ահռելի ուժով,
Հողի մի բեկոր փոշի դարձրած՝
Պատում է ծխի, փռու մշուշով:
Ու երբ մշուշը թջնում է կամաց,
Երևում է պարզ դիրքերից մեկում,
Եռանդով լեցուն, մի քարի կքած՝
Մի քաջ աղջիկ է թափով կրակում:
Վառվում են կարծես աչքերը նրա,
Այտերի վրա չիկնել են վարդեր,
Տասնինը դարուն ուսերի վրա,
Գաջի անուն է վաստակել արդեն:
— Ֆրանսիսկա Սունն — հայտնի է նրա
Անունը պայծառ, քաջությունն անհուն,
Այդ արծիվների ոգին է անահ
Գուադարրամի բարձր լեռներում:
Այդ մրրիկների հեքն է սրընթաց,
Որ դալարվում է արձակ դաշտերում,
Այդ աղատուլթյան կանչն է սրտաբաց՝
Որ արիության ոգի է բերում:
Եվ կրակում է աղջիկը արի,
Եվ նրա կողքին ձայնով առնական
Կանչն է որոտում հրամանատարի,
Ու դղրդում են ումբ ու հրրացան:
Եվ ինչպես հպարտ արծիվ թևաբաց՝
Կանգնած անվեհեր բարձր քարավում,
Եռանդով լեցուն, մի քարի կքած,
Մի քաջ աղջիկ է թափով կրակում:

2

Նոր էր լուսացել առավոտն այնտեղ,
Ամպերի տակից դուռնդն արեղակի
Որպես թեժ մի արկ նայում է ահեղ,

Ու թվում է, թե պիտի արաքի,
 Ու թվում է, թե ամպերը կարմրած
 Կախված երկնքի բարձր կամարում,
 Մընոտ հայացքով լուռ նայում են ցած՝
 Ու ռազմադաշտին արյուն են քամում.
 Իսկ կռիվն այնտեղ որոտում է դեռ,
 Դղբում են դեռ ձորերն ահարկու,
 Գուռադարձում լեռները այնտեղ
 Հադել են ծխի թանձր վերարկու:
 Բայց հանկարծ այնտեղ, իր դիրքի վրա
 Ֆրանսիական Սոլանն ասես գունատվեց,
 Չովեցին ահից աչքերը նրա,
 Ու հաղիվ զսպեց իր հուզմունքը մեծ:
 — Ընկավ,—դռչեց նա ու վաղեց արագ:
 Դիրքից դիրք անցավ բոթը վայրկյանում:
 Հրամանատարը մի քարի վրա
 Մահվան հետ վերջին կռիվն էր անում:
 Աղջիկը գրկեց դուռխը նրա:
 Աչքերը արդեն մարում են հանդարտ.
 — Այդպես մեռնում են լեռների վրա
 Խիզախ, քաջարի արծիւներն հպարտ:
 — Մեռավ: Գրլուխը հրամանատարի
 Ֆրանսիական Սոլանն հենեց մի քարի,
 Ու վեր բարձրացավ հուզմունքով անհուն.
 Արձակ վարսերը հանձնելով քամուն:

— Մեռավ—որոտաց դիրքերում բոլոր
 Եվ ի պատիվ քաջ հրամանատարի,
 Հըրացանների զարկերով հզոր՝
 Պատվի խոսք ասաց զորքը քաջարի:
 Եվ իբրեւ սրտի ցանկություն անկեղծ,
 Ողջ ռազմադաշտը մի մարդու նման,
 Բոլոր դիրքերով մեկ ազադակեց.
 —Վարիք մեր մարտը, Ֆրանսիական Սոլանն:
 Եվ աղջիկը քաջ ցատումով լցված,

Իբրեւ նշան իր համաձայնության,
 Երկու ձեռքերը վեր բարձրացրած՝
 Առաջ շարժվելու տրվեց հրաման:

3

Սաստկացավ ահեղ կռիվն ալելի,
 Աշխույժ են պայթում զնդակները թեժ,
 Ամեն մարտիկի սրտում ամեհի՝
 Բռնկել է մի կատաղի վրեժ:
 Առաջ են շարժվում նրանք քայլ առ քայլ.
 Գնդացիքն ահեղ թափում է կըրակ.
 Ֆրանսիական Սոլանն անահ, անայլայլ՝
 Ջորքի հետ լծավ արդեն բլրի տակ:
 Եվ հովն է չոյում ճակատը նրա,
 Եվ կրակ կտրած կռվում է արի,
 Թվում է հեռվից հասնում է իրան՝
 Չայնը մահացած հրամանատարի:
 Եվ ողի առած շարժվում է առաջ,
 Փաշխտներն արդեն նահանջում են ետ,
 Ֆրանսիական Սոլանն խաղանուհին քաջ՝
 Վազում է արդեն իր ջոկատի հետ:
 Թնդում է հովիտն աղմուկով զվարթ,
 Ջոկատն առաջ է սլանում ահա,
 Ֆրանսիական Սոլանն առջևից հպարտ՝
 Առաջին դյուղն է ներս մտնում անահ:
 Սաստկացավ ահեղ կռիվն ալելի,
 Աշխույժ են պայթում զնդակները թեժ,
 Ամեն մարտիկի սրտում ամեհի՝
 Բռնկել է մի կատաղի վրեժ:
 Եվ մոլեղնությամբ վառվող բոցի պես՝
 Առաջ է դնում աղջիկը արի,
 Թվում է հանկարծ հետ մնաց կարծես
 Քաջարի շղթան իր սյունաշարի:
 Ու ետ է նայում: Ջոկատը չկա:

Ֆաշիստ զորքերն են օղակել նրան,
 Ու թպրտում է սիրտը աղջկա՝
 Մորթված, խոչտանդոված աղալնու նման՝
 Հանկարծ երեսին իջավ մի ապտակ,
 Ֆաշիստ մի սպա, զինվորներ երկու,
 Մտեցան նրան, խոթու, դժնդակ,
 Եվ սպան զոռաց ձայնով ահարկու.
 — Դե, առաջ ընկիր, դնանք, անարգ կին՝
 Վախը մոռացավ աղջիկը հանկարծ,
 Ձգվանքով նայեց սպայի դեմքին,
 Խիզախ քայլվածքով նրանց հետ դնաց՝
 Իսկ հեռվում մարտը որոտում է դեռ,
 Դըղըղում են խոր ձորերն ահարկու,
 Գուաղարրամի լեռները այնտեղ
 Հագել են ծխի թանձր վերարկու:

4

Մայրամուտն է լուռ ստվերում այնտեղ,
 Լեռան պռունդից դունդն արեղակի,
 Որպես թեժ մի արկ նայում է ահեղ,
 Ու թվում է, թե պիտի տըրաքի:
 Մարեց: Ու խաղաղ երեկոն կարծես
 Թանձրացավ թախծոտ ու կապույտ միգուռ,
 Հալած արծաթի կայլակների պես
 Աստղեր կախվեցին խորունկ երկնքում:
 Ու բաց երկնի տակ, նստած մի քարի,
 Ֆրանսիական Սոլանն ընկած մտքի ծով,
 Շուրջը պահակն է դանդաղ ման դալի՝
 Իսպանական մի երգի սուլոցով:
 Հովը մաղերն է անում ցիր ու ցրան,
 Տանում է նրա մտքերը հեռու:
 Կա մի հեռավոր բերդ աղատության՝
 Աշխարհի հեռու, հեռու ափերում:
 Այնտեղ մահի դեմ եղան համարձակ,
 Աղատությունը արյամբ ձեռք բերին...

Եվ աստղերով լի ջինջ կամարի տակ
 Ջեփյունն էր վարվում նրա վարսերին:
 Բայց ահա նրան տանում են կրկին,
 Շտաբ է մտնում իսպանուհին քաջ.
 Մի ֆաշիստ սպա չար ծաղրը դեմքին,
 Գայլում է դեպի նրան ընդառաջ:
 — Դե, մտածեցիք երևի արդեն:
 Ապրելը լավ չէ, քան մահը դաժան:
 Ֆրանսիական Սոլանն անվախ նրա դեմ
 Համարձակ դոչեց — պատրաստ եմ մահվան:
 Ես ոչինչ, ոչինչ չեմ ասելու ձեզ,
 Դուք կարող եք ինձ անել կացնահար,
 Մահը ընդունել քաջ հերոսի-պես՝
 Այդ վերջին, վերջին վառքն է ինձ համար:
 Սպան խոտասիրտ նայեց աղջկան,
 Հետո չուռ եկավ, քայլեց դեռ ու դեն:
 — Էյ, ո՞վ կա այդտեղ, դուրս տարեք սրան,
 Կանգնեց մի դահլիճ քաջ աղջկա դեմ:
 — Մտածիր մեկ էլ, հորդորեց սպան,
 Վերջին անգամ քեզ դիմում եմ հիմա.
 Եվ աղջիկը քաջ տվեց պատասխան.
 — Արդեն պատրաստ եմ ընդունելու մահ:
 Եվ դահլիճի հետ դընաց համարձակ,
 Դրսում աստղալի գիշեր էր պայծառ,
 Լուսինը՝ որպես — սառած մի դիակ,
 Լեռան պռունդից լուռ նայում էր վար:
 Ամայի դաշտում փայլեց մի կային,
 Գըլուխն աղջկա ճիչով ընկավ վար,
 Աստղերը վերում լուռ սարսուղին
 Լուսինը վերից Ժպտաց ապշահար:
 Ու հովը երկա՞ր չոյեց այդ գիշեր
 Այդ քաջ աղջկա վարսերը արձակ,
 Կարծես թախիծով ողբում էր մի սեր՝
 Աստղալից երկնի ջինջ կամարի տակ:

Իսկ առավոտյան՝ ջուկատն աղջըկա,
 Տաք կրակոցով հեղեղի նման,
 Անցավ այդ ամա դաշտով արեկա
 Լցված վրեժի թույնով անսահման:
 Եվ թվում էր թե՛ նրանց հետ մեկտեղ
 Ֆրանսիական Սուլան, իսպանուհին քաջ,
 Կանչում է դվարթ, կռվում է ահեղ,
 Ու հողմի նման արշանում առաջ.
 Ու կռիվն ահեղ որոտում է դեռ,
 Դըղըղում են խոր ձորերն ահարկու,
 Գուռադարբանի լեռները այնտեղ
 Հաղել են ծխի թանձրը վերարկու:

1937

Գ Յ Ո Ւ Լ Խ Ա Ն Դ Ա

1

—«Պարսկուհի՛, վարդի պես մի աղջիկ ես,
 Թուփի պես դալար ես դու,
 Կարծես թե Շիրազի մեծ բախչից ես
 Ու բույր չես տվել մարդու»:

—«Պարսկուհի՛, աչքերդ նշի ձև են,
 Սաթի պես բիբերդդ սև,
 Ու թռչող ծիծեռի գույգ թևեր են
 Հոնքերդ կամար ու կեռ»:

—«Պարսկուհի՛, քեզ արևը սիրել է,
 Թիթեռն էլ սիրել է քեզ.
 —«Պարսկուհի՛, չարսավըդ սաթին է սև,
 Ամպի պես պատել է քեզ»:

2

Այդպես են երգել քեզ, պարսկուհի՛,
 Իրանցի շահիբները տրփոտ,
 Շահիբները քո հարեմ երկրի,
 Ու զիչերից մինչև առավոտ...

Այդպես են երգում հիմա էլ
 Աֆիոնով հարած իրանում,

Ուղում են երգել ու հմայել,
Իրանցի հաղար խառ խանում:

Բայց ո՞ւր է Իրանը քո հիմա,
Դու ապրում ես ուրիշ մի երկրում,
Ուր չկա հաշիշ ու հինա
Ու մեկը քեզ երգեր է պրում:

Գուցե դու օտա՞ր ես այդ երկրին,
Չե՞ս եղել գուցե Իրանում,
Չգիտես, թե ինչպես քեզ բերին,
Չեն պատմել, դու չես իմանում:

... Երևի Իրանցի մի թաղեր,
Բարձել է ուղտերի մեծ շարան,
Ու մի օր բերել է նուշ ու չիր,
Էս երկրում ծախելու համար:

Ու վերջին ուղտերի վրա,
Ռսկեկար փարդեքով նախած,
Բարձել է զույգ-զույգ քյաջաֆա,
Ու իր հետ բերել է իր կանանց:

Ու իր հետ բերել է — ուղտապան
Մի թշվառ Յուսուֆ կամ Հասան,
Որ բոբիկ է քայլել ողջ ճամբան,
Ու հասել է էստեղ՝ Երևան:

Ու իր հետ, իր կանանց համար,
Բերել է եթիմ մի զարավաշ,
Ցնցոտի հազած մի Բահար,
Օրավարձը մի հատ չոր լավաշ:

Եվ հետո՝ ով իմանա ինչո՞ւ,
Չի ուղել ետ դառնալ Իրան,
Խանութ է բացել թիրմաչու,
Հաստատվել է այստեղ՝ Երևան:

Եի Թառվան ուղտ չոքեց դռան,
Շեմքին ախր են իմ սիրտն էր,
Խանի ուղտը կոխեց վրան,
Սիրտըս ախր սիրով լիքն էր,
Յարըս խանին խաղալիք է,
Ինձ համար նա կյանքս ինքն էր,
— Թառվան, յարիդ համար բերած
Խառ քյաջաֆան մահով լիքն էր:

էյ, բաղամդյուլ չադրան վրան
Քյաջաֆի մեջ յարըս ինքն էր,
Ռանգը յարիս դեղին դափռան՝
Աչքիս առաջ մահըս ինքն էր.
Ուղտը կանգնեց՝ յարըս վրան,
Ոտքերի տակ, վա՛խ, իմ սիրտն էր,
— Թառվան, սիրած, դյուղալ յարիդ
Ուղտի վրա հարեմ տարան:

1933

Ի Ր Ա Ն Ի

ԱՌԱՋԻՆ ԵՐԳ

1

Երգում էին փողոցում, շուկաներում քաղաքի,
 Բակերի մեջ, ամենուր երկու երգիչներ,
 Մինչև արև թաղուհին իր ծիրանին հավաքի,
 Մինչև կապույտ շղարշով երեկոն խջներ:
 Մինչև աղանը ձգվեր խորախորհուրդ մրմունջով
 Կտուրներից հողաշեն ու մզկիթներից,
 Մինչև աղքատը վերջին, կյանքի դառն տրտունջով,
 Աղերաները ողբաձայն կտրեր տներից:
 Մինչև աղոտ լույսերով փայլեր ամեն ապակի,
 Ու սև չադրայի նման դեղերը իջներ,
 Երգում էին փողոցում, շուկաներում քաղաքի,
 Բակերի մեջ, ամենուր երկու երգիչներ:

2

Սիրում էին այդ երկու երգիչներին հարազատ,
 Երգիչներին՝ հոգեթով հույզերի աղբյուր,
 Նրանք երկու եղբայրներ իրենց երգերով՝ ազատ
 Մտնում էին ամեն սիրտ, բացում ամեն դուռ:
 Նրանք երկու եղբայրներ, երկու ծաղկած նշենի,
 Երկու արփի նորածագ, երկու վարդատունկ,
 Նրանք երկու եղբայրներ, կարիքը միշտ փեշերին

Ամեն դիչեր միասին դնում էին տուն:
 Մեկ մեկու դեմ սիրով լի, մեկ մեկու դեմ սրտաբաց,
 Բայց մորմոքած սրտերում հոգսը միշտ արթուն,
 Նրանք երկու երգիչներ՝ երգի մրմունջով հարբած,
 Երազներով հոգեթով մտնում էին քուն:

3

Ու երբ բացվում էր արփին, փռում աշխարհի վրա
 Նարնջադույն մետաքսի քնքուշ դադիփան,
 Երբ էյնալի սարերից իջնում էր հովը ահա՝
 Համբուրելով անցնում էր ամեն վարդապատան,
 Երբ Իրանի վարդաբույր կանանց աչքերի նման
 Բացվում էին վարդերի կոկոնները վառ,
 Բուրում էին ջինջ օդում ուհան, վարդ ու եսա՛ման,
 Խմում էին արևի ճաճանչները դառ,
 Ու երբ բացվում էին նուրբ շուշանները սաղափի,
 Թերթիկներով լուսածոր՝ աստղի թարթիչներ,
 Երգում էին փողոցում, շուկաներում քաղաքի,
 Բակերի մեջ, ամենուր երկու երգիչներ:

4

Եվ հնչում էր այդ երկու երգիչների սրտահույզ,
 Սրտամորմոք թախիծի երգը վարարուն,
 Եվ հնչյունները երգի՝ վորպես հույզերի վողկույզ,
 Ծախում էին կսկիծով նրանք բաղարում:
 Եվ հնչունները երգի սառում էին շուկայի
 Մթին կամարների տակ, ընկնում էին վար,
 Որպես անկենդան մետաղ պղնձաձուլյ մի շահի,
 Իբրև երգի, հույզերի ու արցունքի վարձ:
 Եվ հավաքում էին լուռ երգիչները այդ երկու,
 Շահինները պղնձի անկենդան ու պաղ,
 Գնում էին ընկձված, ամոթահար ու նկուն,
 Անցնում էին շուկաներ, մտնում թաղից թաղ:

Ու տարածվում էր նրանց՝ Սաֆարի ու Ջեյնալի՝
 Երգի հոչակն ամենուր, մտնում տնից տուն,
 Նրանք մի զույգ երգիչներ հարազատ ու սիրալի,
 Ծաղկոցների բուրմունքը նրանց ջինջ սրտում:
 Նրանք մի զույգ երգիչներ ու աշխարհում վարդաստան՝
 Վարդերի փուշն էր միայն բաժինը նրանց.
 Այգալես երգով չէր մտել ոչ մի սոխակ Գյուլխատան՝
 Խանչալները հոգսերի սրտերում խրած:
 Չէին լի այգալես երգ շուշանները սաղափի,
 Երբ որ գեփյուղը նրանց շուրթերին իջներ,
 Երգում էին փողոցում, շուկաներում քաղաքի,
 Բակերի մեջ, ամենուր երկու երգիչներ:

ԵՐԿՐՈՐԴ ԵՐԳ

1

Արդուլ խանի հոյաչեն պարտեղները անսահման,
 Օթխները գորգաղարդ՝ մետաքս ու առլաս,
 Արդուլ խանի մարմարե ապարանքը աննման,
 Մնդուկներում մարդարիտ, գոհար ու արմատ.
 Արդուլ խանի ուղտերի կարավաններն անհամար,
 Մետաքս գորգերով բեռնած ձգված Հինդ ու Չին,
 Արդուլ խանի բաղերում որքան, որքան նուշի ծառ,
 Որքան թաղեր խաղողի, ծիրան ու անջիր:
 Արդուլ խանի հարեմում որքան լուսաչող գոհար,
 Ագամանդներ չողչողուն աստղերից վճիտ,
 Արդուլ խանի պարտեղի վարդերից էլ թարմ ու վառ
 Քանի չքնաղ փերիններ հարեմի միջին:

2

Ապարանքի դեմ դիմաց ավազանը մարմարի,
 Շատրվանը արմաստի հալոցք է ծորում,

Շուրջը գորգերն ալվյան ծաղիկների, վարդերի,
 Որոնց վրա արևն իր դույններն է ցողում:
 Սանդուխներին՝ մետաքսե ասեղնակար բարձերին,
 Նստոտել են անկանոն կանայք Արդուլի,
 Հովը իջել է նրանց արեշումե վարսերին՝
 Համբույր ու բույր տանելու վարդին, սյումբուլին:
 Երկու ջահել զարավաշ սինիններով արծաթի,
 Նախուն Ֆինջանների մեջ բերում են դյուլաբ,
 Վարդի բույրով հագեցած, որպես չքնաղ հեքյաթի
 Հրաչք աղբյուրների ջուր, նրա պես դուլալ:

3

Ու նրանց մեջ նստել է հարեմի ծեր ներքինին,
 Գլխին դեղին արախչին, հագին արխալուդ,
 Վրան փաթթած երկնադույն իր մեջկապը սաթինի,
 Դեմքը՝ թոշնած դեղձի պես, անբեխ, անմորուք:
 Կատակում են նրա հետ ու քաջքում են նրան
 Շարժումներով դրդուլիչ, լպիլը ու կրքոտ,
 Արդուլ խանի հարեմի կանայք՝ սողունի նման
 Գալարվում են, տապկլտում իրըր նրա մոտ:
 Ու քրքում է անդոր ծեր ներքինին հարեմի,
 Եվ կանացի իր ձայնով ճվճվում անդուր,
 Բայց քաջքում են նրան ու գալարվում են էլի,
 Աղաչանքը ներքինու իզուր ու իզուր...

4

Ավազանի չողչողուն, մարմար պողունկին նստած,
 Իր մտքերին անձնատուր չքնաղ Նաջիրան
 Բաղամաձե աչքերի երկար թարթիչները թաց՝
 Կախել էր լուրթ ջրերին, դիչերվա նման:
 Ու կարծես թե վարդերի ցուքն էր ընկել այտերին,
 Կուրծքը ելնում էր իջնում, որպես հովի խաղ,
 Նկարել էր լուսաչող ավազանի հայելին
 Նրա պատկերը նրբին, նոճու պես չքնաղ:

Եվ ջրերի հայելում հեռւմ եր կուրծքը նրա,
Կարծես այդ հեքն էր հուզում կոհակները բյուր,
Կարծես դեկտուրը միայն վառ կարոտովը նրա,
Նրա համբույրի համար մտալ խաղաղ ջուր:

5

Աբդուլ խանի հարեմի աղամանդն էր Նաջիրան,
Նրա զարդը սիրելի ողջ հարեմի մեջ.
Նրա հայրը հանդերում կյանքը մաշած մի չորան,
Աղբյուրների պես հստակ, դառների պես խեղճ:
Ուրախ արցունքն աչքերին՝ քյարին արավ աղջկան,
Տվեց խանի հարեմին որպես մի փեշքեշ,
— Արարիչ տեր, — ասաց նա, — իմ սիրելի Նաջիրան
Խանում լինի բախտավոր՝ խանումների մեջ:
Բայց հոգու մեջ ամպ ուներ ու դժբախտ էր Նաջիրան,
Մոտենում էր ծեր խանին տխուր, նողկանքով,
Ու թոշնում էր ջրափի դյուլը սաբուհու նման,
Երբ թեքվում էր արևը, իջնում երեկոն:

6

Ավաղանի ափին մինչ՝ լուռ թախծում էր Նաջիրան,
Ու արցունքն էր լվանում վիշտը աչքերի,
Խանի կանանց ճանկերից, ցամաքած աղվեսի նման,
Դուրս էր պրծել հարեմի ծերուկ ներքինին:
Ու քրքում էին դեռ՝ նստած մետաքս բարձերին,
Հնչուն ծիծաղը նրանց առվի պես զուլալ,
Ղարավաչները նրանց, Աբդուլ խանի հարսերին,
Բերում էին սառնորակ շարբաթ ու դյուլաբ:
Ու երբ տրամուխյամբ կախված՝ Նաջիրայի ամպի պես
Թարթիչները սևաթույր ջրից բարձրացան,
Ծաղկոցից դուրս, փողոցում, անցնելով բակ ու պարտեզ,
Սրտակեղեք կանչի պես հասավ երգի ձայն:

7

Տարածվում էր այդ երգը, որպես դառը սրտերի
Վշտամորմոք սրտաբուխ արցունքների ծոր,
Եվ հնչյունները երգի իջնում էին վարդերին,
Որպես կաթիլ առ կաթիլ սրտից իջնող ցող:
Եվ հնչյունները երգի իջնում էին սրտերին —
Հոգու հրդեհ էր կարծես բռնկել օդում,
Ջերմությունից, այդ երգի բույրն էր քամվում վարդերի,
Ու ներծծվում ամեն մի զգայուն հոգում:
Հնչունները այդ երգի այրում էր սիրտը նրանց,
Որպես բոցի կաթիլներ պոկված արևից,
Լսում էին մետաքսե իրենց բարձերին նստած
Սիրունները մարմարե՝ խանի հարեմի:

8

Ու երբ սառեցին երգի թրթիռները եթերում,
Ինչպես մրմունջն աղանի իրիկվա պահին,
Ինչպես հանդում է խաղաղ ամեն դիշեր թփերում
Առունների եղերքի դյուլը սաբահին՝
— Կանչի, ծերուկ, — ասացին սիրունները հարեմի,
— Կանչի թող դան ու երգեն մինչև իրիկուն,
— Կանչի, ծերուկ, դեռ չատ կա մայրամուտին արևի:
Աղերսեցին մեկ առ մեկ նրանք ներքինուն:
Ու ներքինին թոնթորաց, քիչ համառեց, տրտնջաց,
Հետո ժպտաց խորամանկ, բացեց փեշն իրա,
Եվ արծաթի թումանը նրա փեշում ծնդաց,
Ու փայլ փռեց խորշոմած երեսին նրա:

9

Եվ մինչ դնաց ներքինին անցնելով բակ ու պարտեզ,
Կանայք կարգի բերեցին գլուխ ու վրա,
Սև մետաքսե ամպերի նրբին ծվեկների պես
Իջան նրանց գլխերին ուրբանդ ու չադրա:

Սև մետաքսե ամպերի նրբին ծվեններն պես
Գրկեց ամեն մի չադրա պայծառ մի լուսին,
Թաթախվեցին լույսի մեջ սև ուռբանդները կարծես,
Ու խմեցին լույսերը նրանց երեսի:
Ու մինչ չքնաղ Նաջիբան համբուրվում էր հովի հետ,
Մինչև ուռբանդը նրբին երեսին իջներ,
Ու մինչ հեռւմ էր խանդից ողջ պարտեզը բուրավետ,
Պարտեզ մտան սրտահույզ երկու երգիչներ:

10

Եկան կանգնեցին նրանք խանութների դեմ դիմաց,
Նրանք երկու երգիչներ, երկու ուռ գալար,
Երկու թխադեմ ջահել, նախշուն արախչին դրած,
Զուխտակ աչքերի վրա՝ ջուխտակ սև կամար:
Մեծը՝ Սաֆարն ավելի բարձրահասակ ու դժգույն,
Փոքրը՝ Զեյնալը-սիրուն խոշոր աչքերով,
Որոնց մեջ կյանքը կարծես լցրել էր վիշտ, տխրություն,
Ու դարձրել էր նրանց տխրությամբ դերուզ:
Կանգնել էին նրանք լուռ, երկու ջահել երգիչներ,
Երկու եղբայր հարազատ իրար կողք կողքի,
Աչքերն հառած երկնքի փերուզներին, դեպի վեր,
Հնչեց նրանց հոգեթով զողանջը երգի:

11

Ծորաց թախիծը անհուն հնչյուններից այդ երգի,
Սրսիացին ծաղկոցի վարդերը բոլոր,
Դյուրթվեց դալար մի նոճի ավազանի եղերքին —
Նաջիբան էր՝ խոհերի ծովի մեջ մոլոր:
Բուրեց ճերմակ մի շուշան թովչությունից այդ երգի,
Նաջիբան էր՝ հառաչեց մորմոքով խորին,
Ծաղկած, փարթամ նշենին թափեց թերթերն իր ծաղիկի,
Նաջիբան էր՝ արցունքի շիթերն աչքերին:
Ավազանը բյուրավիճ դրկեց արևը պայծառ,
Նաջիբան էր՝ Զեյնալի պատկերը հոգում,

Զեփյունն անուշ թովչությամբ ծաղկանոցով անց կացավ,
Նաջիբան էր՝ սիրո վառ ծաղիկ էր ջոկում:

12

Եվ թրթիռները երգի անձրևի պես հորդառատ
Երկու քուլա ամպերից թափվում էին վար,
Արդուլ խանի հարեմի կանանց աչքերի առաջ
Բացում սիրո, տանջանքի, վշտի մի աշխարհ:
Լսում էին նրանք լուռ ու նրանց հետ միասին
Վարդատառն էր հառաչում բույրերով բոլոր,
Եվ ծաղիկները ասես վառ թերթերը լվացին
Թրթիռներով այդ երգի՝ արցունքների ծոր:
Եվ մինչ հնչում էին մեղմ հնչունները այդ երգի,
Հասնում էր օրը արդեն իրիկվա պահին,
Կուչ էր բերում նրբահյուս՝ առունների եղերքին՝
Շեփորները դույնդույն դյուլը սաբահին:

13

Լուեց երգը: Փանջարից աղախինը հարեմի
Գունաթափ ու ահաբեկ կռացավ ներքև.
— Խանը դալիս է, — կանչեց, ու կարծես մի անգամից
Մոռացվեցին վայրկյանում երգիչ ու երգեր:
Ու չփոթված վեր ելան սիրունները հարեմի,
Որը բարձր մոռացած, օրը թաչկինակ,
Մեկն էլ իր սիրտը թողած սանդուխների քարերին՝
Երգի մորմոքով լեցուն թրթիռների տակ:
Նաջիբան էր, մոտեցավ երգիչներին այդ երկու,
Քաշեց ուռբանդը դեմքից, որպես մի լուսին,
Աչքերի մեջ ըորբոքված կրակները իր հոգու,
Անխոս նայեց Զեյնալի տրտում երեսին:

14

Անխոս նայեց, հեռացավ, որպես չքնաղ մի երազ,
Որպես հովը, անվրդով ջրերի վրա,

Որպէս մշուշ նրբաթե կապույտ ջրերից ելած,
 Որ քաշում է մետաքսե փեշերը իրա:
 Ու Զեյնալի ջինջ հոգում, համր պատկերի նման,
 Մնաց թախծոտ աչքերի անմար մի հայացք,
 Մնաց ամպի պէս տրտում չքնադադեղ Նաջիբան՝
 Մ'ունջ հայացքը Զեյնալի աչքերին հառած:
 Եվ մինչ մարած աչքերից հարեմի ծեր ներքինու՝
 Կարիճի պէս թունավոր հայացքը իջներ,
 Թողին պարտեզը չքնադ, սև շահիներ ձեռքերում,
 Ու հեռացան դլխիկոր երկու երգիչներ:

ԵՐՐՈՐԴ ԵՐԳ

1

Խոր քնի մեջ ընկղմած՝ Արդուլ խանի հարեմում
 Լույսերն հանգել են վաղուց, չկա ոչ մի ձայն.
 Վարդաստանը հովի դեմ քնքուշ վարսերն է սանրում,
 Հովը բույրերն է նրա անդամ ցիր ու ցան:
 Սուսամբարը սվսվաք, կարծես լալիս է տրտում,
 Ու հառաչում հոգեթով բույրերով իրա,
 Լուսնի սինին վերևից հալած արծաթ է թափում
 Շատրվանի շողջողուն ջրերի վրա:
 Ավազանի ջրերում օրորվում է մի սլարտեզ՝
 Զյունափրփուր ու չքնաղ շուշաններով լի,
 Այդ աստղերն են, երկնքի արցունքները սիրակեղ,
 Որ նախշել են ջրերի հստակ հայելին:

2

Վարսերն արձակ, օթախում, լուսնի շողը երեսին,
 Քաղամածև աչքերի թարթիչները կախ,
 Թիկնել է լուռ Նաջիբան ասեղնակար իր բարձին.
 Գլխում խոհեր անհամար ու սրտի մեջ վախ:

Հեռուններից քաղաքի, հովի շուրթերին բեկ-բեկ,
 Հասնում է մի անցորդի տխուր բայաթին,
 Ու հեծկլտում է կարծես Նաջիբայի սրտի հետ
 Շատրվանը լուսաշող՝ խավար հայաթից:
 Ու հեծկլտում է կարծես վարդանոցում բույրով լի,
 Թրթիռներով թախծալի սրտակեղեք երգ,
 Ու տեսնում է կարծես նա ավազանի հայելին,
 Ու նրա մեջ օրորուն սևաչյա մի դեմք:

3

— Ով ստեղծող արարիչ, — մրմնջում է Նաջիբան,
 Փառքիդ, կամքիդ մատաղ ես ու քո դորության,
 Թռչունին թե ես տվել, օձերին ճար ու ճամբա,
 Մարդուն հանձնել ես մարդու անդուլթ դերության:
 Ահա ոտներդ եմ ընկել, ես՝ փոշին քո ոտքերի,
 Թե քո դեմ մեղք եմ դործում՝ տուր ինձ կրակի,
 Թե չէ՝ փրկիր, ազատիր, մի թող հոգին իմ դերի,
 Մի թող ջահել իմ կյանքը խանը խորտակի...
 Մրմնջում է Նաջիբան, լուսնի շողը երեսին,
 Սիրտը ամպի մի քուլա ու աչքերը թաց,
 Մետաքսաթել վարսերը փռած մեջքին և ուսին...
 Դուռը բացվեց ու չեմքին խանը երևաց:

4

Հազած երկար մի կաբա, ձեռքին թաղբեն սև սաթի,
 Ու կրքերից բռնկած Ժպիտ շուրթերին,
 Որպես երկու կեռ խանչալ՝ կախած բեխերն արծաթի,
 Կանգնեց խանը տարփանքի փայլը աչքերին:
 Հեռո դանդաղ մոտեցավ. դողաց, չքնաղ Նաջիբան,
 Որպես հողմից սարսուռն դալաբաճյուղ ուռ,
 Ոտքի ելավ ու կանգնեց ծեր խանի դեմ հանդիման,
 Աչքերը թաց ու հոգին քարերի պէս լուռ:
 — Յող է իջել սիրունիս վարդե այտերին, ինչքո՞ւ,
 Ամպել է իմ սիրելին, երկինքն իմ հոգու:

Նաջիրային արդյոք ի՞նչ խորունկ մի վիշտ է տանջում,
Ասա, վարդա, այս ժամին ինչո՞ւ ես անքուն:

5

Ու կռացավ ծեր խանը Նաջիրայի շուրթերին՝
Ինչպես կարմիր վարդերին ձյուն իջնե՞ր հանկարծ,
Ու Նաջիրան կարծես իր հոգու մռայլ ամպերի
Որոտումով՝ դառնորեն հանկարծ հեկեկաց:
— Թույլ տուր, խան իմ, հեռանա քո հարեմից Նաջիրան:
Նրա հայրը չորբան է դառների պես հեղ,
Նաջիրայի օրրոցը եղել է հանդ ու չիման,
Աճել է նա դաշտերի վայրի ծաղկի պես:
Աղի արցունքն աչքերին, սրտի մեջ վիշտ ու մրմուռ,
Քո ոտքի հող Նաջիրան աղաչում է, խան,
Նա կթռչնի, կհանդի վշտամորմոք ու տխուր,
Թույլ տուր, խան իմ, հեռանա դժբախտ Նաջիրան:

6

Մռայլվում է ծեր խանը, մութով լցվում է հոգին,
Ինչպես գիշերվա պահին սարը էյնալի,
Ու զայրույթը՝ վանդակած վազրի նման մոլեգին՝
Նրա կրծքի վանդակին դադար չի տալի:
Մոնչում է կրծքի տակ, կուրծքը ելնում է իջնում,
Երակները ճակատի խիում են արագ,
Կարծես հոգու մեջ նրա վայրագ մի ճիչ է հնչում,
Վիրավոր մի դադանի ցնցող աղաղակ:
Բայց զսպում է ծեր խանը իր զայրույթը կատաղի,
Ու դողդոջուն, հուզմունքով ասում է նրան,
Մինչ թափում է այտերին արցունք-աստղերը աղի,
Վշտամորմոք ու արտում դժբախտ Նաջիրան:

7

— Լսիր, սիրուն, կմեռնի, չի դիմանա առանց քեզ,
Առանց արև, առանց օդ խանը կմարի,

Խորհակահար իմ հոգում սարերի հով դու ինչպես,
Վարդերի բույր դու ինչպես՝ իրիկվա պահին:
Քեզ հանդերի, սարերի վայրի կարոտն է քաշում,
Աղբյուրների դլգլան այմաստ հայելին,
Իսկ իմ կյանքը դունաթափ ու ցրտահար մի աշուն,
Ուզում է քո կենսատու բույրը վայելի:
Թարթիչներդ թուրի պես իմ սրտին ես խրել դու,
Նրանցով եմ շնչում ես, ապրում աշխարհում,
Քանի ցուրդ պատկերիդ լույս է տալիս իմ հոգուն՝
Պիտի մնաս, սիրելիս, դու իմ հարեմում:

8

Ասաց, մռայլ հեռացավ Աբդուլ խանը դառնացած,
Հոգին հուզված՝ ալեծուփ ջրերի նման,
Եվ խոհերին անձնատուր սանդուղքներով իջավ ցած,
Աչքերի դեմ շարունակ տրտում Նաջիրան:
Դրսում պարտեզն էր շնչում ծաղիկներով բաղմարույր,
Ավազանը աստղերից դորդեր էր հյուսել,
Վարդերի վառ շուրթերին զեփյուռների նուրբ համբույր,
Իսկ լուսինը իր ճամբան վաղուց էր կիսել:
Շրջում էր նա մտախոհ, իր մտքերով օրորուն,
Աբդուլ խանը՝ սև ամպի քուլայի նման,
Նրա վրա լուսինն իր արծաթ հայացքն էր ծորում,
Աչքերի դեմ շարունակ տրտում Նաջիրան:

9

Մթնեց կարծես: Լուսնկան, աչքի պայծառ բերի պես
Մտավ ամպե կոպերի թարթիչների տակ,
Լուսածաղը խավարում փայլուն թրերն իր ճոճեց,
Հեռվից լսվեց զանգերի զվարթ աղաղակ:
Քաղաքի խուլ հեռավոր փողոցներից զողանջով
Կարավաններն ուղտերի եկան ու անցան,
Ու հեռացան, հեռացան, դարձան հեռվում շառաչող
Աղմկահուլալ ջրերի ալիքների ձայն:

Եվ ծուխի պես երկնածիւք, կտուրներէց դեպի վեր,
Բարձրացաւ մեղմ ու թախծոտ մրմունջն աղանի,
Որպես աղերս, աղաչանք և երկյուղած ու կերկեր,
Որ ալլահը նոր օրվա չարը խափանի:

10

Եվ լուսացաւ: Արևը ոսկեսապատ ուղտի պես
Կարծես ծնկի իջաւ լուրթ լեռան պռունդին,
Թափանցեց մի բազմերանդ, բարձր պատուհանից ներս,
Ծիածանի գույներով փովեց հատակին:
Քնած էր դեռ Նաջիրան գունաթափ ու դալկահար,
Գանդուրները տարածված դեմքին և ուսին,
Պատուհանից թափանցող ծիածանը գունավառ,
Փովել էր լուռ, մարմարե, գունատ երեսին:
Եվ թվում էր՝ ունկնդիր վշտամորմոք մի կանչի,
Նրա կուրծքը թախիծով պիտի հառաչեր,
Եվ թվում էր, որ կամաց, Նաջիրայի աղանջին,
Երգում էին սրտահույզ երկու երգիչներ:

ՉՈՐՐՈՐԴ ԵՐԳ

1

Թիկնած թավիշ բարձերին, դեմը դեյլանն արծաթի,
Աբդուլ խանը խոհերի ծովի մեջ անվերջ,
Ինչպես մռայլ մինարեն թանձր մշուշը պատի,
Ինչպես դեյլանը ծխի քուլաների մեջ:
Ղեյլանի մոտ ծնկաչոք, հարեմի ծեր ներքինին
Նստել էր լուռ, սիրտը մուրթ կասկածներով լի,
Խանը կանչել է նրան, ու նա հայացքը դետնին,
Սպասում էր սրտադող նրա դեմ հիմի:
Սակայն ծխում էր նա դեռ, հողին պղտոր ու հուզված
Որպես ծուխով հագեցած ջուրը դեյլանի,
Ու ներքինին փնջում էր մեկ-մեկ կրակը մարած,
Որ ղեյլանը ծխի բիլ քուլաներ հանի:

— Ասա ինձ, չուն, չուտ ասա՛, լա՞վ ես հսկում իմ դռան,
Արդյոք ո՞վ է սողացել իմ պատերից ներս:
Ասա, ինչո՞ւ է աղպես թախծոտ դարձել Նաջիրան,
Ճիշտը ասա, թե չէ, չուն, կսպանեմ ես քեզ:
Ու հայացքը շեշտակի ուղղեց նրա աչքերին,
Որպես արյունով ներկված մահառիթ մի սուր,
Ահից դողաց, դունատվեց ու կարկամեց ներքինին:
— Դե չուտ, էլ մի մտմտա, ճիշտ պատասխան տուր:
Բայց ներքինին լուռ էր դեռ, կարծես ահից քարացած
Հետո բացեց իր սիրտը, վորպես մուրթ գիշեր:
— Երեկ, իրիկվա պահին, իմ տեր, իմ խան ողորմած,
Պարտեզ մտան երգելով երկու երգիչներ:

3

— Նրանք եկան, երգեցին, լաց էր լինում Նաջիրան,
Թարթիչները ամպի պես կախած ջրերին,
Կանգնել էր նա՝ ջրափին թեքված ուռննու նման,
Իր մտքերին, հույզերին, խոհերին դերի:
Ու երբ երգը վերջացաւ, երբ լուռ կախվեց երեկոն
Մոտեցաւ նա Զեյնալին, կանգնեց դեմ դիմաց,
Թավիշ բողբոջը պատռած, որպես վարդի մի կոկոն,
Նա երեսից ուրբանդը իջեցրեց ցած:
Իջեցրեց ու նայեց Զեյնալի սև աչքերին,
Այդ աչքերը փայլեցին, վառվեցին կարծես,
Բայց վռնդեց Զեյնալին, խան, քո չունը, քո դերին,
Ողորմած խան, բոլորը՝ ինչ տեսել եմ ես:

4

Եվ կատաղած արձակեց խանը վայրագ աղաղակ,
Ոտքի թռավ ու պատից մտրակը խլեց,
Ու մտրակը օձի պես Աբդուլ խանի ձեռքի տակ
Օձագալար Փշրոցով օղում պտտվեց:

Իջավ սմբած ներքինու կողերին ու ոտներին,
 Ու ոռնում էր, աղերսում նա գետնատարած.
 — Խա'ն, քո շունն եմ, գթա ինձ, քո ստրուկը, քո գերին,
 Բայց մտրակը բերանին իջավ կատաղած:
 — Շունը ազնիվ է լինում, հավատարիմ, հոգատար,
 Շունը ազնիվ է հսկում իր տիրոջ դռան,
 Շունը վնդում, հաջում է, երբ տեսնում է մի օտար,
 Ու չի թողնում իր տիրոջ գոռյալը գողանան:

5

Բայց հոգնեցին, թուլացան բազուկները ծեր խանի,
 Շարանեց նա մտրակը ներքինու վրա,
 Ինչպես թունավոր մի օձ վերջին թոխչքն իր անի՝
 Մե մտրակը օձի պես փաթաթվեց նրան:
 Իսկ ներքինին նվում էր ու տնքում էր նվաղած,
 Խանը շրջում էր հուզված, փնջում, քրթմնջում:
 Ու զայրույթը, որպես վաղր՝ հազիվ վանդակից փախած
 Ահեղ ձայնով ոռնում էր, կանչում, մռնչում:
 Հետո խաղաղվեց կարծես նրա հոգին ալեկոծ,
 Նստեց, հանձնեց մտքերը դեյլանի ծուխին,
 Բայց դեռ իր սիրտը լափող հոգու խորքերից մի բոց,
 Ժպիտ փռեց նրա ծեր դեմքին ու բեխին:

6

— Մոտ եկ, — ասաց ժպտալով, — իզուր ծեծեցի ես քեզ՝
 Աշխարհի մեջ, ներքինի, ուժով սեր չկա,
 Հեշտ է տիրել երկրներ մեծն Իսքանդարի պես,
 Բայց ոչ մի զորք չի տիրի սիրտը աղջկա:
 Լավ է ինքս իմ ձեռքով, իմ իսկ աղջկա նման
 Քյաբին անեմ, թող լինի կինը Ջեյնալի,
 Թող բախտավոր լինի նա, իմ սիրելի Նաջիրան,
 Դրբանով էլ ծեր սիրտս ուրախ կլինի:
 Գտիր, կանչիր Ջեյնալին եղբոր հետ այս իրիկուն,
 Ասա նրան բոլորը՝ ինչպես ասացի,

Կտամ նրան հող, այգի, կտամ նրան փող ու տուն,
 Թող արժանի լինի նա իրա սիրածին:

7

Հետո, կարծես թե հուզված, երկարածիգ մի շնչով
 Ծծեց ծուխը դեյլանի կարոտով անհագ,
 Կարծես ուզում էր խեղդել իրա հուզմունքը ծուխով,
 Ու մորմոքները սրտի թաղել նրա տակ:
 Իսկ ներքինին ընկճված, հլու լսում էր խանին,
 Ու նայում էր ակնապիշ աչքերին նրա,
 Կարծես ուզում էր հոգու վողջ խորհուրդները քամի,
 Կարծես ուզում էր նրա հոգին հասկանա:
 — Կկանչես ե մի մուլլա, որ դա քյաբինը անի,
 Իսկ Նաջիրան հենց հիմա թող դա ինձ այցի,
 Պատմիր նրան մեկ առ մեկ որոշումը իր խանի,
 Էլ ասելիք չունեմ քեզ, հիմա հեռացիր:

8

Եվ ներքինին գլխիկոր, ծեծված, հուզված ու նկուն
 Թողեց օթախը խանի որպես մի ստվեր,
 Աչքերի մեջ տխրություն, հոգում զարմանքը անհուն,
 Նա իր խանից չէր լսել այդպիսի բան դեռ:
 Իսկ օթախում դեռ ծխի քուլաները դեյլանի,
 Բարդ-բարդ ելնում էին վեր ու իջնում նորեն,
 Ամբոխվում էին օդում, որպես խոհերը խանի,
 Որոնց ծայրը ով գիտե որտեղ էր կորել...
 Ամբոխվում էին օդում, հետո ցրվում, տարածվում
 Մթնշաղի կապտավուն շղարչի նման,
 Երբ զեփյուռի նման մեղմ օթախի դուռը բացում,
 Ներս է մտնում վշտահար, թախծոտ Նաջիրան:

9

Նա մռայլ էր ու տրտում, որպես աշնան առավոտ,
 Որպես անձրևի պատրաստ երկինքը ամպած,

Կանգնել էր լուռ, անվստահ օթախի փակ դռան մոտ,
Հյուսերն արձակ, այտերը արցունքոտ ու թաց:
— Իմ սիրունի աչքերը, թարթիչները թաց են դեռ—
Ասաց խանը սիրտը լի թախիժ ու հուզում,
Գիշերն ամբողջ երգել են երկու ջահել երգիչներ
Ու մորմոքել են դուցե նրան երազում:
Գիտեմ բոլորը արդեն, գիտեմ, սիրել ես նրան,
Այն սեաչյա ու սիրուն երգիչ Զեյնալին,
Կարելի է հնարքով թռչել աստղերի վրա,
Բայց ոչ մի մարդ չի չինի սրտի բանալին:

10

Իսկ Նաջիրան մոմի պես լուռ հալվում էր իր տեղում,
Պանի քաղցր խոսքերից կարծես շանթահար,
Նրա մարմնով կարծես թե սև օձեր էին սողում,
Մնացել էր խոհերի ծովի մեջ չվար:
— Գնա, վարդս, նրա հետ քյաբին կանեմ այս գիշեր,
Գնա, բախտավոր եղիր, թող այդպես լինի,
Արդեն կյանքիս մահաչունչ ծանր ձմեռ է իջել,
Գո բախտով էլ իմ սիրտը ուրախ կլինի:
Եվ օթախից դուրս եկավ խանը թախժոտ ու հուզված,
Մռայլ, որպես անթափանց ու խավար գիշեր,
Իսկ Նաջիրան՝ արցունքոտ իր աչքերի դեմ կանգնած
Տեսնում էր լուռ ու տխուր երկու երգիչներ:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԵՐԳ

1

Իջավ Իրանի վրա իրիկունը հերարձակ,
Ու ծխի պես թանձրացավ մութը կապտավուն,
Եվ իրիկվա կերկերուն, թախժոտ աղանների տակ
Իր կրակները վառեց ամեն հյուղ ու տուն:
Եվ իրիկվա կերկերուն թախժոտ աղանների հետ

Արդուլ խանի պարտեզից բույրեր բարձրացան,
Եսամանը, չուշանը ու վարդենին՝ բուրավետ
Իրենց բույրը ավոեցին օդում ցիր ու ցան:
Ու փիթուղե լեռներից իջավ մեղմիկ ու թաղուն
Սիրահարը վարդերի — զեփյուռը նրբին,
Թպրտացին ծառերին մռայլ չղջիկներն ու բուն,
Ստվերների նման սև, նրանց պես մթին:

2

Արդուլ խանի պալատում, օթախներում, պարտեզում
Տիրում էր մի անսովոր աշխուժ եռ ու դեռ,
Քանը կարծես անհանգիստ, հոգում թախիժ և հուզում,
Իր հյուրերին՝ անհամբեր սպասում էր դեռ:
Իսկ Նաջիրան դեռ տրտում, մտամոլոր էր ահա,
Թպրտում էր իր սիրտը որպես ծախ թև,
Երբ բակ մասով իր էջով ծերունավառ մի մոլլա,
Մեկն էլ լապտերը ձեռին՝ կողքից հեծն:
Ու մինչ մոլլան երերուն, շարժումներով անվստահ
Ծեր ներքինու օղնությամբ իր էջից իջներ,
Սրտերը լի կասկածով, ու քայլերով անհաստատ՝
Պարտեզ մտան սրտահույզ երկու երգիչներ:

3

Եկան, բարձրացան նրանք սանդուղքներով դեպի վեժ,
Բացվեց դուռը նրանց դեմ խանի օթախի,
Ու խանի դեմ Զեյնալի սիրտը կարծես թե հալվե՜ր,
Այդ ամթիլից էր արդյոք, թե՞ նրա վախից:
Ու ներս կանչեց ծեր խանը երգիչներին այդ երկու՝
Աչք ածեղով Զեյնալին ոտքից մինչ դուրս,
Նրա հստակ աչքերում դդաց կրակը հոդու,
Ձգաց թախժոտ երգերի շունչը սրտաբուխ:
— Նստե՛ք, — ասաց ծեր խանը: Ու լուռ նստեցին նրանք
Արդեն բարձերին թիկնած մոլլի դեմ դիմաց:
Զեյնալի մունջ կրճքի տակ բորբոքվել էր մի կրակ,
Ու նա ամբողջ իր մարմնով հանկարծ սարսույց:

— Տղաս, ուրախ դդա քեզ, հալալ քեզ իմ Նաջիրան, —
 Ասաց խանը նայելով դեմքին Ձեյնալին, —
 Նրա հետ քեզ այս գիշեր կսպասենք անսպասման,
 Հիմա մի բան երգեցեք քաղցր, սրտալի:
 Իսկ Նաջիրան պարտեղում, ավազանի եղերքին
 Լաց էր լինում սիրտը խոր սարսափներով լի,
 Տարածվեցին երբ տխուր թրթիռները հին երգի,
 Ու միացան պարտեղի թովիչ բույրերին:
 Ու մինչ արցունքն աչքերին մորմոքում էր Նաջիրան,
 Ահանջն երգի մահաչունչ տխուր կարկաչին,
 Աղախինը մոտեցավ սահող սովերի նման,
 Ու ինչ որ բան չչնջաց նրա ախանջին:

5

Ասաց, շտապ հեռացավ որպես հովը, որ կամաց
 Չոր սաղարթները շոյում, անցնում է արագ,
 Ու Նաջիրան մնաց լուռ, սարսափներով քարացած,
 Իր կոկորդի մեջ խեղդած ճիչ ու աղաղակ:
 Իսկ երգը դեռ գեղգեղում ու տարածվում էր օդում,
 Սրտակեղեք ու հուզիչ որպես մահվան բոթ,
 Ու թրթիռները երգի մի սիրտ էին ծըլատում,
 Ավազանի աստղալի ջինջ ջրերի մոտ:
 Ու թրթիռները կարծես լուսնի արծաթ շողերում
 Մառում, թափվում էին վար, որպես արցունքներ,
 Որ թափվում էր միալար շատրվանը ջրերում,
 Որպես պայծառ, շողշողուն բյուրեղյա ակներ:

6

Այնտեղ երգում էին դեռ: Ու երգի տակ օրորուն
 Ոլորում էր ծեր մուլան թաղբեն սև սաթի,
 Երբ մի պառավ վառ չայի բաժակները դուշողդույն
 Մեջտեղ դրեց սինիով փայլուն, արծաթի:

Ու երբ երդը ավարտվեց, խանը դարձավ Ձեյնալին.
 — Այրես, տղաս, — ասաց նա, — բախտավոր լինես,
 Ու ծաղկաղարդ մի բաժակ մեկնեց նրան՝ թեյով լի,
 Որ հալոցքի պես ոսկու ծփում էր կարծես:
 — Նաջիրային ներս բերեք, — կանչեց խանը սրտաբաց,
 Թեղ դա, նստի, այս գիշեր պսակն է նրա.
 Ու Ձեյնալի սիրտը խոր թռչունի պես թալրուաց,
 Ու ջերմություն դդաց նա այտերի վրա:

7

Սակայն չկա Նաջիրան, նրան փնտռում էին դեռ,
 Ահից դեղնել էր արդեն ծերուկ ներքինին,
 Սիրտը լի էր երկյուղով, դողում էին ոտ ու ձեռ,
 Աղերսում էր, որ նրան մի կերպ գտնեին:
 Աբդուլ խանի պալատում խառնվել էին իրար,
 Փնտռում էին ամեն տեղ, ամեն մի անկյուն,
 Սակայն խուր, Նաջիրան չէր երևում ու չկար,
 Ողջ պալատը հագել էր վիշտ ու տխրություն:
 Իսկ շատրվանը դրսում լուսնի արծաթ շողերում
 Հեկեկում էր ու թափում աստղե արցունքներ,
 Որոնք թափում էին լի ավազանի ջրերում,
 Որպես պայծառ, շողշողուն բյուրեղյա ակներ:

8

Եվ մինչ փնտռում էին դեռ Նաջիրային պալատում,
 Ձեյնալը լուռ դատարկեց բաժակը չայի,
 Նրա ծովի պես փրփրած հոգում սիրտն էր թալրտում,
 Ինչպես փոթորկի պահին թևերը ճայի:
 — Երգիր, — ասաց ծեր խանը, — մենակ երգիր այս անգամ
 Թող քո երգի զոզանջով դա քո Նաջիրան —
 Եվ բեխերի տակ կարծես կախվեց ժպիտ մի տարաամ,
 Ու սպրդնեց կարծես նա կտավի նման:
 Բայց սարսափից չովեցին սև աչքերը Ձեյնալի,
 Ձայնը խղաց, երգի տեղ լավեց թույլ նվոց,

Ու կոկորդից վարդազունն ու վառ արյունն էր գալիս,
Որպես սրտում կուտակված սիրո այրող բոց:

9

Մինչ Սաֆարը հեկեկում, համբուրում էր Ձեյնալին,
Քարացել էր իր տեղում արդեն ծեր մոլլան,
Եվ քրքջում էր խանը չարախինդ ու սրտալի՝
— Էյ, կանչեցեք, հարանիք է, թող գա Նաջիրան:
— Էյ, կանչեցեք, — գլխի պես հռհռում էր խանը ծեր, —
Թող գա, թող գա, այս գիշեր պսակն է նրա.
Մինչ այդ երկու երգիչներ արդեն տեղից բարձրացել,
Գնում էին դլխիկոր՝ փաթաթված իրար:
Մինչ շատրվանը այնտեղ, լուսնի արծաթ շողերում
Հեկեկում էր ու թափում աստղե արցունքներ,
Թողին պարտեզը խանի խորունկ մի վերք սրտերում,
Ու հեռացան արցունքով երկու երգիչներ:

10

Առափնյայն Ձեյնալը էլ չտեսավ վառ արվին,
Սառել էին վարդարույր շուրթերը նրա,
Իսկ խանի վառ պարտեզի ջինջ ավազանի ափին՝
Գտան մետաքս մի ուրբանդ ու մի չազըրա:
Ու ծառաները վշտով ու արցունքոտ աչքերով
Ավազանից հանեցին Նաջիրայի դին,
Նրա ճակատը կարծես հովհարում էր մեղմ մի հով,
Եվ համբուրում էր կարծես ոսկեվառ արվին:
Ու թվում էր՝ ունկնդիր վշտամորմոք մի կանչի,
Նրա կուրծքը թախիծով պիտի հառաչեր,
Ու թվում էր, որ կամաց, Նաջիրայի ականջին
Երգում էին սրտահույզ երկու երգիչներ:

Եվ դերվիշը ավարտեց: Ու մորուքին ձյունափառ
Թափեց, վշտի, թախիծի դառը արցունքներ,
Հառաչեցին նրա հետ՝ լսողները վշտահար,

Բազմությունը քարացած սպասում էր դեռ:

— Դերվիշ, ինչո՞ւ ես լալիս, ի՞նչն է տանջում քո հոգին:

— Դերվիշ, ինչո՞ւ ես մռայլ կախված ամալի պես.

— Դերվիշ, ո՞վ է, արդյոք ո՞վ ծնունդ տվել այդ երգին,

Որ մորմոքով ու վշտով պատեց մեղ ու քեզ:

Եվ գլխարաց, գլպղված, մաղերն հովից ցիր ու ցան,

Միրտը հանձնած խոհերի թանձր մշուշին,

Արցունքախեղդ կոկորդով չչնջաց նա մեղմաձայն.

— Այդ Ձեյնալը եղբայրն էր դժբախտ դերվիշի:

1934—1935

ՁԱՅՆ ՈՒ ՄԵՋՆՈՒՆԸ

(Արևելյան գրույց)

Ռոմանոս Մելիքյանի հիշատակին

Մեզանից հեռու դարեր ու դարեր,
Երբ ապրում էին Մեջնունն ու Լեյլին,
Իրանի արքան հաղած պարզ շորեր՝
Մեկ-մեկ իր երկրում պտույտ էր դալի:
Մտնում էր մեջիդ, բազար, չայխանա,
Ու դերվիշների երգն էր ունկնդրում,
Համամ էր դնում բուրբի հետ նա՝
Տեսներ՝ թե երկրում ինչպես են ապրում:
Տեսներ՝ ո՞վ է գոհ, ո՞վ է հայհոյում,
Ո՞վ է կյանք մաղթում իր շահն չահին,
Մերթ գոհ էր մնում ու մերթ դայրանում,
Ու այդպես գալիս, բազմում էր դահին:

Մի օր էլ այդպես անցնում էր արքան
Շուայլ բաղարի անծայր երկայնքով,
Հանկարծ լսեց մի թովիչ երգի ձայն—
Երգում էր մեկը սրաի մորմուքով:
Երգում էր՝ հողին դրած երգի մեջ,
Ամեն հնչյունից բացվում էր մի վարդ,
Ամեն մի բառից կաթող հույզն անչեջ
Մտնում էր սրտեր — ծեր, երիտասարդ:
Եվ լսում էին հմայվածի պես

Ջահել այդ երգչի երգը կարկաչուն,
Ու սոխակների խումբ լինե՛ր ասես՝
Որ կրծքից երգով դուրս էին թռչում:

«Յար, հայացքով քո աչքերի
Առաջնին է լուսանում,
Քո ժպիտով՝ ալ վարդերի
Կոկոններն են բաց անում:

Թե դաշտ դուրս գաս՝ ծաղիկների
Գորգ կը դառնա քո ճամբան.
Եթե տիրես՝ յար, անտառի
Եղնիկները կը ողբան:

Թե զիշերով վերև նայես՝
Մութ ու մռայլ երկնքին,
Դեմքիդ ցուրը լուսնյակի պես՝
Լույս կը տա ողջ աշխարհքին:

Քեզանով են դառնում պայծառ
Ամեն մի սիրտ ու հողի,
Մենակ ինձ ես մատնել դու, յար,
Տառապանքի, մորմուքի՛:

Թարթիչներիդ թուրն է իջել,
Բացել սրաիս վերքը վառ,
Յար, դաշտերի շաղն այս գիշեր
Ես եմ լացել քեզ համար»...

Լսում է արքան երգը մինչև վերջ,
Լսում է երգի կանչը հյութալի,
Գտնում է արքան խիտ բազմության մեջ
Ջահել այն երգչին, ու հարց է տալիս.
— Լսիր ինձ, եղբայր, մի հարց ունեմ ես.
Այդ ո՞ւմ երգն էիր երգում դու հիմա:

— Մեջնունի երգը, մի՞թե չըզիտես.
Լեյլու մասին այդ դովքը, հիմա՛ր:
Լեյլին հաղվադյուտ զարդ է գեղանի,
Նրա պես աղջիկ չի եղել, չըկա,
Դեռ չի տիրացել շահն էլ իրանի
Այդպիսի սիրուն, չքնաղ աղջըկա:

Երգիչը ասում ու շուռ է գալի,
Քալատ է գնում արքան զայրացած,
Նստում է գահին, հրաման է տալի՝
Վեղիբը գալիս, խոնարհվում է ցած:
— Ինչպես է եղել, որ Լեյլու նման
Չքնաղ աղջիկն իմ հարեմում չըկա.
Իսկույն գընացեք, փնտրեցեք նրան,
Թե չէ՝ ձեր գլխին մեծ փորձանք կըգա:
Վեղիբն արքային գըլուխ է տալի,
Շահի օթախից տխուր հեռանում,
Կանչում է իսկույն իր ծառաներին,
Առնում է նրանց ու ճամբա ընկնում:

Եվ գնում է նա, գիշեր, առավոտ,
Ամեն տեղ լինում, ամեն տեղ փնտրում.
Եվ մի իրիկուն մի աղբյուրի մոտ՝
Գտնում է Լեյլուն, առնում ու բերում:

Մտնում է վեղիբն օթախն արքայի,
Գըլուխ է տալիս, ասում է նրան.
— Թող անմար մնա արևը շահի,
Գտել, բերել եմ ես այն աղջըկան:
— Ներս բերեք նրան, ներս բերեք

իսկույն—

Հնչում է շահի հրամանն ահուկի.
Ու ներս է մտնում զզզված, դժգույն,
Ոտները բորիկ, թխադեմ Լեյլին:
Նայում է արքան, նայում ծիծաղով,
Ու ոտքից գլուխ չափում է նրան,

Դողում է Լեյլին սրտի երկյուղով,
Անձրեկց ծեծված եղնիկի նման:

— Այդ քո՞ մասին են երգիչներն երգում—
Ասում է շահը, ծիծաղում քահ-քահ,
Դողում է Լեյլին, սիրտն է մորմուքում,
Ու արքան ահա թարձրանում է դահ:
— Դուրս տարեք սրան — ձայնում է
արքան,—

Տարեք, թող Լեյլին առանձին մնա:
Իսկ դուք Մեջնունին գտեք անպայման,
Թող դա՛ ինձ այստեղ պատասխան տա նա:

Յեղնում են մարդիկ, ընկնում սար, արոտ,
Ամեն տեղ լինում, ամեն տեղ փնտրում,
Ու մի առավոտ, հենց իր հոտի մոտ
Մեջնունին գտնում, սլալատ են բերում:

Ու սիրտն անհանգիստ, մոռյլ խոհերով,
Մանում է Մեջնունն օթախը շահի,
Ոչխարի մի մորթ զցած ուսերով՝
Կանգնում է, շահին գըլուխ է տալի:
— Առա, տեսե՞լ ես արդյոք դու Լեյլուն.
Փաղաչուք ձայնով հաբցնում է արքան:
Մեջնունի սիրտը կարոտով անհուն
Բացվում է ասես ծաղկոցի նման:
Դողում են նրա շուրթերն արևատ,
Աչքերից սրտի բոցն է դուրս նայում,
Ասես թե հողում հեկեկանքով դառ՝
Անտեր մնացած մի գառ է մայում:

— Ողորմած արքա, տեսել եմ նրան.
Նրա հայացքի լույսով եմ ապրում.
Սրտիս մեջ նրա պատկերն աննման
Ես ման եմ ածում կանաչ սարերում:
Երբ առավոտյան հանդ եմ դուրս գալի,

Իմ դեմ դաշտերի ծաղկունքն են բուրում,
 Թվում է, որ ես կարոտանքով լի:
 Լեյլու վարդաբույր շուրթն եմ համբուրում,
 Երբ հովի շունչով կանաչն է ծփում,
 Արտերի ծովն է օբորվում վետ-վետ,
 Ասես թե Լեյլին պահված մի թփում,
 Իր քնքույշ ձայնով խոսում է ինձ հետ:
 Երբ կաքավներ են դուրս թռչում հանկարծ,
 Որ պահվել էին թուփերում լեռան,
 Թվում է Լեյլու սրտում բուն զբրած
 Հառաչանքներն են, որ կրծքից թռան:
 Եվ երբ մի եղնիկ քերծի կատարից
 Երկչոտ հայացքով հեռուն է նայում,
 Թվում է Լեյլին կախարդում է ինձ,
 Թվում է նա է հոգիս հրմայում:
 Չնքաղ է Լեյլին, ողորմած արքա,
 Նա ասող է պայծառ՝ խավար իմ հոգում,
 Նրա նմանը չի եղել, չըկա
 Ոչ երկրի վրա և ոչ երկնքում:

Զարմանք է պատում ասես արքային,
 Լցվում է հողին հեղնանքով անհուն.
 Հնչում է ահա հրամանը չափի.
 — Ներս բերեք սրա սիրելի Լեյլուն:
 Մեջնունի զեմքը փոխվում է իսկույն,
 Այրվում է սիրտը կասկածներով լի,
 Օթախ է մտնում զզզված, դժգույն
 Ոտները բորիկ, թխադեմ Լեյլին:
 Հեռում է արքան ծաղրի ծիծաղով.
 Մեջնունը տխուր նայում է նրան՝
 Դողում է Լեյլին սրտի երկյուղով,
 Կենդանի բռնած եղնիկի նման:

— Մա՞ է քո Լեյլին, սրա՞ն ես սիրում,
 Սրա՞ն ես դուվում — ծաղրում է արքան —

Կանչեք, թող-պար դան կանայք իմ սիրուն,
 Որ դեղեցիկն ու տեղը զգան:
 Ու ներս են բնկնում հրեյով իրար
 Կիսամերկ կանանց մեծ մի բազմութուն,
 Ու զալարվում է մեղկ մի պորտապար,
 Կրքոտ ձևերով իրար են բռնում:
 Պարում են նրանք, փարվում արքային,
 Նայում են նրան լրբենի զեմքով,
 Ու կուչ էր եկել Լեյլին այդ պահին,
 Գետնին էր նայում անմեղ հայացքով:

Պարն ավարտվում է: Գնում են կանայք:
 Դեպի Մեջնունն է շուռ դալիս արքան.
 — Տեսա՞ր, որքան է Լեյլին ալյանդակ,
 Իմ չքնաղադեղ կանանց հանդիման:
 — Ախ, եթե նրան իմ աչքով նայես,
 Իմ սրտով զգաս, ողորմած արքա,
 Այն ժամ կիմանաս, որ իմ Լեյլու պես
 Չքնաղ արարած աշխարհում չըկա:
 Այն ժամ կըտեսնես, կզգաս դու շատ բան,
 Կզգաս սարսափը քաղցի ու վախի,
 Իսկ դրա համար պետք է մեր արքան
 Ոչ թե շորերը, այլ սիրտը փոխի:

Լսում է արքան, մոռացվում հոգով,
 Ոչ մի սլառասխան չի տալիս նրան,
 Նշան է անում բոլորին ձեռքով,
 Որ թողնեն իրեն, վեր կենան դնան:
 Եվ ասում են թե, այդ օրից ի վեր,
 Մոռյլ է դառնում արքան ավելի,
 Եվ իր երկրի մեջ երկար տարիներ
 Շորերը փոխած էլ ման չի դալի:




Թ
ԱՐԳԱՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Գ Տ Ա

(Գրութե)



նցա անտառով,
Այնտեղ սակայն
Չէի մտածում
Գտնել մի բան:

Տեսա սովերում
Ծաղիկ կեցած,
Ու աչքը աստղի
Փայլ էր առած:

Բաղել ուղեցի,
Մի ձայն հանկարծ—
«Ընկեր, ուզում ես
Լինեմ թոշնա՞ծ»:

Ես արժատներով
Վերցրի նրան,
Եվ տարա ինձ մոտ,
Պարտեզն իմ տան:

Նա խաղաղ մի տեղ
Մնում է զեռ,
Շարունակում է
Տալ ծաղիկներ:

ԿՅԱՆՔԻ ԿԱՆՈՆԸ

(Գլոթե)

Ուղում ես ուրախ, երջանիկ ապրել,
Սովորիր անդարձի մասին հող չանել.
Սովորիր, որ ոչինչ քեզ չըվրդովի,
Ներկան վայելիր, ապրիր լիովին:
Սիրտըդ առելուց հետո թող լինի,
Ապագան ասածուն դու ապավինի:

ՀԱՅՆԵԻՑ

1

Կանգնած է մենակ մի եղենի,
Հյուսիսում մի մերկ բլրի վրա,
Ննջում է նա լուռ, սառցի, ձյունի՝
Ճերմակ ծածկույթն է սլառել նրան:

Երազում է՝ մի արմավենի,
Որ արևելքում այն հեռավոր
Կիլիչ ժայռի մի կողմն հիմի՝
Թախծում է լռիկ ու մենավոր...:

Ի՞նչ է ուղում շիթն արցունքի,
 Ձէ՞ որ նայվածքս է պղտորում,
 Իմ աչքի մեջ նա մնաց ետ,
 Նա մնաց ետ հին օրերում:

Նա ուներ շատ փայլուն քույրեր,
 Որ հոսել են բոլորն արդեն
 Իմ տանջանքի, խնդության հետ,
 Գիշերվա մեջ ու հողմի դեմ:

Եվ ասողերն են հոսել կապույտ
 Եվ հոսել են մշուշ ինչպես,
 Որոնք խինդն ու տանջանքը այդ,
 Թափանցեցին սրտիցս ներս:

Ախ, իմ սերը հոսեց նույնիսկ,
 Հոսեց, ինչպես դատարկ մի շունչ,
 Արցունք իմ հին ու մենավոր,
 Հոսիր նույնպես դու անմոռնչ:

Ձեռքդ դիր սրտիս, քաղցր իմ սիրելի,
 Լսո՞ւմ ես ինչպես բախում է էլի,
 Ապրում է այնտեղ փայտադորձ մի չար,
 Շինում է նա հար դադաղ ինձ համար:

Գիշեր ու ցերեկ բախում է, թակում
 Վաղուց է անքուն աչքս չեմ փակում.
 Ախ, շտապեցեք, փայտադորձ վարպետ,
 Որպեսզի շուտով քուն մտնեմ հավետ:

4.

Վարդը վառ, շուշանը, աղավնի ու արև
 Ինձ երբեմն սիրո բերկրանքով են վառել,
 էլ չեմ սիրում նրանց, սիրում եմ մի էակ:
 Եվ փոքրիկ, և նրբին, և մաքուր ու միակ,
 Նա ինքն է ողջ սիրո աղբյուրը՝ վարարող,
 Եվ վարդ է, շուշան է, աղավնի ու արև:

ԿԱԼԱՆԱՎՈՐԸ

(Պուշկին)

Նստած ճաղերից ներս, բանտի մեջ իմ թաց,
 Տեսնում եմ արծիվ մի՝ դերի մեծացած.
 Տխուր իմ ընկերը թևերը ցնցում,
 Ֆածում արյունոտ նա իր կերն է կտցում:

Կտցում է, դցում նա՝ նայում է դեպ վեր,
 Կարծես թե նա ինձ հետ նույն բանը խորհեր,
 Կանչում հայացքով իր, կանչով արծվային,
 Ասել է ուղում նա — «Թռչենք միասին:

Սգտտ թռչուններ ենք, Ժա՛մ, Ժա՛մ է, ընկեր,
 Այնտեղ, ուր ամպից դեն ճերմակ են սարեր,
 Այնտեղ, ուր կապտում է ծովեզրը ափակա,
 Այնտեղ, ուր շրջում է լուկ հողմը... և ես...»

ԹԱԼԻՍՍԱՆ

(Պուշկին)

Ուր որ ծովն է հար ողողում,
Լերկ ժայռերը ամայի,
Ուր լուսինն է ջերմ շողջողում
Քաղցր իրիկվա խավարին,
Ուր հարեմում են հեշտանքով
Կյանք վարում շատ մուսուլման,
Մի կախարդ կին փաղաքշանքով
Ինձ հանձնեց մի թալիսման:

Եվ գզվելով նա ասաց ինձ—
«Պահպանիր այս թալիսման,
Միջին ուժ կա կախարդալից...
Քեզ սիրով է տրված այն:
Ոչ ցավերից, ոչ շիրմից հեք,
Բուք, մրրիկում սաստկաձայն,
Քո գլուխը, հոգյակ, երբեք,
Ձի փրկի այս թալիսման:

Եվ գանձերը Արևելքի,
Ձի տա երբեք քեզ պարզե,
Եվ չի ընկճի մարդարեի
Պաշտողներին քո առջև.
Եվ քեզ, գրկի մեջ ընկերիդ,
Օտար, տխուր երկրից այն,

Հարավից մինչ հյուսիս, երկրիդ,
Ձի հասցնի այս թալիսման:

Սակայն երբ քեզ կախարդանքով
Հանկարծ դուրթեն նենդ աչքեր,
Մութ գիշերին շուրթերից քո
Համբույր քաղեն առանց սեր,
Սիրելիդ իմ, թե հանցանքից,
Սրտի վերքից ամենայն,
Թե դավից, թե մոռացումից,
Կըլահի այս թալիսման:

Կ Տ Ս Կ

(Շեմչենկո)

Երբ մեռնեմ ես, թաղեցեք ինձ
Մեր Ուկրաինայում.
Մի բարձրաբերձ բլրի վրա,
Արձակ տափաստանում.
Որ արտերը, Դընեպրը լուրթ,
Եվ ափերը ժայռոտ
Երևան ինձ, լսեմ զետի
Շառաչումն ու որոտ:

Ուկրաինայից երբ տանի նա
Դեպի ծովը կապույտ
Ոսոխների արյունն, այն ժամ
Դաշտեր, սարերը լուրթ
Կըթողնեմ ես, կըսլանամ
Երկինք՝ աստծու մոտ այն
Աղոթելու: Իսկ մինչ այդ ես
Չեմ ճանաչում նրան:

Թաղեցեք ու ելեք ոտքի,
Շղթաները կտրեք,
Եվ թչնամու չար արյունով
Ազատություն ցողեք:
Եվ ինձ այդ մեծ ընտանիքում
Եվ ազատված և նոր,
Մի մոռացեք, հիշեցեք ինձ
Խոթելով անչար, անդորր:

Օ Ր Ո Ր

(Շեմչենկո)

Օյ, քընիր, քընիր, զավակ մինուճար,
Օր-դիշեր այդպես:
Ուկրաինայով կանցնես, զավակ իմ,
Ու մեղ կանխես:

Ձավակ իմ, զավակ, հորըդ չանիծես,
Ձըհիչես նրան,
Թափիր անեծքըդ ինձ՝ նզովյալիս,
Ինձ՝ քո մոր վրան:

Երբ չեմ լինի ես, մարդկանց մեջ չերթաս,
Անտառը մտիր,
Նա հարցեր չի տա, չի տեսնի երբեք,
Այնտեղ էլ չըջիր:

Եթե անտառում դանես՝ փաթաթվիր
Փռունչենուն այն,
Չէ՞ որ երբեմըն, զավակ մինուճար,
Սիրել եմ նրան:

Թե դյուղ կըգնաս, այն խրճիթներում
Երբեք մի թախծիր,
Թե մայր կըտեսնես երեխաներով՝
Մի նայիր, անցիր:

(Շեմզենկո)

Հարուստ է իմ մայրըս ապրում,
Ծընել է նա ինձ պալատում,
մետաքսով պատել,
Ոսկով, թավշով պճնել է ինձ,
Որպես ծաղիկ պահել է ինձ,—
Այդպես եմ աճել:

Մեծացա ես՝ սքանչելիք,
Սև հոնքերով ու դեղեցիկ
Եվ շարմաղերես:
Սիրեցի ես մի աղքատի,
Չըտվեց ինձ մայրս մարդի,
Ու մնացի ես:

Ոսկեղարդար սենյակում այն,
Ապրել իմ կյանքը աղջկական...
Չար բախտըս էր այդպես:
Որպես մենակ ցողուն հովտում,
Մենության մեջ տխուր-տրտում
Պառավում եմ ես:

Աշխարհում ես չեմ հիանում,
Ոչ ոքի հետ չեմ փայփայվում...
Իսկ պառավ իմ մոր,—
Արդեն ներիւր դու ինձ, մաժա,
Կընդովեմ քեզ մինչև մահ
Ամեն, ամեն օր:

(Շեմզենկո)

Տըրորեցի կածանը ես
Հովտով վար,
Մարի վըրով, աղավնյակ թմ,
Մինչ բաղար:

Վաճառեցի կաղակներին
Ես դաթա,
Սպասեցի, աղավնյակ իմ,
Շահին տա:

Երկու դրոշով, երկու դրոշով
Խըմեցի,
Մի կոպեկով ես դուղուկչի
Վարձեցի:

Նվաղիր դու, այ դուղուկչի
Դուղուկով,
Թշվառությունըս մոռանամ
Դըրանով:

Տես, թե ահա ինչ աղջիկ եմ
Դարձել ես.
Դու ինձ ուզիր, աղավնյակ իմ,
Կըղամ քեզ:

Օ Ր Ո Ր

(Իլիա Ճավճավաճե)

Նանի, նանի, նանիկ արա,
Քեզ ի՞նչն է վիշտ պատճառում.
Ինչո՞ւ ես վեր թռչում, բալա,
Լացող աչքերդ ինձ հառում.
Չէ՞ որ բախտըդ դեռ անմեկին,
Նախազգացումն մանկական
Չի նկարում քո հայացքին
Վրացու պարտքը սրբազան.

Դու վախեցար ինչի՞ց այդպես,
Օրոր, մանկիկ, օրոր քեզ:

Քանի դեռ դու մանուկ ես մի,
Ժամանակներ մինչև դան,
Ձգտիր, մանկիկ, քնել հիմի,
Ձգտիր, ձգտիր հանգստյան,
Կաճես, օրերը երբ կըդան,
Ձեռներըդ ամուր կըլինեն,
Երազներըդ պատանեկան
Մանկիկ, կռվի կըփոխվեն:

Այդ ժամանակ չըսարստիես,
Օրոր, մանկիկ, օրոր քեզ:

Կըտեսնես դու սև բախտը մեր,
Ծիությունը մեր կորած,
Հերոսությունն ընկած, ավեր
Հայրենիքը որբացած,
Վառիր բոցը դու քո սրտի,
Ձարկ թշնամուն ոնց կայծակ,
Գընա, որպես շիտակ որդի,
Հայրենիքին նահատակ:

Այն ժամանակ չըսարստիես,
Օրոր, մանկիկ, օրոր քեզ:

Քնքուչ է սիրտը ամեն մոր,
Երկրի համար կամրանա.
Ինչի՞ս է պետք այն որդին, որ
Նրա զոհը չըդառնա,
Թե չի զոհում հայրենիքին,
Երբ նա կարիք ունի դառ,
Նա չի սիրում իր դավակին,
Մանկիկ, մայրը այդ թշվառ:

Ոչ, ոչ այդպես չեմ կորչի ես,
Օրոր, մանկիկ, օրոր քեզ:

Հայրենիքի համար եմ քեզ
Իմ ստինքով կերակրում,
Նրա բախտի համար քեզ ես
Ձոհում, կռվի եմ մղում:
Եվ քաղցը կուրծքը ամեն մոր
Թույն կըդառնա այն որդուն,
Հայրենիքի համար ով որ
Ծուլանում է մեռներուն:

Եվ չես կորչի դու եւ այդպես,
Օրոր, մանկիկ, օրոր քեզ:

Գիտցիր, որդի, որ մահը այն
Մեծ է, մեծ է ու անհուն,
Որդին անմահ է անպայման,
Երկրին երբ զոհ է դառնում.
Երկինքն է քեզ տվել երկիր,
Նրա համար թի մեռնես,
Կամօքվի մայրըդ վշտակիր,
Որ դու մեռար մարդու պես:

Եվ կսփոփեմ ես ինձ այդպես,
Օրոր, մանկիկ, օրոր քեզ:

Մանկիկ, դու քո ընկած պահին
Հայրենիքին կըժպտաս,
Ու քեզ տըված արյունն անդին
Հերոսաբար ետ կըտաս.
Կըհեռանաս դու ժպիտով,
Որ չես դավել քո երկրին,
Որ հաղթել ես դու քո մահով
Հայրենիքիդ խոհ մահին:

Այն ժամանակ կուրախանաս,
Օրոր, օրոր, իմ բալաս:

Եթե այդպես դու մահանաս,
Հուշարձան չի հարկավոր,
Այդպես անմահ դու կըմնաս,
Արցունքների պես քո մոր.
Որդյակ, այս է օրորը քեզ,
Հավատարիմ կաց նրան,
Ինչ որ խոսքով ասացի ես՝
Դու վերածիր զործի այն:

Ես քեզ երկրին զոհ ծընեցի,
Օրոր, փոքրիկ վըրացի:

ՀԱՅՆԵՒ ԼԵԳԵՆԴԱՆ

(Ի. Գրիշաչվիլի)

1.

Երիտասարդ նաղաստին, երիտասարդ բաղուկով,
ձեղքում էր ծովն ալեծուփ ու սլանում նավակով.
Երբ այդ ժամին սկսեց երգել էլֆան ծովային՝
Հուզվեց սիրտը այդ երգից, հափշտակվեց նավատուն...
Եվ երբ ծովի այդ ոգու երգի մրմունջը մարեց,
Մոռացավ զեկը նավի ու նավաստին շիթթվեց.
Սլիքները բարձրացան, շուռ եկավ նավը ծովում,
Եվ ինքնասպան եղավ նա ծովի հուզված ջրերում:
Սլիքները հորձանքով տարածվեցին նրա շուրջ,
Ծովն իր ավարը դրկեց, կրճքին սեղմեց անմուռնչ...

2.

Ճիշտ է, որ չես երգում դու, հանգերին չես հարմարվում,
Զի հմայվում քեզանով կոկորդիլոսը ծովում.
Ճիշտ է, էլֆան չես ծովի, անեյ աղջիկն ու ոգին,
Եվ քո աչքերը կապույտ գույն չեն տալիս երկնքին,
Սակայն քո մեջ ինչ որ բան, ինչ որ ուժ կա կախարդուն,
Որը երգեր դրելիս ինձ արդելում է թագուն:
Ծանրանում է վիշտն իմ խոր, սրտիցս արցունք է պոկում,
Գեղ նայելիս ամեն բան մոռացվում է իմ հոգում,
Մոռանում եմ ես երգի ձևը, բառերն հուզական,
Վախենում եմ ինձ վրա դառնա այն հին լեզենդան:

1914

ՈՐՐԵՐԻ ՄԱՅՐԸ

(Կոստա Խետադուրով)

Մե ազնաւն է կորչում,
Սառչում է ձյան մութում.
Նար գյուղն է լեռնային
Ճայտի վրա ննջում:

Լալ է գիշերն երկար՝
Քան օրը ծանր ու ժանտ.
Ինչ որ տեղ լույս տկար,
Կըրակի բոց մարմանդ:

Խղճուկ մի ապաստան—
Այնտեղ անակ մի հին.
Աղքատ մի ընտանիք
Նայում է կըրակին:

Եվ այրին չի քընում,
Քուն չի գալիս վըրան,
Դեռ ու դեն է ընկնում,
Տաքացնում է կաթսան:

Եվ լույսի տակ դժգուշն,
Այն օջախի մոտ վառ.

Երեխեքն են պառկում
Քուրճերի մեջ, նիհար:

Նույնիսկ դայն է սարսում
Քաղցից թալալուր.
Մահն այն դուռն է ծեծում
Վիճակված է ում որ:

«Որդիք, ուրախ կացեք,
Լորին է, այ, եփում.
Քալ է, բալ է լացե՛ք»—
Մայրն է մեղմ սփոփում:

Փայտը վառվեց — մարեց...
Ծուխը աչք է ուտում.
Մայրը կաթսայի մեջ
Լուռ արցունք է թափում:

Խուլ հառաչեց այրին,
Գիշերն աչք չը փակեց—
«Բընած է ձյան տակին—
Աղպես նա մեղ խարեց:

Մնացինք հինդ հողի.
Թողեց ձեր հայրը ձեզ,
Մատնեց ինձ մորմոքի...
Շուտով կերթամ և ես:

Մեզ կերակրողն անգին
Խելոք էր ամենքից.
Շուտ ավանդեց հողին
Հեռացավ որրերից:

Լսիր դու ինչ կասի
Քո սիրելի որդին.

Տեղ տաս՝ ընտանիքըդ
Կը պառկի քո կողքին» :

Մայրը կաթսայի մեջ
Լուռ արցունք է թափում .
Փայտը վառվեց ,— մարեց . . .
Ծուխը աչք է ուտում :

Լաց լինելուց հոգնած՝
Ու թեքված պաղ մոխրին՝
Քննում է կրտսերը ,
Լավադուլին աշխարհին :

Բոլորին էլ նման
Փորձանք է վիճակված .
Ուր չեն պարտված , դեռ կան
Եվ սև կարիք և քաղց :

«Աղաչում եմ , մամա՛ ,
Ուտել եմ ուզում ես» —
«Լորին կեփի հիմա ,
Կըկերակրեմ ես ձեզ» :

Իսկ ջուրն եփում է դեռ ,
Պոռնակից դուրս վազում ,
Հինգ որբեր անհամբեր
Ճաշի են ըսպասում :

Օրորեց գլխահակ
Մայրը որդուն իրա ,
Քրքրված մի վերմակ
Փռեց նրանց վրա :

Որդիքը վրդովված
Քննեցին դեռ ու դեն ,
Իսկ նա լացն իր զսպած
Կարող է լալ արդեն :

Վշտից էր նա խոսում
Լորու մասին երկար .
Իսկ նա քար էր խաչում
Իր որբերի համար :

Արևը կըծաղի
Հյուղին շող կըդեպնի ,
Լոկ այրու դառնադին
Կըսկիծը չի քընի :

Գ Ր Ե Ն Ա Դ Ա

(Մ. Սվետլովից)

Գնում էինք չարքով,
Սլանում մարտերում,
Եվ «Խնձորի» երգը
Պահած առամներում,
Ախ, երգը, այդ երգը
Պահում են մինչ հիմի
Կանաչները մատղաշ,
Քարերն տափաստանի:

Ֆայց այլ մի, այլ երգ է
Երկրի մասին հեռու
Իմ ընկերը իր հետ
Թամբի վրա կրում:
Երգում է, դիտում նա
Երկիրն մտերիմ.

— Գրենադա, Գրենադա,
Գրենադա դու իմ:

Նա երգը, այդ երգը
Անդեր, անդեր սերտեց...
Տըղային ո՞րտեղից
Այդ թախիծը պատեց:
Ասա, Ալեքսանդրովսկ,
Պատասխան տուր, Խարկով,

— Վաղո՞ւց է երգում եք
Սպանական հանդով.
Ասա, Ուկրաինա,
Հաճարի մեջ չի՞ այս
Տարաս Շեվչենկոյի
Փափախը ընկած:
Ո՞րտեղից այդ երգը,
Ընկեր մտերիմ.
— Գրենադա, Գրենադա,
Գրենադա դու իմ:

Ասել հապաղում է
Երազող գյուղացին.
Եղբայր իմ, Գրենադան
Գրքում կարդացի:
Գեղեցիկ անուն է,
Մեծ պատիվ է դա,
Գրենադայան չրջան
Սպանիայում կա:
Թողի ես իմ հյուզը,
Գնացի կովի—
Գրենադայում հողը
Գյուղացուն տըվի:
Մնաք բարով, տուն իմ,
Ծընող, մտերիմ,
— Գրենադա, Գրենադա,
Գրենադա, դու իմ:

Թոչում, տենչում էինք,
Որ սովորենք արագ—
Գիտությունը կովի—
Ռումբի լեզուն կրակ:
Բարձրացավ արևը
Ու իջավ կրկին,
Հողնեց ստեպներում
Մինչև անդամ ձին.

Բայց «Խնձորի» երգը
Աղեղով տանջանքի,
Խփում էր ջոկատը
Ժամանակ-ջութակին:
Ապա ո՞ւր է երգըդ,
Ընկեր մտերիմ.
— Գրենադա, Գրենադա,—
Գրենադա դու իմ:

Եվ խփված մարմին մի
Գետին ընկավ ահա,
Ընկերն առաջինը
Թողեց թամբն իրա:
Տեսա ես՝ լուսինը
Թեքվել էր դեպ նա,
Եվ մեռած շուրթերը
Հծծեցին- Գրենա...
Դնաց իմ ընկերը
Հեռու մի երկիր,
Մթին մի ճամբար, ուր
Տարավ երգը իր.
Ձիմացանք այդ օրից
Երկիրն մտերիմ.
— Գրենադա, Գրենադա,
Գրենադա դու իմ:

Ձիմացավ ջոկատը
Կորուստն զինվորի,
Ու երգեց մինչև վերջ
Երգը «Խնձորի»:
Ընկան միայն կամաց
Վերջալույսի թավշին
Անձրևի արցունքի
Շիթերն առաջին:
Եվ հորինեց կյանքը
Նոր երգերը իրա,

Հարկավոր չէ, տղերք,
Թախծել երգի վրա:
Թողեք դա, թողեք դա,
Տղերք մտերիմ,
Գրենադա, Գրենադա,
Գրենադա դու իմ:

ՄԵԿՆՈՒՄ Է ԱՂՁԻԿԸ

(Մ. Իսսկովսկի)

Շուտով կայարանում
Սուրճի զիւ երգ,—
Մեկնում է աղջիկը
Հեռու Արեւելք:
Լավիկն է աղջիկը—
Լավը չես դռնի.
Սիրած այն աղջիկը
Ափսոս է մեկնի:

Ուրախ կայարանում
Արեն է հալվել,
Բարի երթ է մաղթում
Տղա մի ջահել:
Չըզիտե տղան այն,
Ի՞նչ ասի նրան,
Չըզիտե տղան այն,
Ի՞նչ տա աղջրկան:

Կըտար նա իր սիրտը,—
Սիրտը չի առնի,
Միայն նա ժպտում է,
Նայում է դադունի:
Կըտար նա արևը,—
Ինչպե՞ս ձեռք բերել:

Տղան որոշում է.—

— Թուչեւ սովորել:

Արեւելք՝ Թուրքի մեջ
Ճամբա կը դցեմ,
Ամենն՝ ինչ չեմ ասել,
Հետո ես կասեմ:
Կը թուչեմ թուչուն ոնց,
Դեպ արեւն այնպես,
Եվ ինչ որ չեմ տըվել,
Հետո կըտամ քեզ:

Գընացքը չարժւում է,
Աղջիկ, բարի երթ,—
Շուտով օղաչուն քաջ
Կըլինի քեզ հետ...
Քամու դեմ չարժում է
Թաշկինակ մի ձեռք,—
Մեկնում է աղջիկը
Հեռու Արեւելք:

(Վերա Ինքեր)

Համբուրի դե վերջին անգամ
Ձեռներ ու շուրթեր՝
Մեկնում ես դու, մեկնում եմ ես
Տարբեր երկրներ:

Եվ մեր միջև,—այնքան կապույտ,
Հեռու ես որքան,—
Կըտարածվի օձանման
Լեռների շղթան:

Եվ ռուսական սահմանից դեն՝
Հոսելով արագ,
Իրենց վարսերը կը հըրեն
Գետերը ճերմակ:

Եվ հյուսիսի կյանքից այնպես
Ձգտելով դու վար,
Չըպիտի էլ մեր հացն ուտես,
Այլ լաղութն օտար:

Եվ երբ թեթև մի-քուն կիջնի,
Կըքնես մութով,
Ժամացույցս տարբեր կլինի՝
Տասներկու ժամով:

Միգուկները կերդեն այնտեղ,
Ամպրոպ կըպայթի,
Կըհամբուրես դու այնտեղ չեղ,
Աչքերը սև սաթի:

Բայց թեկուզ դու սիրով գրկես
Աղջիկներ հաղար,—
Դու չես գտնի երկրորդ այսպես
Ընկեր քեզ համար:

Եվ նավելով այլ երկրներ
Ծովերում ահեղ,
Դու չես գտնի երկրորդ այսպես
Ռուսիա ոչ մի տեղ:



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գրեւ	5
2. Քարերիւ երդը երդեմ...	9
3. Ժամացույցը	11
4. Երկաթալարի երդը	13
5. Պատմութիւն՝ դրված ժայռի վրա	16
6. Աճում	19
7. Կակաչը...	21
8. Հացի երդը	23
9. Լուսերը	26
10. Ամեն անգամ մթնում է երբ...	27
11. Բալադ խորհրդային Հայաստանի մասին	29
12. Տարեդարձի երդ	33
13. Անախարտ պատմութիւն	36
14. Քարտաշները	41
15. Երդը վրաստանից	42
16. Եղբայրութեան բաժակներ	44
17. Գալիս են օրերը նոր	45
18. Նորակառուցը	46
19. Խնդութիւն	48
20. Առավոտ	50
21. Դաշնակահար երեխա...	51
22. Քաղաքը	52
23. Ժամապահը	55
24. Շքանչան	57
25. Կրդա նա	58
26. Լենինի նկարի տուաջ	59
27. Լեռներով	60
28. Ին տարի	62
29. Կոմսոմոլ կն տղեն	65

30. Քանակից ընկերներ...	66
31. Կոմունարները	69
32. Պատգամավորը	72
33. Պոետը	73
34. Խոսք՝ ընկեր Ստալինի վաթսուհամյակի առթիւ	75
35. Մրրկահավը	76
36. Պսակ Շահումյանին	78
37. Տարաս Շելչենկոյին (սպետի հետ)	79
38. Այց դամբարանին	81
39. Հենակները...	82
40. Վերջալույսը...	84
41. Ձկնորսը...	86
42. Կտակ	88
43. Երգիս հետ...	90
44. Այս ճերմակ թղթի վրա...	92
45. Խորհուրդ...	93
46. Լուցիկ...	94
47. Ոչ վշտացիր, ոչ թախծիր դու...	95
48. Ի՞նչ ջահել է Ֆիդուսին	96
49. Դամբարանական...	97
50. Սեր...	98
51. Հայիկ...	99
52. Բաժակը...	100
53. Խոսք վարպետին	101
54. Խոսք՝ Հ. Արեւյանի հիշատակին	102
55. Խոսք՝ Վ. Պ. Չկալովի հիշատակին	103
56. Խաղալիքը...	104
57. Մանկան	105
58. Ես իջնում եմ ձորը	106
59. Հանդիպում	107
60. Արթնացավ իմ մեջ պայծառ մի երազ	108
61. Դու որո՞մի նման չար	109
62. Օ՛, Լո դեռ մանկուց	110
63. Ծաղիկները քուն կըմտնեն	111
64. Երբ չեմ լինի Լո	112
65. Ծխախոտ	113
66. Վայրկյանը	114
67. Օրացույցը	115
68. Վերադարձ	117
69. Ձյունը	118
70. Գիշերամուտ	119
71. Աշնանային	120

72. Զմուռն դիշեր	122
73. Պեղում	123
74. Աղջկա երգը	124
75. Մանուշակը	125
76. Հորոտ-Մորոտ	127
77. Կը մահանաս մի օր դու	129
78. Ծիծեռնակները	130
79. Ոսկին	131
80. Մանուկները	132
81. Անցորդները	134
82. Մայրիկիս	135
83. Մայրիկիս	137
84. Երեք երգ Նազիկին	139
85. Ջան տղա	143
86. Իմ երգը քեզ	144
87. Լենինի հիշատակին	146
88. Վերջերգ	147

Պ Ո Ե Մ Ն Ե Ր

89. Հեքյաթ Շիրակի մասին	151
90. Լավ օրերի համար	159
91. Նախափնքը	165
92. Պահակը	171
93. Գեղջիկուհու երազը	179
94. Բաղդեկը	185
95. Պրոխոր Իվանով	192
96. Խուան Թոքնադ	202
97. Ալյարո	212
98. Ֆրանսիսկա Սուլան	213
99. Գյուլիսանդա	225
100. Գյուլնարա	228
101. Կրկ կալասի	233
102. Թառչանի մորմուքը	238
103. Իրանի	240
104. Շահն ու Մեջնունը	262

ՔԱԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

105. Գաա... (Գյոթե)	271
106. Կյանքի կանոնը (Գյոթե)	272
107. Կանգնած է մենակ մի եղևնի... (Հայնե)	273
108. Ինչ է ուղում չիքն արցունքի (Հայնե)	274
109. Ձեռքդ դիր սրտիս (Հայնե)	275

110. Վարդը վառ, շուշանը (Հայնե)	276
111. Կալանավորը (Պուշկին)	277
112. Թալիսման (Պուշկին)	278
113. Կտակ (Շեվչենկո)	280
114. Օրոր (Շեվչենկո)	281
115. Հարուստ է իմ մայրը (Շեվչենկո)	282
116. Տրորեցի կածա՞նը էս (Շեվչենկո)	283
117. Օրոր... (Ի. Ճավճավաճե)	284
118. Հայնեի լեղենդան (Ի. Գրիշաշվիլի)	287
119. Որբերի մայրը (Կ. Խետադուրով)	288
120. Գրենադա (Մ. Սվետլով)	292
121. Մեկնում է աղջիկը (Մ. Իսահովսկի)	296
122. Համբուրգի դե վերջին անգամ (Վ. Ինբեր)	298



Կազմը, շիտույթ և շիտույթները
ԱՆ. Գասպարյանի

Պատ. խմբագիր՝
Գ. Կ ու լ ո ղ լ յ ա ն
Տեխ. խմբագիր
Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս.
Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս.
Ս. Ս. Ս. Ս. Ս. Ս.

ՎՖ 3292 Հրատ. 5353. Պատվեր 695 Տիրաժ 3500.
Տպագրական 19 մամուլ. Հանձնված է արտադրու-
թյան 10/X—1910 թ. Ստորագրված է տպագրու-
թյան համար 24/I—1911 թ.

Հայկական տպարան, Երևան, Լենինի 65.

7

2

ՀՀ Ազգային գրադարան



NL0363125

53849